ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՎ՝

BMF
FEDERAL MINISTRY OF FINANCE

exim
EXPORT · BANK · INSURANCE

WORLD BANK GROUP

IFC International Finance Corporation

Սույն նյութը պատրաստվել է
Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարության և Հայաստանի
զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զարգացման
հիմնադրամ

© 2017 International Finance Corporation 2017. All rights reserved.
2121 Pennsylvania Avenue, N.W. Washington, D.C. 20433
Internet: www.ifc.org

Սույն աշխատության հեղինակային իրավունքները պաշտպանված են: Սույն աշխատությունը կամ դրա առանձին մասերը պատճենելը և (կամ) տարածելն առանց թույլտվության՝ կհամարվի օրինախախտում:

Միջազգային ֆինանսական կորպորացիան չի երաշխավորում սույն աշխատության մեջ ընդգրկված տեղեկությունների, եզրակացությունների կամ դատողությունների ամբողջականությունն ու ճշգրտությունը և պատասխանատվություն չի կրում աշխատության մեջ տեղ գտած բացթողումների կամ սխալների համար (ներառյալ տպագրական և տեխնիկական սխալները) կամ աշխատության վրա հիմնվելու հետևանքների համար:

WORLD BANK GROUP
IFC | International Finance Corporation

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Պանրի արտադրության և արտահանման շղթայի ուսումնասիրությունը պատրաստվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՀՀ զարգացման հիմնադրամի դիմումի հիման վրա՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի՝ Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման ծրագրի (Ծրագիր) շրջանակում, որն իրականացնում է Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) Առևտուր և մրցունակություն գլոբալ պրակտիկան:

Ուսումնասիրության աշխատանքները համակարգել է ՀԲԽ խորհրդատու Գագիկ Գաբրիելյանը: Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում Համաշխարհային բանկի խմբի գործընկերներին՝ արժեքավոր դիտողությունների և առաջարկությունների համար: Ուսումնասիրության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ են ներկայացրել, մասնավորապես՝ Հայնց Վիլհելմ Ստրուբենհոֆը (ՀԲԽ, մասնավոր հատվածի ավագ մասնագետ), Արուսյակ Ալավերդյանը (ՀԲԽ, գյուղատնտեսության ավագ մասնագետ), Լորեյն Ռոնչին (ՀԲԽ, ավագ տնտեսագետ), Սելմա Ռասավաց Ավդագիչը (ՀԲԽ, ավագ աշխատակից), Հանս Շրադերը (ՀԲԽ, մասնավոր հատվածի ավագ մասնագետ), Բեկզոդ Շամսիեվը (ՀԲԽ, գյուղատնտեսության ավագ տնտեսագետ), Կետերինա Օնուլը (ՀԲԽ, մասնավոր հատվածի մասնագետ):

Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում նաև այն բոլոր կազմակերպություններին ու անհատներին, ովքեր պատրաստակամորեն տրամադրել են իրենց ժամանակն ու գիտելիքները, աջակցել են ծրագրի իրականացմանը. մասնավորապես, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, Հայաստանի զարգացման հիմնադրամին, ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը, Հայաստանի պանիր արտադրողների միությանը, Հայաստանի կաթնամթերք արտադրողների միությանը, ինչպես նաև մեծ թվով տնտեսվարողների (կաթ արտադրողներ, պանիր արտադրողներ, հումք ներմուծողներ և արտահանողներ, մաքսային միջնորդներ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 1
Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ 2
Բ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13
ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ 25
1. ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԿԻՐՃ ՏՎՅԱԼՆԵՐ 25
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 28
2. ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 29
2.1. ԱՐՈՏՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 31
2.2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ 36
2.3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 37
2.4. ԿԹԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ (ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ) ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ 39
2.5. ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 40
2.6. ԿԱԹԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ 40
2.7. ԿԱԹԻ ՇՈՒԿԱ 43
2.8. ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 47
2.9. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 48
3. ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 50
3.1. ԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՆՐԱՏԵՍԱԿՆԵՐ 50
3.2. ՊԱՆԻՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ 51
3.3. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 53
3.4. ՀԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐ 55
3.5. ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ 55
3.6. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 55
3.7. ՊԱՆՐԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ(ՆԵՐ) 56
3.8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 57

4. ՀԵՏԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՒԼ 58
4.1. ՏԵՂԱԿԱՆ ՇՈՒԿԱ 58
4.2. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ 60
4.3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 67

5. ՕԺԱՆԴԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐ 68
5.1. ՊԱՀԵՍՏՆԵՐ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ 68
5.2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 68
5.3. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 68
5.4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 69

6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵԱՏՄ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ 77

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պանրի արտադրության և արտահանման շղթայի քարտեզագրումն իրականացվել է Համաշխարհային բանկի խմբի՝ Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման ծրագրի (Ծրագիր) շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել ներդրումային միջավայրի բարելավմանը և տնտեսության ճյուղերում ներդրումների ներգրավմանը: Ծրագրի բաղադրիչներից մեկով նախատեսվում է բարձրացնել ագրոբիզնեսի ներդրումային գրավչությունը, խթանել ընտրված գյուղարտադրանքի արտահանումն ու մրցունակությունը՝ արտահանման շղթաներում խնդիրների բացահայտման և դրանց լուծմանն ուղղված նպատակային միջոցառումների միջոցով: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը պանրարտադրության ճյուղը հատկորոշել է որպես արտահանման համար մեծ ներուժ ունեցող ճյուղ:

Պանրի արտադրության (արտահանման) շղթայի քարտեզագրման նպատակն է.

- հատկորոշել պանրի արտադրության (արտահանման) շղթայում առկա խնդիրները, ներառյալ՝ շուկայի անկատարությունները, ինչպես նաև պետական կարգավորումների և քաղաքականության հետ կապված խնդիրները,
- մշակել այդ խնդիրների լուծման առաջարկություններ, որոնց շնորհիվ կարելի է բարելավել գործարար և ներդրումային միջավայրը, բարձրացնել արտադրողականությունն ու արտադրանքի մրցունակությունը,
- նպաստել պանրարտադրության ճյուղի ներդրումային գրավչության բարձրացմանը:

Քարտեզագրման համար շղթան ու դրա արդյունավետությունը դիտարկվում են գործարարության տեսանկյունից, մասնավորապես, առաջնային արտադրողների, արտահանողների, մանրածախ ու մեծածախ վաճառքի կետերի, վերամշակողների, փոխադրողների: Տեղեկություններ հավաքագրելու համար հանդիպումներ ու քննարկումներ են կազմակերպվել շղթայի մասնակիցների հետ, ներառյալ՝ պետական և մասնավոր հատվածները: Հանդիպումներ են տեղի ունեցել նաև ագրոբիզնեսի ոլորտում ներգրավված միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ լսելու նրանց արժեքավոր փորձն ու կարծիքը:[1] Տեղեկությունների համար օգտագործվել են նաև տեղական և միջազգային աղբյուրներ՝ պաշտոնական տվյալներ, ագրոբիզնեսի վերաբերյալ արդեն կատարված ուսումնասիրություններ և այլ վերլուծական նյութեր:[2]

Սույն ամփոփագիրը, որը կարող է նաև ծառայել որպես ինքնուրույն մաս, ի մի է բերում վերլուծության հիմնական ասելիքը, ինչպես նաև առաջարկություններ է ներկայացնում խնդիրների լուծման վերաբերյալ: Այնուհետև «Պանրարտադրության և արտահանման շղթայի վերլուծություն» բաժնում

1 Հանդիպումները տեղի են ունեցել 2017 թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում:

2 Օգտագործված նյութերի և աղբյուրների ցանկը ներկայացված է 3-րդ հավելվածում:

և հավելվածներում ներկայացված են մանրամասներ պանրարտադրության(արտահանման) շղթայի վերաբերյալ:

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ

Պանրարտադրությունը Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերից մեկն է: Հայաստանյան լեռնային մարգագետինները բարձր հատկանիշներով կաթ և կաթնամթերք ստանալու հնարավորություն են տալիս: Պանրարտադրության ճյուղն արտահանման աճի բավական մեծ ներուժ ունի և հետաքրքիր է ներդրումների համար: Հայաստանում արտադրվում են կովի, այծի և ոչխարի երկու տասնյակից ավելի տեսակի պանիրներ և շատ փոքր քանակությամբ գոմեշի պանիր, սակայն արտադրվող պանրի 95 տոկոսը կովի կաթից պանիրն է: Ավանդական են Լոռի, Չանախ, Բրբնզա, Չեչիլ տեսակները: Արտադրվում են նաև այնպիսի պանրատեսակներ, ինչպիսիք են Գաուդան, Էմենտալը, Մազդամը, Սուլուգունին, Մոցարելան և այլն: Աշխարհագրական նշումով կամ ծագման տեղանվանմամբ պանրատեսակներ Հայաստանում դեռևս գրանցված չեն:

Հայաստանում կաթի և պանրի արտադրության, ինչպես նաև դրանց շուկաների վիճակը և աշխատանքը մեծապես պայմանավորված են խորհրդային անասնապահական համակարգի փլուզումից հետո առաջ եկած մեծ թվով փոքր և դեռևս ոչ մասնագետ (ոչ պրոֆեսիոնալ) անասնապահների գերակայությամբ և միմյանց միջև և միմյանց ու պանրարտադրողների միջև թույլ համագործակցությամբ: Փոքր տնտեսվարողների գերակշիռ մեծամասնությունը չի տիրապետում կամ բավարար չափով չի տիրապետում կենդանիների խնամքի ու կառավարման, ինչպես նաև կթելու և կաթի հետ վարվելու հիգիենայի և անվտանգության կանոններին:

Վերջին տասնամյակի ընթացքում կաթնամթերքի արտադրության ճյուղում իրականացված մի շարք նախաձեռնություններ և փոփոխություններ ճյուղի զարգացման նոր մակարդակի անցման սկիզբ են դրել, մասնավորապես՝

- Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ նախաձեռնված մի շարք ծրագրեր՝ ուղղված կաթի հավաքման կետերի կամ կենտրոնների և կաթի շուկայահանման կոոպերատիվների հիմնադրմանը, զգալիորեն նպաստել են կաթի մատակարարման բարելավմանը ինչպես քանակի, այնպես էլ որակի առումով:
- Վերջին հինգ տարիներին՝ 2011-2016 թվականներին, Համաշխարհային բանկի՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն ծրագրի (CARMAC) շրջանակում կատարվել են արոտավայրերի բարեկարգման ու դրանց կառավարման բարելավման մեծ աշխատանքներ:
- Գյուղատնտեսական սպասարկման և խորհրդատվության բարելավման նպատակով CARMAC, ինչպես նաև միջազգային դոնոր

կազմակերպությունների այլ ծրագրերի շրջանակում Հայաստանի տարբեր մարզերում հիմնվել են Գյուղատնտեսական սպասարկման կենտրոններ (ԳՍԿ):

- Կառավարության և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ Հայաստան են ներկրվել գենային բարձր հատկանիշներով հազարավոր կենդանիներ:



Պատկեր 1. Արտահանման ընդլայնման ուղի

Ըստ տնտեսվարողների՝ վերջին հինգ տարիներին պանրարտադրության ճյուղի հզորություններն աճել են մոտ երկուսուկես անգամ: Հիմնվել և (կամ) ընդլայնվել են տասնյակից ավելի միջին ու խոշոր չափի կաթնամթերք (նաև պանիր) արտադրող գործարաններ: Միաժամանակ արագորեն բարձրանում է պանրի գործարանների տեխնոլոգիական հագեցվածությունը: Նոր կառուցված և կառուցվող *միջին ու մեծ գործարանների* զգալի մասը հագեցած է և աշխատում է ժամանակակից բարձրակարգ տեխնոլոգիաներով:

Հայաստանից պանիր արտահանվում է մի շարք երկրներ, ընդ որում՝ արտահանման հիմնական շուկաներ են ԵԱՏՄ-ի և ԱՊՀ-ի երկրների (հատկապես Ռուսաստանի) և ԱՄՆ-ի շուկաները: 2015 թվականին կտրուկ աճել է պանրի արտահանման ծավալը՝ 1500 տոննայից հասնելով 9000 տոննայի, այնուհետև 2016 թվականին արտահանումը նվազել է, սակայն մնացել է բարձր՝ 5500 տոննա:[3] Ըստ էության՝ ԵԱՏՄ-ի շուկան արտահանման անսահմանափակ հնարավորություն է ընձեռում հայաստանյան պանրարտադրողների և արտահանողների համար: Ներկայում, հայաստանյան կաթ և պանիր արտադրողները ծախսային առավելություն ունեն ռուսաստանյան (ուկրաինական և բելառուսական) արտադրողների նկատմամբ:

3 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, http://www.armstat.am/file/article/f._t-2015-10-nish-1.pdf

Գյուղատնտեսական արտադրության և արտահանման խթանումը ՀՀ կառավարության օրակարգի կարևոր ուղղություններից է, ինչպես արտացոլված է կառավարության մի շարք ռազմավարական փաստաթղթերում և ծրագրերում: Ներդրումների խթանման նպատակով կառավարությունն արտադրական համալիրների և արտադրության մեջ օգտագործվող մի շարք ռեսուրսների ներմուծումն ազատել է ԱԱՀ-ից:

Պանրի արտահանման ընդլայնման հնարավորությունից արդյունավետորեն օգտվելու համար անհրաժեշտ է նախ՝ ընդլայնել արտադրության ծավալը, այնուհետև ապահովել գնային և որակական բարձր մրցունակություն և արդյունավետորեն կազմակերպել արտահանման գործընթացը (1-ին պատկեր): Դրան հասնելու համար, ինչպես կառավարության, այնպես էլ մասնավոր տնտեսվարողների առջև ճյուղի հետագա զարգացման ճանապարհին դեռևս ծառացած են որոշ խնդիրներ, որոնք հակիրճ ներկայացված են ստորև: Կարևոր է հաշվի առնել, որ *փոքր ու միջին արտադրողների և խոշոր արտադրողների* խնդիրներն ու հնարավորությունները երբեմն իրարից տարբեր են: Աշխատությունը չծանրաբեռնելու համար, չափերից կախված տարբերություններն առանձին բաժիններում ներկայացնելու փոխարեն, եթե այդպիսիք կան, մատնանշվում են յուրաքանչյուր խնդրի քննարկման ներքո: Հաշվի առնելով նաև այն, որ Հայաստանում արտադրվող պանրի 95 տոկոսից ավելին կովի կաթից պատրաստվածն է՝ սույն աշխատությունը կենտրոնանում է կովի կաթից պատրաստած պանրի վրա:

1. ԿԱԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՔԱՆԱԿ, ՈՐԱԿ ՈՒ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՄԵԾ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

Կաթի մատակարարման անբավարար քանակն ու որակը, ինչպես նաև սեզոնային մեծ տատանումները պանրարտադրության և արտահանման հետագա ընդլայնումն ու զարգացումը զսպող գլխավոր խոչընդոտներից են: Վերամշակման համար մատակարարվող կաթի տարեկան ծավալը 490.000 տոննա է: Կաթի առավելագույն քանակ արտադրվում է հունիս-հուլիս ամիսներին, երբ կենդանիներին տեղափոխում են հեռագնա արոտավայրեր: Կաթի արտադրության ամենացածր ու ամենաբարձր ամիսներին արտադրության ծավալները կարող են տարբերվել մինչև 10 անգամ: Կաթի մատակարարման նման վիճակը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- **Կերի անբավարար մատակարարում՝**
  - *Կերի և կերային մշակաբույսերի ցածր արտադրություն.* Կենդանիների արոտային պահվածքի կարճ ժամանակաշրջանից հետո կերակրման ռեժիմը կտրուկ փոխվում է: Կերի ցածր սննդային արժեքը նվազեցնում է կենդանիների կաթնատվությունը: Հայաստանում կերի և կերային մշակաբույսերի արտադրությունը զարգացած չէ: Տարեկան

արտադրվում է ընդամենը 20,000-30,000 տոննա համակցված կեր, որն օգտագործվում է ոչ միայն խոշոր եղջերավոր կենդանիների, այլ նաև թռչնաբուծության և այլ կենդանիների կերակրման համար:[4]

- *Արոտների անարդյունավետ օգտագործում և անարդյունավետ արոտային պահվածք.* Հայաստանը հարուստ է բարձր լեռնային ալպիական մարգագետիններով, ինչը նպաստավոր է որակյալ պանրի արտադրության համար: Սակայն արոտավայրերի անարդյունավետ կառավարումը համայնքների կողմից, ինչպես նաև դրանցում ներդրումների բացակայությունը կամ սակավությունը էականորեն նվազեցնում են անասնապահության մրցունակությունը:

- **Ցածր կաթնատվություն**
  - Հայաստանում մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը (ըստ պաշտոնական վիճակագրության) մոտ 2100 լիտր է:[5] Ըստ տնտեսվարողների՝ իրականում կաթնատվությունն ավելի ցածր է (շուրջ 1500 լիտր): Միջազգային համեմատության մեջ կաթնատվության նման մակարդակը ցածր է: Այս վիճակի պատճառներ են մասնավորապես՝
  - *Կովերի ցածր գենային հատկանիշները.* Առկա է մաքրացեղ (բարձր տվյալներով) կենդանիների խիստ պակաս: Կառավարության ու միջազգային դոնոր համայնքների ջանքերով երկրում մեծացել է բարձրակարգ կենդանիների թիվը և խթանվել արհեստական սերմնավորման կիրառությունը: Սակայն դա շատ հեռու է բավարար լինելուց: Բացի այդ, բարձրակարգ կենդանիների ոչ պատշաճ պահվածքի և կերակրման պատճառով այդ կենդանիները չեն կարողանում բարձր կաթնատվություն ապահովել:
  - *Անասնապահության անարդյունավետ գործելակերպերը*, որ հետևանք են անասնապահների գերակշիռ մեծամասնության գիտելիքների և հմտությունների անբավարարության, մասնավորապես՝ կենդանիների պահվածքի, դրանց խնամքի և վերարտադրության, կերակրման, տնտեսության կառավարման, կթի տեխնիկայի և հիգիենայի վերաբերյալ: Ոչ պատշաճ գործելակերպերն ազդում են կաթնատվության, ինչպես նաև կաթի որակի ու գնի վրա:
  - *Անասնաբուժական ծառայության ցածր մակարդակը.* Խորհրդային անասնապահական և անասնաբուժական համակարգի փլուզումից հետո դեռևս չի ձևավորվել ու բյուրեղացել հայաստանյան նոր իրողություններին համապատասխան համակարգ: Պետության դերը սահմանափակվում է հիմնականում հակահամաճարակային միջոցառումներով: Անասնաբուժական ծառայությունները, որոնք ընդհանուր առմամբ ցածրորակ են, ներկայում տրամադրվում են մասնավոր

4 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ», 2016՝ http://www.armstat.am/am/?nid=82&id=1740

5 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ:

տնտեսվարողների կողմից: Վերջին տարիներին մարզերում ԳՄԿ-ների հիմնադրումը դրական քայլ է, սակայն դեռ ոչ բավարար՝ խնդրի լուծման համար:

- *Ներմուծման և արտահանման ընթացակարգը.* Ներկայում գործող ներմուծման և արտահանման որոշ կանոնակարգեր խոչընդոտ են հանդիսանում անասնապահության և կաթի արտադրության մրցունակության բարձրացմանը: Դա վերաբերում է մասնավորապես անասնապահական և կաթի արտադրության սարքավորումներ (ապրանքների դասակարգման խնդիրներ), ինչպես նաև գենետիկ նյութ և կենդանիներ ներմուծելու ընթացակարգերին: Կառավարության ուղղակի միջամտությունը տոհմային կենդանիներ ներմուծմանն ու հատկացմանը, ըստ որոշ տնտեսվարողների, ինքնին դրական լինելով՝ խաթարում է շուկայի աշխատանքը:

- **Շուկայի անկատարություններ**
  - Փոքր տնտեսվարողների գերակշռությունը, ինչպես նաև կաթի և պանրի շուկայի և դրա աշխատանքի մի շարք այլ առանձնահատկություններ դժվարություններ են առաջացնում տնտեսվարողների համար և հաճախ խաթարում են կաթ արտադրողների և վերամշակողների՝ ներդրում կատարելու և արտադրության տեխնոլոգիաները բարելավելու շահագրգռությունը: Դա սահմանափակում է ոլորտի կայուն զարգացման հնարավորությունը: Այս ասպարեզում առկա խնդիրները ներառում են՝
  - *Կաթի հավաքման և մատակարարման ենթակառուցվածք և լոգիստիկ խնդիրներ.* Կաթի մթերումը երկրի տարբեր կետերում տեղակայված՝ կաթի հավաքման փոքր կենտրոններից պատճառում է լրացուցիչ լոգիստիկ դժվարություններ և ծախսեր: Կաթի հավաքման կետերի ու կաթի շուկայահանման կոոպերատիվների հիմնադրումը ճիշտ, սակայն դեռ ոչ բավարար քայլ էր կաթի (կաթնամթերքի) ոլորտի խնդիրների լուծման ուղղությամբ:
  - *Կաթի գնագոյացման հետ կապված խնդիր.* Փոքր կաթարտադրողների բանակցային դիրքը շուկայում թույլ է, և նրանք խիստ կախված լինելով միջին ու խոշոր վերամշակողներից՝ չեն կարողանում բանակցել իրենց համար շահավետ գնի շուրջ: Ավելին, վերամշակողները հաճախ ժամանակին չեն կատարում մթերած կաթի դիմաց վճարումները՝ դրամական դժվարություններ պատճառելով կաթ արտադրողներին: Դրա հետևանքով կաթ արտադրողների մոտ նվազում է ներդրում կատարելու և արտադրությունը ընդլայնելու կամ բարելավելու շահագրգռությունը:
  - *Անարդյունավետ գին-որակ կապ.* Ներկա գործելակերպը, որով կաթի արժեքը որոշվում է գլխավորապես յուղայնության հիման վրա՝ անտեսելով սպիտակուցի պարունակությունը, մանրէաբանական աղտոտվածությունը, սոմատիկ բջիջների պարունակությունը, հակաբիոտիկների

առկայությունը և որակական այլ ցուցանիշներ, նշանակալիորեն նվազեցնում է կաթի և կաթնամթերքի որակը: Կաթ արտադրողն, այդպիսով, շահագրգռված չէ որակյալ արտադրանք տալու կամ ներդրում կատարելու որակի բարելավման տեխնոլոգիաների, բարձրարժեք կենդանիների, կամ կերի ուղղությամբ:

- *Տնայնագործ պանրի և այլ կաթնամթերքի (ոչ ֆորմալ) արտադրություն և իրացում*, որը համարվում է կաթի և պանրի շուկայի աշխատանքը խաթարող կարևոր գործոն: Ցածրորակ և էժան կաթով ցածրորակ և էժան պանրի արտադրությամբ և վաճառքով զբաղվում են բազմաթիվ մանր տնտեսվարողներ, որոնք նաև դուրս են հարկման դաշտից: Պանրի ընդհանուր արտադրության 72 տոկոսը բաժին է ընկնում ոչ ֆորմալ մանր ու փոքր արտադրողներին: Այդ գործելակերպը, ըստ ճյուղում գործող տնտեսվարողների, վատ է անդրադառնում կաթի ու պանրի գնագոյացմանը:
- *Կաթի փոշու ներմուծում.* Տնտեսվարողների շրջանում լայնորեն տարածված է այն կարծիքը, որ կաթի փոշու (հատկապես ցածր որակի) ներմուծումը բացասաբար է ազդում տեղական շուկայի աշխատանքի վրա և վնասում է կաթի արտադրությանը: Սակայն հաշվի առնելով ներկայում Հայաստանում կաթի անկանոն մատակարարումը ՝ առանց կաթի փոշու օգտագործման հնարավոր չի լինի ապահովել կաթնամթերքի կանոնավոր արտադրություն: Առանցքային հարցն այստեղ ավելի շուտ կաթի փոշու բարձր որակի, ինչպես նաև կաթնամթերքի պատշաճ պիտակավորման գործելակերպի ապահովումն է:

2. ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Պանրարտադրության ճյուղի հետագա ընդլայնման և զարգացման ճանապարհին ծառացած մյուս մարտահրավերը արտահանման համար արտադրվող պանրի բավարար ծավալների ապահովումը և արտադրության միջազգային մրցունակության բարձրացումն է: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ կաթի վերամշակման ներկա հզորությունները (առանց տնայնագործ արտադրության) հնարավորություն են տալիս վերամշակելու տարեկան շուրջ 490.000 տոննա կաթ, այսինքն՝ թարմ կաթի մատակարարման և վերամշակման կարողություններն այսօր իրար հավասար են: Որպեսզի այս պարագայում արտահանման հետագա ընդլայնումը չդժվարանա և մինչևիսկ ձախողվի, պանրի արտադրական հզորությունների ընդլայնումը պետք է տեղի ունենա կաթի արտադրության ընդլայնման հետ համաժամանակորեն (սինխրոն): Զարգացման ճանապարհին ծառացած խնդիրներից են մասնավորապես՝

- **Արտադրական հզորությունների ընդլայնման խնդիրներ՝**
  - Պանրարտադրության ճյուղը ներառում է 50 հաշվառված արտադրողներ և մեծ թվով չհաշվառված մանր ու փոքր տնտեսություններ (ոչ ֆորմալ հատված), ընդ որում՝ պանրի ընդհանուր արտադրության ավելի քան 70 տոկոսը բաժին է ընկնում ոչ ֆորմալ հատվածին: Ֆորմալ հատվածում 10 ամենամեծ արտադրողներին բաժին է ընկնում ֆորմալ արտադրության 90 տոկոսը: Ըստ էության՝ ֆորմալ և ոչ ֆորմալ հատվածները մրցում են կաթի համար:
  - *Պանրարտադրության սեզոնայնություն.* Ի տարբերություն մյուս կաթնամթերքների, պանրարտադրության ճյուղում կաթի մատակարարման սեզոնայնության խնդիրը չի կարելի մեղմացնել կաթի փոշի օգտագործելով: Պանրարտադրության մեջ կաթի փոշի սովորաբար չեն օգտագործում: Սեզոնայնությունը հանգեցնում է գործարար կառավարման մի շարք բարդությունների, ինչպիսիք են ֆինանսների կառավարումը, մատակարարման պլանավորումը (որը խիստ կարևոր է արտահանման վստահելի գործընկեր լինելու համար), լոգիստիկայի կազմակերպումը:
  - *Արտադրական համալիրների և սարքավորումների ներմուծման խնդիրներ.* Ըստ տնտեսվարողների՝ Հայաստանում գործող ներմուծման որոշ կանոնակարգեր խանգարում են պանրարտադրության ճյուղում ներդրումներ կատարելուն և ճյուղի մրցունակության բարձրացմանը: Համալիրների և սարքերի ներմուծման մաքսային ձևակերպման ժամանակ հաճախ մաքսային մարմինը պահանջում է դրանք դասակարգել և ձևակերպել ոչ թե որպես ամբողջություն, այլ մաս-մաս: Արդյունքում փոխվում են ապրանքի նկատմամբ կիրառվող մաքսային և հարկային ռեժիմները՝ զգալիորեն բարձրացնելով վճարվելիք տուրքերն ու հարկերը: Միաժամանակ, ներդրումային միջոցների ներմուծման նկատմամբ գործող ԱԱՀ-ի արտոնությունը չի տարածվում կաթի և պանրի ճյուղում օգտագործվող որոշ սարքերի վրա:
  - *Ներդրումներին խանգարող գործոններ.* Ըստ տնտեսվարողների՝ ներդրումներին խանգարող գործոններ են ենթակառուցվածքների անցկացման վարչարարական բարդությունները: Խոսքը վերաբերում է մասնավորապես հոսանքի, ջրի և գազի գծերի անցկացման վարչարարական դժվարությանը, ժամանակատարությանն ու թանկությանը: Պանրարտադրության ճյուղում այս հարցը հատկապես սուր է, քանի որ փոքր ու միջին պանրարտադրողների համար տնտեսապես կարևոր է արտադրամասը կառուցել կաթի մատակարարման կետի մոտակայքում, մինչդեռ դրանց մերձակա տարածքներում հաճախ գազի, ջրի ու հոսանքի ենթակառուցվածքներ չեն լինում:
- **Պանրի որակի և անվտանգության խնդիրներ**
  - *Մանդի անվտանգության համակարգերի և գործելակերպերի կիրառություն.* Արտադրանքի մրցունակության բարձրացման և նոր շուկաներ

մուտք ունենալու համար (մասնավորապես՝ ԵՄ-ի, ինչպես նաև ԵԱՏՄ-ի շուկաներ) անհրաժեշտ է ապահովել սննդամթերքի անվտանգության բարձր ստանդարտներ: Հայաստանյան արտադրամասերում (*հատկապես, փոքր ու միջին*) դեռևս լայն կիրառություն չունեն արտադրության և հիգիենայի միջազգայնորեն ընդունված ճիշտ գործելակերպերը, ինչպիսիք են՝ HACCP (Hazard Analysis and Critical Control Points), Global GAP (Good Manufacturing Practice), Good Hygiene Practice (GHP), ԵՄ-ի պահանջները, Կոդեքս ալիմենտարիուսի ստանդարտները: *Խոշոր չափի արտադրամասերում* արտադրության պայմաններն ու համակարգերն անհամեմատ ավելի բարձրակարգ են, սակայն դրանցում նույնպես լայն կիրառություն չունեն HACCP/GMP համակարգերը: *Փոքր ու միջին տնտեսություններում* արտադրանքի որակն ու մրցունակությունը տուժում են նաև ցածր տեխնոլոգիական հագեցվածության, պանրատեսակների ոչ արդյունավետ ընտրության և արտադրանքի տեսակավորման և փաթեթավորման ուղղությամբ հարկ եղած ջանքեր չգործադրելու պատճառով:

- *Հավաստագրման հարցեր.* Որպես խանգարող (ժամանակատար և ծախսատար) գործընթաց տնտեսվարողները նշում են այն, որ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար պահանջվում է անցնել անասնաբուժական հավաստագրման կրկնվող ընթացակարգ, ներառյալ՝ լաբորատոր փորձաքննություններ:

- **Գնային մրցունակության խնդիրներ՝**
  - *Ինքնարժեքի նվազեցման և արտադրողականության բարձրացման խնդիր.* Արտաքին շուկաներում գնային մրցունակության բարձրացման համար հրամայական են ինքնարժեքի նվազեցումը և արտադրողականության բարձրացումը: Ներկայում հայաստանյան պանրարտադրողները ծախսային առավելություն ունեն ռուսաստանյան (ուկրաինական և բելառուսական) արտադրողների նկատմամբ: Սակայն ճյուղի ընդլայնման համար անհրաժեշտ տեխնոլոգիական հագեցվածության բարձրացումն ու սննդամթերքի բարձր անվտանգության և որակի կառավարման համակարգերի ներդրումը կարող է ուղեկցվել ինքնարժեքի բարձրացմամբ:
  - *Արտադրողականության բարձրացման համար շուկայավարական և այլ գործարար միջոցների կիրառության խնդիր.* Արտադրողականության տեսակետից շատ կարևոր է նաև արդյունավետ շուկայավարությունը, մատակարարման և բաշխման լոգիստիկայի ճիշտ կազմակերպումը և այլ գործարար միջոցներ: Հայաստանյան արտադրողների ու արտահանողների շրջանում այդպիսի արդյունավետ գործելակերպերի կիրառությունը լայն տարածում չի գտել:
  - *Հարկման հետ կապված խնդիրներ.* Պանրարտադրության ճյուղում առկա խնդիրներից մեկը կապված է ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կիրառման հետ: Կաթի արտադրությունը և իրացումը, որպես

առաջնային գյուղատնտեսական արտադրություն, ազատված է ԱԱՀ-ից, իսկ պանրարտադրությունը՝ ոչ: Արդյունքում կաթի (հումքի) համար վճարված ԱԱՀ-ն մնում է պանրարտադրողների վրա, քանի որ նրանք չեն կարող հաշվանցել այն: Ըստ տնտեսվարողների՝ այս խնդիրը հատկապես սուր է պանրարտադրության ճյուղում, քանի որ պանրի ինքնարժեքի ավելի քան 70 տոկոսը կաթի ծախսն է:

- **Անարդյունավետ գործարար կառավարման գործելակերպեր**
  - Գործարար կառավարման ներկա գիտելիքները և հմտությունները պանիր արտադրող կազմակերպությունների մեծ մասում բավարար չեն բարձր տեխնոլոգիական արտադրության կազմակերպման, ինչպես նաև արդյունավետ շուկայավարության և արտահանման համար: Գործարար կառավարման խնդիրները վերաբերում են մասնավորապես՝ արտադրության պլանավորմանը, ֆինանսական կառավարմանը, ինքնարժեքի կառավարմանը, մատակարարման շղթայի կազմակերպմանը և շուկայավարությանը:

3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐ

Հայաստանում պանրարտադրության և արտահանման խթանման ճանապարհին հաղթահարվելիք մարտահրավեր են նաև արտահանման և շուկայավարության արդյունավետ ռազմավարությունների բացակայությունը և արտահանման ծրագրման և կազմակերպման, այդ թվում և լոգիստիկայի խնդիրները:

- **Արտադրատեսակների ճիշտ ընտրության խնդիր**
  - Ներկայում արտահանվող հիմնական տեսակներն են աղաջրի սպիտակ պանրատեսակները (Լոռի, Չանախ) և քիչ քանակով որոշ դեղին պանրատեսակներ (մասնավորապես Գաուդա): Անհրաժեշտություն կա, միջազգային շուկաների ուսումնասիրության վրա հիմնվելով, ներդնելու ներքին և միջազգային շուկաներում պահանջարկ վայելող և բարձրարժեք արտադրատեսակներ:
- **Շուկաների ընտրության և պահպանման խնդիր**
  - Հայաստանյան պանրի արտահանման հիմնական շուկաներ են Ռուսաստանի և ԱՄՆ-ի շուկաները: Ընդ որում՝ արտաքին շուկայում հայկական պանրի սպառողները հիմնականում սփյուռքահայերն են: Ռուսաստանյան շուկայում արտահանողները կարող են լայնորեն օգտվել ԵԱՏՄ-ի ընձեռած արտոնություններից, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ շուկայում մրցակցությունն ուժգին է: Հայաստանյան արտահանողները պետք է պատրաստ լինեն մրցակցելու բելառուսական և (քաղաքական հակամարտության լուծումից հետո) ուկրաինական, ինչպես նաև տարբեր ճանապարհներով Ռուսաստան մտնող եվրոպա-

կան պանրի հետ: Նկատենք նաև, որ մեկ, թեկուզ շատ մեծ շուկայից կախվածությունն իր մեջ վտանգներ է պարունակում: Հայաստանյան գործարարներն այդ վտանգին ենթարկվել են բոլորովին վերջերս՝ 2014-2015 թվականներին, Ռուսաստանում տնտեսական անկման հետևանքով:

- **Շուկաների ընթացակարգեր և լոգիստիկ խնդիրներ**
  - *Արտահանման կազմակերպման (լոգիստիկայի) խնդիրներ.* Լոգիստիկ խնդիրներից մեկը, ինչպես միշտ նշում են հայաստանյան արտահանողները, Վրաստան-Ռուսաստան սահմանի Լարսի անցակետի հատման և մաքսային ձևակերպումների բարդ և անկանխատեսելի ընթացակարգերն են (դրանք ներառում են նաև ոչ պաշտոնական «դյուրինացման վճարներ»):
  - Արտահանման կազմակերպման մեկ այլ կարևոր խնդիր, որ սրվում է նաև կապված պանրարտադրության սեզոնայնության հետ, ռուսաստանյան շուկայում պահեստավորման և բաշխման կարողությունների կամ ցանցի բացակայությունն է, որի հետևանքով շահույթի մեծ մասը մնում է միջնորդ օղակին:
  - *Փոքր ու միջին արտադրողների և արտահանողների համար* լոգիստիկ լուրջ հարց է նաև խմբաքանակի ձևավորումը: Արտահանման փոքր ծավալների պատճառով նրանք հաճախ չեն կարողանում համալրել մեծ բեռնատարները և ստիպված են սպասել մինչև տրանսպորտային ընկերությունը կհամալրի բեռնատարը այլ տնտեսվարողների բեռներով:
  - *ԵԱՏՄ-ին անդամակցության հետ կապված հնարավորություններ և խնդիրներ.* ԵԱՏՄ-ին անդամակցությունը արտահանման հնարավորությունների հետ մեկտեղ բերել է նաև խնդիրներ: Խնդիրները վերաբերում են մասնավորապես, ներմուծվող և արտահանվող յուրաքանչյուր խմբաքանակի համար համապատասխանության հավաստման և անասնաբուժական հավաստագրերի տրամադրման պահանջներին: Մնդամթերքի անվտանգության պահանջների կատարման համար հարկ կլինի արտադրության մեջ ներդնել անվտանգության նոր համակարգեր, որի համար կպահանջվի փող և մարդկանց վերապատրաստում: Տնտեսվարողները նշում են նաև ԵԱՏՄ-ի շուկաներ արտահանված ապրանքների նկատմամբ ԱԱՀ-ի կիրառման խնդրահարույց ընթացակարգեր (օրինակ, ռուսաստանյան ներմուծող գործընկերոջ կողմից ԱԱՀ-ի վճարման թղթեր ներկայացնելու պահանջ):

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԺՎԱՐԱՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Ֆինանսական միջոցների սակավությունը և դժվարամատչելիությունը, ինչպես նաև ֆինանսական գործիքների տեսականու սահմանափակ լինելը լրջորեն սահմանափակում են պանրարտադրության զարգացումը: Բոլոր չափերի տնտեսվարողներն ունեն ինչպես բավարար շրջանառու միջոցների, այնպես էլ ներդրումային միջոցների ապահովման դժվարություններ:

- **Ֆինանսական միջոցների դժվարամատչելիություն**
  - Առաջավոր տեխնոլոգիաներով հագեցած ֆերմաների կառուցման և շահագործման, արոտավայրերի բարեկարգման կամ կենդանիների ձեռքբերման համար անհրաժեշտ են երկարաժամկետ վարկեր: Հայաստանում երկարաժամկետ վարկերի դժվար մատչելիությունը, բարձր տոկոսադրույքները և վարկային պայմանների անհարմարությունը ներդրումների խթանման առումով լուրջ խանգարող հանգամանքներ են: Մատչելի չեն նաև ֆինանսավորման այլ միջոցներ, ինչպիսին են լիզինգը, ծրագրերի ֆինանսավորումը, վարկային գծերի տրամադրումը և այլն:
- **Ֆինանսական կառավարում**
  - Կարևոր է նկատել նաև, որ ֆինանսների սակավության կամ ֆինանսավորման հետ կապված այլ խնդիրների մի զգալի մասը կապված է տնտեսվարողների՝ ֆինանսական կառավարման վերաբերյալ թույլ գիտելիքների և կարողությունների հետ:

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պանրարտադրության ճյուղի զարգացման որակական ավելի բարձր մակարդակի անցնելու համար անհրաժեշտ է կաթի և պանրի, ինչպես նաև հարակից ոլորտներում զգալիորեն բարելավել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները: Այլ պարագայում կվտանգվի ճյուղի կայուն զարգացման իրագործելիությունը:

- **Մասնագիտական և գործարար գիտելիքներ, գործելակերպեր և տեխնոլոգիաներ**
  - Կաթի, պանրի և այլ կաթնամթերքի արտադրության բոլոր փուլերում առկա է արտադրության արդյունավետ տեխնոլոգիաների և գործելակերպերի վերաբերյալ գիտելիքների լուրջ պակաս, որը զգալիորեն խոչընդոտում է ոլորտի զարգացմանը: Սա մասնավորապես վերաբերում է կենդանիների պահվածքի, դրանց խնամքի և վերարտադրության, կերակրման, տնտեսության կառավարման և կթի տեխնիկայի, որակի

և անվտանգության կառավարման գիտելիքներին և հմտություններին:

- Զուգահեռաբար, գիտելիքի և հմտությունների լուրջ պակաս կա գործարար կառավարման հարցում, ներառյալ՝ արտադրության ծրագրում (պլանավորում), ֆինանսական կառավարում, մատակարարման շղթայի կազմակերպում, շուկայավարություն և այլն:

- **Կենդանիների գրանցման և տեղեկատվական համակարգերի անկատարություն**
  - Ներկայում մի շարք կարևոր վիճակագրական տվյալներ (օրինակ՝ կաթնատվության ցուցանիշը) տնտեսվարողների և մասնագետների կողմից հարցականի տակ են դրվում: Հայաստանում դեռևս գոյություն չունի նաև կենդանիների գրանցման և դրանց վերաբերյալ տվյալների վարման համակարգ, ինչը թուլացնում է արդյունավետ քաղաքականություն վարելու կարողությունը, ինչպես նաև հետագծելիությունը սննդամթերքի արտադրության շղթայում:

- **Ճյուղային ասոցիացիա և կոոպերատիվներ**
  - Կաթի արտադրության ոլորտում արդեն երկար տարիներ ներդրվում է սպառողական կոոպերատիվների մշակույթը՝ կաթի համատեղ հավաքման և իրացման նպատակով: Դա, անկասկած, դրական միտում է և նպաստել է կաթի հավաքման տեխնոլոգիայի զարգացմանը, սակայն դեռևս հեռու է ճյուղի արդյունավետ զարգացման համար բավարար լինելուց:
  - Ոլորտում գործող հիմնական կառույցներն են Լարի պանիր արտադրող իրավաբանական անձանց միությունը և Կաթնամթերք արտադրողների միությունը: Ճյուղային կազմակերպությունների ներկա կարողություններով հնարավոր չէ պատշաճորեն հասցեագրել ճյուղի առջև դրված խնդիրները:

Բ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պանրարտադրության ճյուղի հետագա զարգացման և արտահանման խթանման համար պահանջվող անելիքները, ըստ առաջնահերթության, հարկ է դասակարգել ըստ վերևում հատկորոշված խնդիրների կամ մարտահրավերների.

1. Կաթի մատակարարման խնդրի լուծում
2. Պանրի արտադրական հզորությունների զարգացում
3. Մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում
4. Արտահանման շուկայավարության և մատակարարման արդյունավետ ռազմավարության և գործելակերպերի ներդրում
5. Զարգացման համար ֆինանսական միջոցների ապահովման խնդրի լուծում

Պանրարտադրության ճյուղը հարկավոր է դիտարկել կաթի արտադրության

հետ համատեղ: Պանրի և կաթի արտադրության ճյուղերը միմյանց համար անհրաժեշտ, իրար փոխլրացնող և փոխուժգնացնող ճյուղեր են: Կայուն զարգացման համար խիստ կարևոր է, որ պանրարտադրության կարողությունների ընդլայնումը տեղի ունենա կաթի արտադրության ընդլայնման հետ **համաժամանակորեն (սինխրոն)**: Այդ ճյուղերի հետագա զարգացումը պահանջում է **ներդրումներ** արտադրության ընդլայնման ու տեխնոլոգիաների կատարելագործման, գիտելիքի և հմտությունների զարգացման, շուկայական ենթակառույցների զարգացման և շուկայավարության ուղղությամբ: Ընդ որում՝ պանրարտադրության ոլորտը հնարավորություններ է ընձեռում մասնավոր-մասնավոր (կաթ արտադրող-պանիր արտադրող), ինչպես նաև մասնավոր-պետական համագործակցությամբ փոխշահավետ ներդրումային ծրագրերի համար (օրինակ՝ կաթնարտադրության հանգույցների հիմնում, հանրային ծառայությունների ենթակառուցվածքի բարելավում):

Զարգացման ներկա փուլում հարկավոր է արդյունավետորեն օգտագործել այն հանգամանքը, որ արդեն ձևավորվել է **միջին և խոշոր արտադրողների կորիզ**: Նախաձեռնող և առաջադեմ տնտեսվարողներից բաղկացած այդ կորիզի հետ պետք է ճիշտ համագործակցել, որպես հետագա զարգացման քարշակ: Այդ տնտեսվարողները կարող են արդյունավետ լինել որպես գիտելիքի կուտակման և փոքր տնտեսվարողների շրջանում տարածման, ինչպես նաև առաջավոր տեխնոլոգիաների և գործելակերպերի ներդրման գործընկերներ: Արտահանման խթանման ասպարեզում այդ կորիզը կարող է առաջ տանել մրցունակ արտադրանքների ու դրանց ստանդարտների մշակման, արտահանման ռազմավարությունների և լոգիստիկայի, ինչպես նաև շուկայավարության արդյունավետ լուծումների ներդրման գործը:

1. ԿԱԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Կաթի մատակարարման խնդրի լուծման համար, ըստ առաջնահերթության, հարկավոր է քայլեր ձեռնարկել հետևյալ ուղղություններով՝

- Կերի ապահովում
- Կաթնատվության բարձրացում
- Շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացում:

- **Կերի ապահովում**
  - Կերի ապահովման համար հարկավոր է խթանել ներդրումները (ա) կերային մշակաբույսերի արտադրության, (բ) կեր պատրաստող մեքենաների և (գ) հիդրոպոնիկ կերի արտադրության մեջ՝ կենդանիների համար ողջ տարին կանաչ կեր ապահովելու նպատակով: Կարևոր է ճիշտ ընտրել Հայաստանի պայմաններում արդյունավետ կերային մշակաբույսեր և ներդնել զանգվածային արտադրության մեջ (առաջատար անասնապահների հետ համագործակցությամբ):
  - Հարկավոր է նաև բարելավել արոտավայրերի կառավարումը և խթանել ներդրումները արոտավայրերի բարելավման գործում (ապահովելու

արոտավայրերում էլեկտրաէներգիայի (էլեկտրացանցի անցկացման և(կամ) արևային մարտկոցների օգտագործման միջոցով) և ջրի հասանելիություն՝ կիթը կազմակերպելու համար)՝ դրանք երկարաժամկետ վարձակալության հանձնելով տնտեսվարողներին (3 տարվա փոխարեն մինչև 10 տարի ժամկետով): Կարևոր է բարելավել արոտավայրերի վարձակալության ընթացակարգերը:

- **Կաթնատվության բարձրացում**
  - Կաթնատվության բարձրացման համար կարևոր է տնտեսվարողների շրջանում տարածել գիտելիքներ և հմտություններ կենդանիների պահվածքի, դրանց խնամքի և վերարտադրության (օրինակ՝ հղիության ժամկետի ճիշտ ծրագրման), կերակրման, տնտեսության կառավարման, կթի տեխնիկայի և հիգիենայի ճիշտ գործելակերպերի վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ հարկավոր է խթանել անասնաբուժական ծառայությունների զարգացումը: Տե՛ս «Մարդկային և հաստատութենական կարողություններ զարգացում» բաժինը:
  - Անհրաժեշտ է ներդրումներ կատարել կերի լաբորատորիաների զարգացման մեջ՝ բարելավելու կերերի փորձաքննության ծառայությունները և կերային ռացիոնի կազմումը:
  - Հարկ է նաև խթանել բարձր գենային հատկանիշներով կենդանիների բուծումը և ներդրումները՝ այդպիսի կենդանիներ ձեռքբերելու համար: Միջոցառումների թվում պետք է լինեն օրինակ՝ անասնաբուծության, տոհմային գործի վերաբերյալ պատշաճ ստանդարտների սահմանումը և կիրառության խթանումը, ներդրումների խթանումը ֆերմաներում և ենթակառույցներում: Շատ կարևոր է, որ կենդանիների տարերային վերարտադրությունը փոխակերպվի մասնագիտական խորհրդատվության վրա հիմնված տոհմային գործի: Այդ հարցի լուծման համար, ի լրումն մասնավոր խորհրդատվության, անհրաժեշտ է ապահովել պետական մասնագիտացված խորհրդատվություն և կանոնակարգում: Միաժամանակ, զարգացման հաջորդ փուլի համար պահանջվելու են մասնագիտացված, միջին ու խոշոր չափերի անասնապահական տնտեսություններ, որոնք ունակ կլինեն պանրարտադրողների համար ապահովել բարձրորակ կաթի կայուն մատակարարում:
- **Շուկայի աշխատանքի բարելավում**
  - Կաթի շուկայի արդյունավետությունը բարձրացնելու համար պահանջվելու են ներդրումներ կաթի հավաքման կետերի ընդլայնման համար, ընդ որում՝ արդյունավետ զարգացման համար նպատակահարմար կլինի ոչ միայն մեծացնել հավաքման կետերի քանակը, այլ նաև դրանց չափերը: Միջինից մինչև մեծ չափի կենտրոնները, որոնց միջազգային ասպարեզում անվանում են նաև ***կաթնարտադրության հանգույցներ,*** ավելի հետաքրքիր ու ձեռնտու կարող են լինել պանրարտադրողների համար, քանի որ ապահովում են ավելի որակյալ կաթի ավելի կանոնավոր մատակարարում, ինչպես նաև կարող են մատուցել

անասնապահական և անասնաբուժական մի շարք ծառայություններ ու խորհրդատվություն: Այդ առումով կաթնարտադրության հանգույցները կարող են խոստումնալից ներդրումային ծրագրերի առարկա դառնալ, որտեղ կարող են համագործակցել կաթ արտադրող և վերամշակող տնտեսվարողները, ինչպես նաև պետությունը:

- Բարձրորակ կաթի (ներառյալ՝ չորացրած կաթի) արտադրության չափանիշների սահմանմամբ և խթանմամբ օգնել շուկային հասնելու արդյունավետ գնագոյացման: Զուգահեռաբար, հարկ է նաև ապահովել կաթի որակի արդյունավետ հսկողություն հավաքման կենտրոններում: Գին-որակ ճիշտ հարաբերակցությունը կշահագրգռի տնտեսվարողին որակյալ կաթ արտադրել:
- Կաթնամթերքի պիտակավորման չափանիշների արդյունավետ կիրառում, որտեղ կաթնամթերք արտադրողները պետք է պարզորոշ նշեն՝ կաթը պարունակում է անարատ չոր կաթ և(կամ) բուսական յուղեր, թե ոչ: Դա թույլ կտա արդյունավետ կերպով տարբերակել ապրանքները և համապատասխան գնագոյացումը:
- Կարևոր է ապահովել արդյունավետ (մրցունակ) ներմուծման և արտահանման ընթացակարգեր և ռեժիմներ (օրինակ՝ վարչարարական խոչընդոտներից ազատ մաքսային և այլ ձևակերպումներ, սաքրավորումների և ներդրանքի ներմուծման ազատում ԱԱՀ-ից: Դա կօգնի ապահովել շուկայում բարձրորակ ներդրանքի առկայություն և մատչելիություն, ներառյալ՝ բարձրորակ կենդանիների և սերմնահեղուկի, կերերի և հավելումների, արտադրական սարքերի և գործիքների: Նկատենք, որ ներկայում ԱԱՀ-ի արտոնությունը չի տարածվում կաթի և պանրարտադրության մեջ օգտագործվող որոշ մեքենաների և սարքերի ներմուծման վրա, մասնավորապես՝ *կթելու սարքավորում, կաթի մշակման սարքեր և կերի պատրաստման սարքեր:*
- Կաթի մատակարարման սեզոնայնության և անկանոնության հարցի լուծմանը կարող է նպաստել պայմանագրային հարաբերությունների խթանումը: Տնտեսվարողները կարող են նաև կաթ արտադրել ձմռան ընթացքում՝ կերերի վրա ավելի շատ ծախսելով, սակայն պայմանագրի բացակայության պարագայում գերադասում են դա չանել, քանզի վստահ չեն, թե կարող են կաթն իրացնել շահավետ գնով:
- Պետական գնումների միջոցով նպաստել կաթի գների կանոնավորմանը, օրինակ՝ մանկապարտեզներում, դպրոցներում, ռազմական հաստատություններում սպառման համար:

2. ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պանրի արտադրական հզորությունների զարգացման համար, ըստ առաջնահերթության, հարկավոր է քայլեր ձեռնարկել հետևյալ ուղղություններով՝

- Ներդրումների խթանում արտադրական կարողություններում
- Պանրի որակի և անվտանգության բարձրացում
- Արտադրողականության և գնային մրցունակության բարձրացում:

- **Ներդրումների խթանում արտադրական կարողություններում**
  - Ներդրումների արդյունավետության տեսակետից անհրաժեշտ է կաթի արտադրությունը և կաթի վերամշակումը դիտարկել միասին, որպես արժեքի ստեղծման շղթա, և ոչ իրարից անջատ: Այլապես կաթի ու պանրի որակի, սեզոնայնության և քանակի հարցերը կարող են լուծում չստանալ: Այսինքն՝ հարկ է կիրառել համալիր (կամ ինչպես ընդունված է ասել՝ քլաստերային) մոտեցում՝ հիմնվելով կաթ արտադրողների, կաթ հավաքող կոոպերատիվների, վերամշակողների, ինչպես նաև անասնաբուծական ձեռնարկությունների վրա:
  - Պանրարտադրության ոլորտում ներդրումների խթանման քաղաքականության արդյունավետ միջոց կարող է լինել հատուկ մշակված պայմաններով ներդրումային վարկերի և դրամաշնորհների առաջարկը՝ բարձր տեխնոլոգիական կաթի հավաքման և վերամշակման արտադրամասերի հիմման, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, բարեխիղճ գործելակերպերի ներդրման, ինչպես նաև օժանդակ ենթակառույցների, մասնավորապես՝ սառնարանային պահեստների և ապրանքների տեսակավորման, փաթեթավորման կամ այլ մշակման արտադրամասերի զարգացման համար: Նման աջակցություն կարելի է տրամադրել անասնապահ տնտեսություններին կապիտալ ներդրումների՝ օրինակ՝ ֆերմայի ընդլայնման կամ արդիականացման, արոտավայրերի բարեկարգման, սառնարանների, կթի և կերի արտադրության սարքավորումների ձեռքբերման, պանրագործարանի հիմման համար:
  - Առանձին դեպքերում, հատկապես ՓՄՁ-ների կողմից նոր, բարձրակարգ ենթակառույցների հիմնադրման համար արդյունավետ միջոց կարող է լինել նաև մասնակի դրամաշնորհների տրամադրումը, պետություն-մասնավոր համագործակցությամբ ներդրումը կամ պետության կողմից որոշ ենթակառուցվածքների ապահովումը, ինչպես, օրինակ՝ գազի, ջրի և էլեկտրականության գծերի մոտեցումը արտադրական տեղամասերին (ինչը հատկապես սուր խնդիր է պանրի արտադրության ոլորտում):
  - Անհրաժեշտ է բարելավել արտադրական համալիրների և սարքավորումների ներմուծման մաքսային և այլ ընթացակարգերն ու

պահանջները, մասնավորապես, (ա) արտադրության մեջ օգտագործվող կառույցների, համակարգերի, սարքերի և այլ ապրանքների դասակարգման եղանակների և ընթացակարգերի բարելավում և պարզեցում, (բ) ներդրումային միջոցների ներմուծման նկատմամբ գործող՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության տարածում կաթի և պանրի ճյուղում օգտագործվող սարքավորումների վրա:

- **Պանրի որակի և անվտանգության բարձրացում**
  - Տեղական և միջազգային շուկաներում մրցունակության բարձրացման համար խիստ անհրաժեշտ է խթանել սննդի անվտանգության համակարգերի և գործելակերպերի (HACCP, GMP, Կոդեքս ալիմենտարիուսի ստանդարտներ) լայն ներդրումը կաթ և պանիր արտադրող ձեռնարկություններում:
  - Անհրաժեշտ է դյուրինացնել պանրի արտահանման համար պահանջվող անասնաբուժական, ինչպես նաև համապատասխանության հավաստման ընթացակարգերն ու փաստաթղթային պահանջները:
- **Արտադրողականության և գնային մրցունակության բարձրացում**
  - Մասնավոր հատվածի համար շատ կարևոր է ճիշտ ու խնայողական տեխնոլոգիաների ընտրությունն ու ներդրումը, որոնցով հնարավոր կլինի նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը և բարձրացնել արտադրողականությունը: Հայաստանում կան մոտ մեկ տասնյակ բարձր տեխնոլոգիական հագեցվածությամբ միջին ու խոշոր գործարաններ: *Փոքր ու միջին չափերի* պանիր արտադրողների մեծ մասը, սակայն կարիք ունի բարելավելու իր տեխնիկական հագեցվածությունը:
  - Արտադրողականության բարձրացման տեսակետից տնտեսվարողները պետք է կիրառեն նաև արդյունավետ շուկայավարություն, մատակարարման շղթայի, բաշխման ցանցի կառավարում և այլ գործարար միջոցներ: Օրինակ՝ ծախսերի նվազեցմանը զուգահեռ, արտադրողականությունը կարելի է բարձրացնել նաև պանրի տեսակների ընտրությամբ, այսինքն՝ ընտրել և արտադրել այնպիսի պանրի տեսակներ և այնպես փաթեթավորել կամ այլ կերպ ներկայացնել դրանք, որ կարելի լինի դրանք բարձր գնով վաճառել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Արտադրողականության բարձրացման համար հայաստանյան արտադրողների և արտահանողների համար շատ կարևոր է նաև արտահանման շուկաներում արտադրանքի բաշխման ցանցի արդյունավետ նախագծումը և կառավարումը, ինչպես նաև լոգիստիկայի արդյունավետ կառավարումը:
  - Գնային մրցունակության համար հարկավոր է հասցեագրել նաև ԱԱՀ-ի կիրառման հետ կապված խնդիրը: Անհրաժեշտ է մշակել հարկման ճկուն մեխանիզմ, այնպես որ պանիր արտադրողը չտուժի հարկային վարչարարության անկատարության պատճառով: Պետք է հաշվի առնել պանրի ճյուղի առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ պանրի ինքնարժեքի ավելի քան 70 տոկոսը կաթի ծախսն է:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար, ըստ առաջնահերթության, հարկավոր է խնդիրները հասցեագրել հետևյալ ուղղություններով՝

- Մասնագիտական և գործարար գիտելիքի, գործելակերպերի և տեխնոլոգիաների ներդրում
- Կենդանիների գրանցման և այլ տեղեկատվական համակարգերի ներդրում և զարգացում
- Ճյուղի զարգացման ռազմավարության ընդունում
- Ճյուղային համագործակցության և միությունների հզորացում:

- **Մասնագիտական և գործարար գիտելիք, գործելակերպեր և տեխնոլոգիաներ**
  - Արդյունավետ արտադրության և արտահանման համար պահանջվող գիտելիք և հմտություններ ունեցող մարդկանց ապահովումը կենսական նշանակություն ունի կաթնամթերքի (պանրի) ճյուղի հետագա զարգացման համար:
  - Հաշվի առնելով, որ Ագրարային համալսարանի կողմից ծրագրի մշակումը կարող է երկար ժամանակ պահանջել, հարկավոր է հնարավորինս արագ մշակել մասնագիտական կրթական մոդուլներ (ոլորտում գործող համապատասխան մասնագիտական կազմակերպությունների հետ համատեղ) և կազմակերպել տեխնիկական բարձրակարգ մասնագետների պատրաստում՝ արագ արձագանքելով ճյուղի և շուկայի պահանջներին: Անհրաժեշտ առարկաներ են մասնավորապես՝
    - Կենդանիների ճիշտ խնամք, կերակրում, կառավարում
    - Կաթի և պանրի արտադրության արդի բարձր արտադրողական տեխնոլոգիաներ
    - Արտադրանքի տեսակավորում, փաթեթավորում, պահեստավորում և փոխադրում
    - Շուկայավարություն և մատակարարման շղթայի կառավարում
    - Գյուղարտադրության և վերամշակման պատշաճ գործելակերպեր (GAP/GHP/GMP) և HACCP սկզբունքների վրա հիմնված սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր:
  - Մարդկային կարողությունների զարգացման համար շատ կարևոր է զգալիորեն մեծացնել և ավելի արդյունավետ դարձնել պետության ծախսերը և դերը խորհրդատվության տրամադրման և գիտելիքի տարածման գործում:
  - Մարդկային կարողությունների զարգացման տեսակետից հարկ է ուշադրություն դարձնել ինչպես գիտելիքի և խորհրդատվության առաջարկի, այնպես էլ պահանջարկի խթանմանը: Առաջարկի համար

անհրաժեշտ է մշակել և մատուցել անասնաբույժ մասնագետների պատրաստման մատչելի գործնական դասընթացներ: Կարևոր է նաև բարելավել և արդյունավետորեն օգտագործել ԳՄԿ-ների կարողությունները: Պահանջարկի խթանման համար պետությունը կարող է մասնակիորեն սուբսիդավորել խորհրդատվական և անասնաբուժական ծառայությունների դիմաց վճարները՝ դրա համար սահմանելով անասնապահական ճիշտ գործելակերպ ներդնելու պահանջ:

- Պետական ծրագրերի շրջանակում հիմնվել ***միջին և խոշոր պանիր արտադրողների, անասնաբույժների և ներդրանք մատակարարողների վրա՝ որպես գիտելիքի և հմտությունների տարածման արդյունավետ գործակալներ,*** քանի որ նրանք սերտորեն աշխատում են ինչպես բոլոր չափերի տնտեսվարողների, այնպես էլ արտադրական միջոցների միջազգային մատակարարների հետ:

- **Կենդանիների գրանցման և այլ տեղեկատվական համակարգեր**
  - Կենդանիների նույնականացման համակարգի ստեղծումը թույլ կտա լուծել շուկայում ապրանքների հետագծելիության հարցերը, ինչը շատ կարևոր է բազում առումներով, ներառյալ՝ կենդանիների ճիշտ խնամքի, սննդի անվտանգության և որակի ապահովումը, ինչպես նաև պետական աջակցությամբ ծրագրերի իրականացումը: Հարկ է հաշվի առնել, որ նման համակարգի ստեղծումը մեկանգամյա ներդրում չէ. դրա պահպանման և կանոնավոր աշխատանքի ապահովման համար պահանջվելու է տարեկան գումարի հատկացում պետական բյուջեից:
  - Ճյուղի զարգացման արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար անհրաժեշտություն կա ճշգրտելու, հստակեցնելու և բարելավելու անասնապահության, ինչպես նաև կաթի ու կաթնամթերքի արտադրության վերաբերյալ *վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման գործընթացը*: Ներկայում մի շարք կարևոր տվյալներ տնտեսվարողների և մասնագետների կողմից հարցականի տակ են դրվում:

- **Ճյուղի զարգացման ռազմավարություն**
  - Հաշվի առնելով, որ պանրարտադրության ճյուղը կազմում է կաթի և կաթնամթերքի արտադրության համալիրի մի մաս՝ շատ կարևոր է մշակել կաթնամթերքի արտադրության *ոլորտի զարգացման ռազմավարություն:* Նման համալիր ռազմավարությունը առանցքային դեր պետք է կատարի զարգացման ներդրումային ծրագրերի, ոլորտին առնչվող կանոնակարգերի և քաղաքականության արդյունավետության և ուղղորդվածության բարձրացման գործում: Այդպիսի ռազմավարության և համապատասխան գործողությունների ծրագրի մշակումը բխում է նաև ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշումից, որով կաթնամթերքի արտադրությունը ներառվել է արտադրական (արտահանման) կարողությունների զարգացման առաջնային ոլորտների շարքում:

- Ճիշտ ռազմավարությունների ընտրության համար կարևոր է նաև տնտեսվարողների և պետական մարմինների շրջանում իրազեկվածության բարձրացման աշխատանքների անցկացումը: Անհրաժեշտ է ուսումնասիրել ԵԱՏՄ ընթացակարգերն ու պահանջները և դրանց մասին իրազեկել պետական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներին: Հարկ է նաև տնտեսվարողներին տեղեկացնել Կառավարության կողմից իրականացվող՝ արտահանման աջակցության ծրագրերի, օրինակ՝ արտահանման ապահովագրության աջակցության ծրագրի, ինչպես նաև ներդրումային սարքավորումների և համալիրների ներմուծման ընթացակարգերի մասին:

- **Ճյուղային համագործակցություն և միություններ**
  - Տնտեսվարողների միջև համագործակցության խթանումը կարևոր է, մասնավորապես, արտադրանքի անվտանգության և որակի ստանդարտների սահմանման և դրանց կատարման, բրենդինգի, ինչպես նաև արտահանման նպատակով արտադրանքի կուտակման և փաթեթավորման համար: Համագործակցության խթանման արդյունավետ եղանակներից մեկը ներդրումային ծրագրերի հետ այն կապակցելն է: Օրինակ՝ խրախուսել այն ներդրումային ծրագրերը, որոնցում կաթ և պանիր արտադրողները համագործակցում են միմյանց հետ՝ նպաստելով շուկայի ավելի արդյունավետ աշխատանքին:
  - Ճյուղային միությունները, մասնավորապես, Լարի միությունը և Կաթնամթերք արտադրողների միությունը, կարիք ունեն լուրջ հզորացման, որպեսզի կարողանան զգալի նպաստ ունենալ ճյուղի հետագա զարգացման գործին:

4. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Արտահանման արդյունավետ ռազմավարության և գործելակերպերի ներդրման համար, ըստ առաջնահերթության, հարկավոր է խնդիրները հասցեագրել հետևյալ ուղղություններով՝

- Արտադրատեսակների ճիշտ ընտրություն
- Շուկաների ճիշտ ընտրություն և պահպանում
- Շուկայավարական միջոցներ և լոգիստիկա

- **Արտադրատեսակների ճիշտ ընտրություն**
  - Նոր շուկաներ մուտք գործելու, ինչպես նաև եղած ու նոր շուկաներում մրցունակության բարձրացման առումով կարևորվում է պանրատեսակների ճիշտ ընտրությունն ու դրանց փաթեթավորումը կամ այլ կերպ ներկայացումը: Մասնավորապես, հարկ է հաշվի առնել, որ ռուսաստանյան շուկայում գերադասելի են այսպես կոչված՝

«եվրոպական պանիրները», ուշադրություն դարձնել հայաստանյան պանրի պատշաճ բրենդավորմանը, պարզել Մերձավոր արևելքում պահանջարկ վայելող պանրի տեսակները:

- Պանրի տեսակի ընտրության հարցում կարևոր է հաշվի առնել նաև լոգիստիկ հարցերը: Օրինակ՝ հաշվի առնելով հայաստանյան տնտեսվարողների ունեցած տրանսպորտային դժվարությունները՝ կարող է նպատակահարմար լինել պահպանման երկար ժամկետ ունեցող պանրատեսակների արտահանումը:

- **Շուկաների ճիշտ ընտրություն և պահպանում**
  - Մեկ շուկայից կախվածության հետ կապված խնդիրներից խուսափելու համար հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել այլ շուկաներ փնտրելու և ներթափանցելու, ինչպես նաև եղած շուկաներում նոր հատվածներ կամ սեգմենտներ (բացի սփյուռքահայերից) յուրացնելու և գրավելու վրա: Հայաստանյան տնտեսվարողները պատշաճ ուշադրություն պետք է դարձնեն իրենց արտադրության մրցունակության բարձրացման վրա ինչպես ինքնարժեքի նվազեցման, այնպես էլ արտադրանքի տեսականու և որակի առումով: Ի լրումն ռուսաստանյան և ԱՄՆ-ի շուկաների, հնարավոր է նաև ներգրավել Մերձավոր արևելքի շուկաները՝ հաշվի առնելով, որ Հայաստանում բացվել է «Հալալ» սերտիֆիկացման կենտրոն:

- **Ընթացակարգեր և լոգիստիկա**
  - Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ շատ կարևոր է, որ տնտեսվարողները հենց իրենք ավելի հեռատես քաղաքականություն վարեն մատակարարման շղթայի կառավարման տեսակետից: Օրինակ՝ լոգիստիկայի կազմակերպումը, ներառյալ՝ վաճառքի ծավալների կանխատեսումները և պլանավորումը կարելի է այնպես կազմակերպել, որ նվազեցվեն կամ շրջանցվեն Լարսի անցակետի հնարավոր փակման հետ կապված խնդիրները: Տնտեսվարողները կարող են մտածել նաև հիմնական շուկաներում իրենց հիմնական հաճախորդներին մոտիկ պահեստային կարողությունների համատեղ օգտագործման ուղղությամբ:
  - Արտահանման լայն հնարավորությունից արդյունավետորեն օգտվելու համար *փոքր ու միջին տնտեսվարողները* պետք է *միավորեն իրենց շուկայավարական հզորությունները* ինչպես հումքի և ներդրանքի ձեռքբերման, այնպես էլ արտադրանքի իրացման գործում: Հզորությունների արդյունավետ միավորման համար տնտեսվարողները պետք է բարելավեն իրենց գիտելիքներն ու կարողություններն այնպիսի հարցերում, ինչպիսիք են շուկայավարությունը, մատակարարման կազմակերպումը, սննդամթերքի անվտանգության պահպանումը, արտադրության և արտադրանքի ստանդարտացումը: Արտադրանքի համատեղ իրացմանը նպաստող կարևոր գործոն կարող է լինել հայաստանյան պանրի անվան (բրենդի) ստեղծումը և առաջմղումը:

- Անհրաժեշտ է իրականացնել Լարսի սահմանային կետում ընթացակարգի պարզության և հստակության պահպանման հարցերով շարունակական համագործակցություն և համաձայնությունների ձեռքբերում ռուսական ու վրացական կողմերի հետ:Կարևոր է նաև Լարսով անցնող ուղուց բացի արտահանման կամ ներմուծման այլ ուղիների հատկորոշումը և դրանց շահագործման համար համապատասխան միջոցառումների ձեռնարկումը (օրինակ՝ Սև ծովով փոխադրման ուղիների արդյունավետ շահագործման համար):

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Ֆինանսական միջոցների մատչելիության խնդրի լուծումը հարկ է դիտարկել և հասցեագրել հետևյալ ուղղություններով՝

- Արդյունավետ և գործարարության կարիքին համապատասխան ֆինանսական ապրանքի մշակում
- Ֆինանսական կառավարման գիտելիքների զարգացում
- Ֆինանսական ճյուղի ընդհանուր զարգացում

- **Արդյունավետ և գործարարության կարիքին համապատասխան ֆինանսական ապրանքի մշակում**
  - Ձեռնարկությունների ստեղծման և զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մատչելիության ապահովման համար հատուկ ուշադրություն պետք է դարձվի բանկերի կողմից տնտեսվարողների կարիքներին համապատասխան չափած-ձևած ֆինանսական ապրանքների մշակմանն ու առաջարկին: Բանկերին հարկ է խրախուսել սերտորեն աշխատել տնտեսվարողների հետ՝ հասկանալու համար նրանց իրական կարիքները, ինչպես նաև մշակել ու կիրառել ֆինանսավորման պարզ ու հստակ ընթացակարգեր ու պահանջներ:
  - Քաղաքականության տարբեր միջոցներով կարելի է բանկերին խրախուսել՝ հատուկ պայմաններով ֆինանսավորելու ճյուղի զարգացմանը նպաստող այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են (ա) շուկայական և արտադրական ենթակառուցվածքների, օրինակ՝ հավաքման և պահեստավորման կենտրոնների և արտադրամասերի հիմնումը կամ բարելավումը, (բ) առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը և արտահանման ընդլայնումը, (գ) արտահանման ֆինանսավորման և միջազգային վճարումների իրականացման կամ ստացման արդյունավետ գործիքների օգտագործումը: Կարևոր է տնտեսվարողներին տեղեկացնել արտահանման ապահովագրության հնարավորությունների մասին, մասնավորապես՝ Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության և դրա գործառույթների մասին:

- **Ֆինանսական կառավարման գիտելիքների զարգացում**
  - Ներկայում հրատապ է ֆինանսական և գործարար կառավարման կրթվածության ցածր մակարդակի լուծման հարցը: Լուծման ձև կարող է լինել հատուկ չափած-ձևած գործնական դասընթացների մշակումը և անցկացումը տնտեսվարողների և բանկերի շրջանում, որպեսզի մի կողմից՝ բանկերը լավ պատկերացնեն տնտեսվարողների պահանջներն ու խնդիրները և մյուս կողմից՝ տնտեսվարողները հասկանան ֆինանսական ճիշտ կառավարման կարևորությունը և դրա գործիքները, ինչպես նաև բանկերի՝վարկավորման պահանջներն ու ընթացակարգերը: ՀՀ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը, օրինակ, ունի նման դասընթացներ:
- **Ֆինանսական հատվածի ընդհանուր զարգացում**
  - Երկարաժամկետ հեռանկարում հարկավոր է քաղաքականության միջոցներ ուղղորդել ոչ վարկային ֆինանսավորման մեխանիզմների զարգացմանը, ինչպիսիք են վենչուրային հիմնադրամները, սեփական կապիտալի հիմնադրամները, կապիտալի շուկաները:

ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Քարտեզագրման համար շղթան ու դրա արդյունավետությունը դիտարկվում են գործարարության տեսանկյունից, մասնավորապես, անասնապահների և կաթ արտադրողների կամ ներմուծողների, պանիր (և այլ կաթնամթերք) արտադրողների, արտահանողների, մանրածախ ու մեծածախ վաճառքի կետերի, փոխադրողների և այլն: Արտահանման շղթան ներառում է ինչպես մինչարտադրական, այսինքն՝ հումք և համապատասխան թույլտվություններ ձեռքբերելու (կամ ներմուծելու) օղակները, այնպես էլ հետարտադրական օղակները, ինչպիսիք են՝ ապրանքների փոխադրումը, փաթեթավորումը, պահեստավորումը և արտահանման հետ կապված ընթացակարգերը: Պանրի արտադրության (արտահանման) շղթայի գծանկարը տե՛ս 7-րդ պատկերում:

1. ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԿԻՐՃ ՏՎՅԱԼՆԵՐ

Պանրի արտադրությունը Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերից մեկն է: Հայաստանում արտադրվում են երկու տասնյակից ավելի տեսակի պանիրներ (տես 1-ին աղյուսակ և 2-րդ պատկեր): Արտադրվող պանրի մեծ մասը կովի կաթից է: Ավանդական պանրատեսակներն են՝ Լոռի, Չանախ, Չեչիլ: Դրանց հետ գնալով ավելի մեծանում է այնպիսի պանրատեսակների արտադրությունը, ինչպիսիք են Գաուդան, Էդամը, Չեդարը, Կամեմբերը, Էմենտալը:[6]

Պանիրը Հայաստանի արտահանման ներուժ ունեցող արտադրատեսակներից է: Արտադրության տարեկան ծավալը 2016 թվականին, ըստ պաշտոնական տվյալների, եղել է 22,316 տոննա (2-րդ պատկեր), ինչը 30 տոկոսով ավել է 2010 թվականի ցուցանիշից:[7] Նկատենք, որ 2010 թվականից սկսած պանրի արտադրության ծավալի փոփոխությունները զգալի չեն եղել, սակայն 2016 թվականին պանրի արտադրությունը զգալիորեն աճել է՝ 20 տոկոսով 2015 թվականի համեմատ:

Ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ Հայաստանում կաթի վերամշակման ճյուղում գործում են

6 Խորհրդային ժամանակներից եկող հիշողությամբ Հայաստանում ընդունված է դեղին պանրատեսակները՝մասնավորապես՝Գաուդան, Էդամը, Մազդամը, և, երբեմն, Էմենտալը ուղղակի անվանել հոլանդական:

7 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը ընտրեն արտահայտությամբ: Ըստ ոլորտում ընդգրկված տնտեսվարողների և մասնագետների գնահատականների՝ կաթի և պանրի արտադրության ծավալներն իրականում զգալիորեն ավելի ցածր են:

81 ձեռնարկություններ, որոնցից պանիր արտադրում է 50 ձեռնարկություն:[8] Ըստ Գյուղատնտեսության նախարարության գնահատականի՝ ներկա արտադրական հզորությունները հնարավորություն են տալիս վերամշակելու տարեկան շուրջ 490 հազար տոննա կաթ: Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1900 հոգի:[9] Այս տվյալները *չեն ներառում* բազմաթիվ մանր տնայնագործ պանիր արտադրողներին:

Ի տարբերություն պանրի արտադրության, պանրի արտահանումը արագ զարգացման միտում է դրսևորում: 2010-2014 թվականներին պանրի արտահանման ծավալը աճել է ավելի, քան երեք անգամ, իսկ 2015 թվականին արտահանման ծավալն աճել է մեծ թռիչքով: 2015 թվականին Հայաստանից արտահանվել է ավելի, քան 9000 տոննա պանիր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է վեց անգամ:

Գծապատկեր 2. Պանրի արտադրություն և արտահանում



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ:

8 Խոշոր արտադրողներից են մասնավորապես, «Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Դուստր Մարիանա», «Բոնիլատ», «Մուլտի ագրո» գիտա-արտադրական կենտրոն», «Արզնի կաթ», «Թամարա և Անի», «Բիոկաթ», «Չանախ», «Դուստր Մելանիա», «Իգիթ» ՍՊԸ-ներ, «Արաքս-2» ԱԿ, «Մարիլա»:

9 Հղում Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական վեբկայք (վերջին մուտքը՝ 2017թ. փետրվարի 16):

Արտահանման ծավալի նման կտրուկ աճը, հավանաբար, պայմանավորված է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառման գործոններով: Այդ երկու գործոնները դեպի Ռուսաստան արտահանման լայն հնարավորություններ են բացում: 2015 թվականին արտահանված պանրի 42 տոկոսը կովի կաթից սպիտակ աղաջրում պահվող պանիրներն են, իսկ 17.5 տոկոսը՝ Գաուդա պանիրը: Կտրուկ աճել է ինչպես ավանդական սպիտակ աղաջրի պանրատեսակների (Լոռի, Չանախ), այնպես էլ դեղին կիսապինդ կամ պինդ պանրատեսակների (Գաուդա, Չեդար, Էդամ, Տիլզիտ) արտահանումը:

Նման մեծ հնարավորությունն իր հետ բերում է նաև համապատասխան մարտահրավերներ, որոնց ժամանակին ու պատշաճ լուծումը կենսական նշանակություն ունեն ճյուղի հետագա զարգացման համար: Ընդ որում՝ մարտահրավերներն առկա են պանրարտադրության և արտահանման շղթայի բոլոր օղակներում: Հաջորդող բաժիններում մանրամասնվում և քննարկվում են այդ հնարավորություններն ու մարտահրավերներն ըստ մատակարարման շղթայի փուլերի և գործընթացների, ներառյալ՝

- կենդանիների ցածր որակ և ցածր կաթնատվություն
- կենդանիների ոչ պատշաճ կերակրում, խնամք և պահվածք
- կաթի անկանոն մատակարարում և մեծ տատանումներ տարվա ընթացքում
- կաթի ցածր որակ և անբավարար հիգիենիկ տվյալներ կամ պայմաններ
- շուկայի աշխատանքի անկատարություններ, ներառյալ՝ կենդանիների, կաթի և պանրի շուկաները
- պանրի որակի և անվտանգության ստանդարտների հետ կապված խնդիրներ
- ինստիտուցիոնալ խնդիրներ, ինչպիսիք են՝ կենդանիների նույնականացման համակարգի բացակայությունը, անասնաբուժական ծառայությունների անբավարարությունը, արտադրանքի (և ենթաարտադրանքի) հետագծելիության բացակայությունը, խորհրդատվության և գյուղատնտեսական այլ ծառայությունների թուլությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➤ Արոտավայրեր և որակյալ կաթ արտադրելու հնարավորություն ➤ Ավանդական ճյուղ լինելու հանգամանք՝ կան պանրագործական գիտելիքներ և հմտություններ ➤ Ավանդական մեծ շուկայի առկայություն Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ այլ երկրներում և դրական համբավ այդ շուկաներում ➤ Վերջին տարիներին կաթի հավաքման տեխնոլոգիայի բարելավում (հավաքման կետեր, կթի սարքավորումներ)	➤ Ճյուղի զարգացման ռազմավարության բացակայություն ➤ Աճի համար կերի անբավարար քանակ և մատակարարման անկանոնություն ➤ Աճի համար կաթի անբավարար քանակ, որակ և մատակարարման խիստ սեզոնայնություն ➤ Աճի համար պանրի արտադրության կարողությունների սահմանափակություն ➤ Մասնագետների խիստ պակաս (անասնաբուժության, անասնապահության, կաթի արտադրության, կաթի վերամշակման) ➤ Ներդրումային և ֆինանսական միջոցների դժվարամատչելիություն ➤ Թույլ շուկայավարություն՝ (ա) արտահանելի պանրի տեսակներ ներդնելու և շուկաներ գրավելու առումով, (բ) արտահանման շուկայում բաշխման շղթայի չտիրապետում (արդյունքում շահույթի մեծ մասը գնում է միջնորդներին) ➤ Արտադրության անվտանգության և որակի կառավարման համակարգերի բացակայություն կամ անբավարարություն ➤ Ներմուծման ընթացակարգերի բարդություն ➤ Կրթական համակարգի՝ որակյալ մասնագետներ թողարկելու անկարողություն

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
➤ Արտահանման շուկաներում պահանջարկ վայելող նոր տեսակի պանիրների արտադրություն ➤ Ռուսաստանյան ավանդական մեծ շուկայի առկայութուն (հնարավորությունների մեծացում Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառման պայմաններում) ➤ Այլ շուկաներ արտահանման հնարավորություններ (օրինակ՝ Մերձավոր արևելյան) ➤ Ներդրումներ կատարելու համար նպաստավոր պայմաններ (համալիրների ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից)	➤ Արտահանման կենտրոնացվածություն ռուսական շուկայի վրա ➤ Իրանի մուտք ռուսական շուկա (Իրանի դեմ պատժամիջոցների վերացման արդյունքում) ➤ Ընդհանուր մրցակցության ուժգնացում ավանդական Ռուսական շուկայում. այլ երկրների մուտք կամ դիրքի ուժեղացում այդ շուկայում ➤ Անվտանգության և որակի պահանջների հնարավոր խստացում արտահանման ավանդական և այլ շուկաներում ➤ Սպառողների նախասիրություններին հայկական ավանդական պանրատեսակների անհամապատասխանություն

2. ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պանրի արտադրության համար անհրաժեշտ պայման է բավարար քանակով և պահանջվող որակով կաթի ժամանակին մատակարարումը: Հայաստանում արտադրված կաթի 95 %-ը ստացվում է տավարաբուծությունից: 2015 թվականին արտադրվել է 728.6 հազար տոննա կաթ, և ներմուծվել է մոտ 132.6 հազար տոննա կաթին համարժեք կաթնամթերք: Միայն խտացրած կաթի և կաթի փոշու ներմուծումը կազմել է 3828.5 տոննա, իսկ կաթի և սերուցքի ներմուծումը կազմել է 155.2 տոննա: Ըստ ՀՀ Վիճակագրության ծառայության տվյալների՝ վերջին հինգ տարիների ընթացքում կաթի արտադրության ծավալը կայուն կերպով աճել է (3-րդ պատկեր):



Պատկեր 3. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ:

Հայաստանում պանրի արտադրության հետագա ընդլայնումը և զարգացումը զսպող հիմնական խոչընդոտներից մեկը կաթի մատակարարման սեզոնայնությունն է և մատակարարվող ծավալի սահմանափակությունը և մեծ տատանումները տարվա ընթացքում (տես 4-րդ պատկեր): Առավելագույն քանակ արտադրվում է հունիս-հուլիս ամիսներին, ընդ որում՝ ամենացածր ու ամենաբարձր ամիսներին արտադրության ծավալների տարբերությունը կարող է տատանվել մինչև 10 անգամ: Նման սեզոնայնության պատճառներ են, մասնավորապես.

- Անասնապահությամբ զբաղվողների մեծ մասը մանր տնտեսություններ են (3-5 կով), որոնք կենդանիներին տանում են արոտավայրեր գարնան և ամռան ամիսներին.
- Կերի արտադրության, մատակարարման և կառավարման ոչ արդյունավետ գործելակերպերը, ինչի պատճառով գարնան և ամռան շրջանից հետո կտրուկ ընկնում են կերի որակն ու սնուցողական տվյալները: Մանրամասների համար տես 2.1 բաժինը:

Պանիր և այլ կաթնամթերք արտադրողների համար կաթի մատակարարման այդպիսի տատանումներն առաջացնում են մի շարք դժվարություններ, օրինակ՝

- դժվարացնում են կայուն արտադրության ծրագրումը (պլանավորումը) և կազմակերպումը,
- առաջացնում են փոխադրման և պահպանման հետ կապված լոգիստիկ խնդիրներ,
- հաճախ դժվարացնում են նաև ֆինանսական կառավարումը: Կաթ վերամշակողների զգալի մասը տառապում է շրջանառու միջոցների սղությունից և մատակարարված կաթի դիմաց վճարելու անկարողությունից:



Պատկեր 4. Կաթի մատակարարման տատանումները տարվա ընթացքում

Հայաստանում կաթի արտադրության մյուս առանձնահատկությունը, որ խոչընդոտում է պանրարտադրության զարգացումը և նվազեցնում է պանրի մրցունակությունը տեղական և, հատկապես, միջազգային շուկաներում, կաթի ցածր որակն է և հիգիենայի կանոնների անտեսումը:

Վերոնշյալ խնդիրների մեծ մասը կապված է կաթի արտադրության ճյուղում փոքր արտադրողների գերակշռության, ինչպես նաև նրանց միջև թույլ համագործակցության կամ դրա բացակայության հետ, ինչի հետևանքով.

- դժվարանում է կաթի հավաքման լոգիստիկան: Մեծ թվով փոքր արտադրողներից կաթ հավաքելը դժվար է և թանկ է նստում՝ բարձրացնելով կաթի ինքնարժեքը:
- խոչընդոտներ են առաջանում կաթի որակի և անվտանգության պատշաճ ստանդարտների սահմանման և կիրառության առնչությամբ: Նույնը նկատվում է նաև նման իրավիճակ ունեցող շատ այլ, նույնիսկ զարգացած երկրներում: Ցածրակարգ կաթն, իհարկե, բացասաբար է անդրադառնում պանրի որակի վրա:

Ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ Հայաստանում կաթի արտադրության ինքնաբավությունը 2015 թվականին կազմել է 84.2 տոկոս, այսինքն՝ Հայաստանում արտադրվում է սպառվող կամ վերամշակվող կաթի 84.2 տոկոսը, իսկ ավելի քան 15 տոկոսը ներմուծվում է (գլխավորապես կաթի փոշու կամ խտացրած կաթի ձևով):[10]

Հայաստանյան շուկայում գործող հանգամանքներով պայմանավորված՝ կաթի ապրանքայնության միջին մակարդակը մոտ 60 տոկոս է, այսինքն՝ գյուղացիական տնտեսությունները իրացնում են արտադրված կաթի 60 տոկոսը, իսկ մնացած 40 տոկոսը սպառվում կամ վերամշակվում է հենց գյուղացիական տնտեսությունների կողմից:[11] Այլ կերպ ասած, կաթի վերամշակման ներկայում օգտագործվող հզորությունը Հայաստանում, առանց տնայնագործական վերամշակման, մոտ 450 հազար տոննա է (առանց զանազանելու, թե ինչ կաթնամթերք է արտադրվում), գումարած ներմուծվող չոր կաթի կամ խտացրած կաթի վերամշակման համար պահանջվող հզորությունը:[12]

Կաթի արտադրության զարգացումը չպետք է դիտարկվի կաթի վերամշակումից անջատ: Անհրաժեշտ է կաթի արտադրության հետագա զարգացումը սերտորեն կապակցել կաթնամթերքի, հատկապես պանրի արտադրության և արտահանման կարողությունների զարգացման հետ: Տնտեսվարողները պետք է կարողանան շուկայահանել իրենց արտադրանքը շահավետ գներով: Հաշվի առնելով, որ կաթի հիմնական սպառողները կաթ վերամշակողներն են՝ անիմաստ է ավելացնել կաթնատվությունը և կաթի արտադրությունը, եթե բացակայում են կաթի վերամշակման բավարար կարողություններ:

2.1. ԱՐՈՏՆԵՐԻ ԵՎ ԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Որակյալ կաթի արտադրության և տարվա ընթացքում կայուն մատակարարման համար անհրաժեշտ է կենդանիների համար ճիշտ բաղադրությամբ կերի ապահովումը կլոր տարի: Հայաստանում կերի մատակարարման և կերակրման հետ կապված անկատարությունները կաթի արտադրության հետագա ընդլայնումն ու զարգացումը սահմանափակող գործոններ են:

Կերի արտադրության և կառավարման խնդիրներն ավելի ցայտուն երևացին, երբ տավարի ցեղերի բարելավման պետական ծրագրի շրջանակում ստացված բարձր գենային հատկանիշներով մաքրացեղերը և դրանց հետ

10 ՀՀ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2015 թ. հունվար-դեկտեմբեր: http://www.armstat.am/file/article/f_sec_4_2015_3.pdf

11 Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական գյուղացիական տնտեսությունների կողմից, ԱՎԾ, 2015, http://www.armstat.am/file/article/iracum_2015.pdf

12 2015 թվականին արտադրվել է 728.6 հազար տոննա կաթ, որի 60 տոկոսը կլինի 437.2 տոննա, այսինքն՝ 2015 թվականին, բացի տնայնագործական մանր վերամշակումից և սեփական սպառումից, սպառվել և վերամշակվել է 437.2 տոննա կաթ:

խաչասերումից ստացված խառնացեղերը սպասվածից ավելի ցածր արտադրողականություն դրսևորեցին: Դրա պատճառներ էին տեղական ցածրորակ կերը, կերակրման անարդյունավետ մշակույթը և կենդանիների վատ խնամքը: Այդ կենդանիների արտադրողականության վրա բացասաբար է ազդում նաև կերակրման սթրեսը՝ պայմանավորված կերերի արտադրության խիստ սեզոնայնությամբ (Հայաստանում թույլ զարգացած է հյութալի և չոր կերերի արտադրությունը, և անբավարար են կերերի պահեստավորման կարողությունները): Բարձրակարգ կենդանիներին պետք է պատշաճ կեր և պատշաճ խնամք, որպեսզի դրանք դրսևորեն իրենց լավագույն հատկանիշները:

Կերակրման գործելակերպ և մշակույթ

Կերակրումն ուղղակիորեն ազդում է կենդանիների կաթնատվության վրա: Հայաստանում ներկայում կենդանիների կերակրման երկու հիմնական եղանակներ են.

- արոտային պահվածքը, երբ կենդանիները կերակրվում են արոտավայրի կանաչ զանգվածով՝ տարվա սահմանափակ ժամանակահատվածում (գարնան երկրորդ կես, ամառ)
- մսուրային պահվածքը, երբ կենդանիները պահվում են շենքերում և կերակրվում պահեստավորած խոտով, որի որակական հատկանիշները հեռու են իդեալականից: Պահեստավորած խոտը պահպանվում է բաց երկնքի տակ և կորցնում իր սննդարար արժեքը տեղումների արդյունքում:

Որոշ տնտեսվարողներ կենդանիներին կերակրում են նաև սիլոսով և համակցված կերերով, սակայն կերակրման այդ եղանակները լայնորեն տարածված չեն:

Տնտեսվարողների գերակշռող մեծամասնությունը չի կիրառում կերակրման արդյունավետ ռեժիմ և կերաբաժին (ռացիոն)՝ կերերի հետազոտման լաբորատորիաների, կերերի արտադրության կարողությունների (օրինակ՝ սիլոսի պատրաստման համար), ինչպես նաև կերերի կառավարման ոլորտում գիտելիքների և կրթության բացակայության պատճառով:

Ընդհանուր առմամբ, առկա է գիտելիքի և հմտությունների խիստ պակաս այնպիսի հարցերում, ինչպիսիք են մշակաբույսերի (կերաբույսերի) ռոտացիա, բարեխիղճ գյուղատնտեսական գործելակերպեր, գոմաղբով պարարտացում, խոտի հավաքման ճիշտ գործելակերպեր, հողի կառավարման ճիշտ գործելակերպեր, կենդանիների կառավարում (ինչպես, օրինակ կերակրումը և կենդանիների փոխարինումը): Ի տարբերություն փոքր տնտեսվարողների, համեմատաբար խոշոր տնտեսություններում գիտելիքներն ավելի բարձր մակարդակի վրա են: Անարդյունավետ գործելակերպի օրինակների համար տես 1-ին ներդիրը:

Ներդիր 1. Անարդյունավետ կերակրման գործելակերպեր

1. Տնտեսվարողները հաճախ խոտը հավաքում են դրա հասունացման ուշ շրջանում՝ մեծ ծավալ ապահովելու նպատակով: Դրա արդյունքում, սակայն, խոտի սննդարար հատկանիշները կտրուկ նվազում են. օգտակար նյութերը (ցելյուլոզ, մարսելի պրոտեին, ածխաջրեր, ճարպեր, վիտամիններ և այլն) նվազում են և փոխարինվում չմարսվող նյութերով (լիգնին): Դրա հետևանքով նվազում է կերի էներգետիկ արժեքը, ինչը բացասաբար է ազդում կենդանիների կաթնատվության վրա:
2. Տնտեսվարողները սովորաբար իրենց կենդանիներին կերակրում են օրվա որոշակի ժամերի (առավոտյան և երեկոյան): Սակայն նման գործելակերպը արդյունավետ չէ, որովհետև հանգեցնում է կենդանիների միջև պայքարի, որտեղ խոշոր կենդանիները թույլ չեն տալիս փոքր և ջահել կենդանիներին բավարար չափով կերակրվել: Արդյունքում քիչ ուտող կովերի արտադրողականությունն ընկնում է: Ճիշտ գործելակերպն այն է, երբ կենդանին կարող է ուտել օրվա ցանկացած ժամի, երբ կամենա:
3. Անարդյունավետ գործելակերպ է նաև այն, երբ տարբեր տարիքի, չափի և կերաբաժնի կովերը պահվում են իրար հետ մեկ տեղում: Կաթնատու, ցամաքած և հղի կովերը պահանջում են տարբեր կերաբաժիններ, և հարկ է, որ իրարից զատ պահվեն:

Կերակրման գործելակերպի վրա ազդում են նաև կաթի ու պանրի շուկաների անկատարությունները, ինչը բերում է կաթի գների անկայունության ու ցածր մակարդակի: Օրինակ՝ տնտեսվարողները հաճախ խուսափում են կերի համար լրացուցիչ ծախսեր կատարելուց, քանզի հստակ պատկերացում չունեն կաթի գնի վերաբերյալ և վստահ չեն, որ կկարողանան իրենց որակյալ արտադրանքի դիմաց պատշաճ գին ստանալ: Բարձրորակ կերերի ձեռք բերման նպատակով ծախսերի ավելացման արդյունքում տնտեսվարողները կարող են վնասներ կրել, ուստի իրենք հաճախ նախընտրում են թերսնել կենդանիներին, ինչն էլ բերում է ցածր արտադրողականության:

Հայաստանում կերի արտադրությունը դեռևս զարգացած չէ: Ըստ Գյուղատնտեսության նախարարության գնահատականի՝ Հայաստանում տարեկան արտադրվում է 20,000-30,000 տոննա համակցված կեր: Ընդ որում՝ կերի այդ քանակը օգտագործվում է ոչ միայն խոշոր եղջերավոր կենդանիների, այլ նաև թռչնաբուծության և այլ կենդանիների կերակրման համար: Դրան զուգահեռ 2016 թվականին արտադրվել է մոտ 88,000 տոննա թեփ, մաղուցք և հացահատիկային մշակաբույսերի մշակումից ստացված այլ մնացուկներ:[13] Վերջիններս, համակցված կերերի համեմատ, ունեն էականորեն ցածր սննդային ցուցանիշներ: Հայաստան կենդանիների պատրաստի կերի ներմուծման ծավալները վերջին հինգ տարիներին չեն անցել տարեկան 14,000

13 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը ընդեղեն արտահայտությամբ», 2017 http://www.armstat.am/file/article/bnexen_12_2016.pdf:

տոննայից (տե՛ս 1-ին աղյուսակը)։ Այդ տարիներին ներմուծման ծավալի փոփոխության որևէ զգալի միտում չի նկատվել։

Աղյուսակ 1. Հայաստան կենդանիների պապրասպի կերի արտադրություն և ներմուծում

	2012	2013	2014	2015	2016
Թեփ, մաղուցք և հացահատիկային մշակաբույսերի մշակումից ստացված այլ մնացուկներ, տոննա[14]	90,330	81,304	100,290	87,660	87,422
Ներմուծում, տոննա[15]	13,115	12,663	11,780	12,440	

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

Արոտների կառավարում

Կերակրմանն առնչվող մեկ այլ կարևոր խնդիր է արոտավայրերի ոչ պատշաճ կառավարումը։ Հայաստանը հարուստ է բարձրլեռնային ալպիական մարգագետիններով, ինչը կարևոր նպաստավոր հանգամանք է որակյալ պանրատեսակների արտադրության համար։ Արոտավայրերը պատկանում են համայնքներին և կառավարվում են համայնքապետարանների կողմից, որոնք իրավասու են արոտավայրերը հատկացնել (վարձակալության հանձնել) տնտեսվարողներին։ Ըստ տնտեսվարողների՝ արոտավայրերի հատկացման և վարձակալության ժամկետի երկարաձգման ընթացակարգերը հստակ չեն և հաճախ բերում են համայնքապետերի կողմից հայեցողական որոշումների կայացման՝ ի վնաս տնտեսվարողների։

Արոտավայրերում կատարվող ներդրումները բավականին փոքր են կամ ընդհանրապես բացակայում են, իսկ արոտավայրերի կառավարումը թերի է։ Արոտավայրերի մեծ մասում չկան էլեկտրականություն, ջրի խմոցներ ու ջուր, ինչը խոչընդոտում է տեղում կենդանիների լիարժեք սնմանը, ինչպես նաև պատշաճ կթի իրականացմանը։ Դեպի արոտավայրեր տանող ճանապարհները գտնվում են շատ վատ կացության մեջ, որի հետևանքով կենդանիները ենթարկվում են սթրեսի։ *Արոտավայրերի բարելավման ճանապարհներ են՝ (ա) արոտավայրերի շրջանառությունը (ռոտացիան), (բ) դաշտերի պարարտացումը գոմաղբով, (գ) խոտաբույսերի ճիշտ ընտրությունը, օրինակ՝ ցորդիմացկուն խոտի տեսակների օգտագործումը։*

14 ՀՀ ԱՎԾ, «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ», տարեկան հաշվետվություններ։ http://www.armstat.am/file/article/bnexen_12_2016.pdf

15 Ներմուծման թվերը չեն ներառում տնային կենդանիների (շուն, կատու) կերը։ Դրանք ներառում են ԱՏԳԱԱ 390990 ծածկագրի տակ գտնվող արտադրանքները։ Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ արտաքին առևտրի տարեկան հաշվետվություններ (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8-նիշ, իսկ 2015 թ-ի համար՝ 10-նիշ դասակարգման), http://www.armstat.am/am/?nid=82&id=1793

Արոտավայրերի կառավարման բարելավման ուղղությամբ զգալի աշխատանքներ են տարվել Համաշխարհային բանկի՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն ծրագրի (CARMAC ծրագիր), շրջանակում (տես 2-րդ ներդիրը)։

Ներդիր 2. Համաշխարհային բանկի CARMAC ծրագիր

Համաշխարհային բանկի՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն ծրագիրը (CARMAC) իրականացվել է 2011-2016 թվականներին։ Ծրագրի բաղադրիչներից էր Համայնքային արոտավայրերի բարելավման և կառավարման համակարգը։ Այդ բաղադրիչով նպատակ էր դրված համայնքային արոտավայրերում ներդնել անասնապահության արդյունավետ ու բնապահպան (կայուն) համակարգ լեռնային այն համայնքներում, որտեղ անասնապահությունը ապրուստի միջոց ստեղծելու հիմնական աղբյուրն է և որտեղ համայնքները շահագրգռություն են ցույց տվել բարելավելու իրենց արոտավայրերի կառավարումը։ Դրա համար պահանջվում էր փոխել արոտավայրերը քայքայող արածեցման գործելակերպը և ներդնել արոտավայրերի ավելի արդյունավետ օգտագործման գործելակերպ՝ բարելավելով կերային մշակաբույսերի արտադրությունը և կենդանիների կերակրման ձևերը, ինչպես նաև բարձրացնելով կենդանիների արտադրողականությունը։

Շատ կարևոր է, որ CARMAC ծրագրում կաթի արտադրության շղթայի նկատմամբ՝ կիրառվել է համալիր մոտեցում ներառելով արոտավայրերի բարելավումն ու կառավարումը։ CARMAC ծրագրի շրջանակում ստեղծվել են Արոտավայր օգտագործողների միություն սպառողական կոոպերատիվներ՝ համաձայն ՀՀ սպառողական կոոպերատիվների մասին օրենքի դրույթների, որոնք արոտավայրերի կայուն (բնապահպան կերպով) օգտագործման և կառավարման հանձնառություն են ստանձնել։ Այդպիսի կոոպերատիվներ ստեղծվելեն Հայաստանի ավելի, քան 91 համայնքներում։ CARMAC-ին հաջորդող CARMAC-2 ծրագրով այդ միջոցառումները շարունակվում են, և նախատեսված է, որ ներգրավված համայնքների թիվը կհասցվի 180-ի։ Արոտների օգտագործման և կառավարման պատասխանատվությունը կոոպերատիվին է փոխանցվել համայնքապետարանների և կոոպերատիվի միջև կնքված պայմանագրի հիման վրա։ Այդ երկու ծրագրերով կոոպերատիվներին տրամադրվել է տեխնիկական աջակցություն՝ զարգացնելու դրանց՝ արոտավայրերի ճիշտ կառավարման կարողությունները։

Համայնքներում բարելավվել են համապատասխան ենթակառուցվածքները, մասնավորապես. արոտավայրերի ոռոգման համակարգեր, արոտավայրեր տանող ճանապարհներ, հովիվների համար կացարաններ, կենդանիների փարախներ։ Կոոպերատիվներին տրամադրվել են տրակտորներ, գութաններ և այլ մեքենաներ և սարքավորումներ, որպեսզի նվազեցվի համայնքների կախվածությունը դրսից գնվող անասնակերից։ Ջուգահեռաբար, կոոպերատիվներին տրամադրվել են նաև կաթի հավաքման և պաղեցման սարքավորումներ։

CARMAC ծրագրի շրջանակում

- Բարեկարգվել են ավելի քան 176,000 հա նախկինում չօգտագործվող արոտավայրեր (ներառյալ ջրախմոցներով համալրումը), որով նվազեցվել է ճնշումը չափազանց շահագործվող այլ արոտավայրերի վրա
- Համայնքներում կովերի կաթնատվությունը բարձրացել է 137 տոկոսով
- Նկատվել է կենդանիների քաշի ավելացում մոտ 127 տոկոսով
- Արոտավայրերի օգտագործման դիմաց հավաքվող վճարումները բարձրացել են 200 տոկոսով
- Անասնապահական արտադրանքի իրացման ծավալն աճել է 268 տոկոսով:

2.2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կենդանիների տեսակներ և գենոտիպ

Կենդանիների բարձր գենոտիպը կաթի արտադրության և ընդհանրապես անասնաբուծության համար հիմնարար գործոն է: Հայաստանում բուծվող տավարի հիմնական տեսակը Կովկասյան գորշն է: Վերջին տարիների ընթացքում իրականացված պետական և մասնավոր ծրագրերի շրջանակներում Հայաստան ներմուծվեցին մի շարք մաքրացեղ կենդանիներ, ներառյալ Հոլշին, Շվից և Սիմենթալ (Ֆլեկվի) ցեղերը:

Ըստ գյուղատնտեսության նախարարության տվյալների՝ երկրում տոհմային տավարաբուծությամբ զբաղվում են շուրջ մեկ տասնյակ տնտեսվարողներ, իսկ անասնապահության մեջ ներգրավված են շուրջ 170 հազար գյուղացիական տնտեսություններ: Կենդանիների գենոտիպի բարելավման նպատակով կառավարությունն աջակցում է բարձրարժեք տոհմային կենդանիների ներմուծմանը «Տավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակում: Բացի այդ, իրականացվել են միջազգային դոնոր կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ ուղղված կենդանիների գենոտիպի բարելավմանն ու արհեստական սերմնավորման խթանմանը:

Այնուամենայնիվ, մթերատվության բարձր ունակությամբ օժտված կենդանիները տնտեսվարողների համար դեռևս այնքան էլ հասանելի չեն: Նրանց ազատ կերպով հասանելի չէ նաև բարձրարժեք տոհմային կենդանիների հետ իրենց կենդանիների տրամախաչման հնարավորությունը՝ վերջիններիս գենային հատկանիշների բարելավման նպատակով: Ներկայում նման կենդանիներ ներմուծվում են կառավարության կողմից (դոնորների աջակցությամբ) և տրամադրվում առանձին տնտեսվարողների: Առկա չէ նման կենդանիների վաճառքի բաց շուկա, և փոքր ու միջին տնտեսվարողները չեն կարող իրենց թույլ տալ ներմուծել նման կենդանիներ:

Կենդանիների վերարտադրության ոլորտում առկա է գիտելիքների և կրթության զգալի բաց: Չնայած մի շարք զարգացման ծրագրերի

իրականացմամբ խթանվեց արհեստական սերմնավորման (ԱՍ) ծառայությունների մատուցումը, այն դեռևս պետք է տարածվի և կիրառվի ողջ երկրի կտրվածքով: Անասնապահների մեծ մասը հակված է վերարտադրությունն իրականացնել ավանդական ճանապարհով՝ օգտագործելով տեղական ցուլերին, որն ավելի քիչ արդյունավետ է:

Բարձր և որակյալ կաթնատվությամբ կենդանիներ ապահովելու համար շատ կարևոր է ունենալ և օգտագործել պատշաճորեն մշակված գենետիկ բարելավման ծրագիր՝ հայաստանյան (դժվար) եղանակային և այլ պայմաններին հարմար կենդանիների ընտրության (սելեկցիայի) միջոցով:

2.3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Կենդանիների պահվածք և խնամք

Հայաստանում ցածրադիր վայրերում տարածված է շուրջտարյա մսուրային պահվածքը, իսկ նախալեռնային և լեռնային գոտիներում՝ արոտամսուրային պահվածքը: Տավարի ամենաստվար գլխաքանակը կենտրոնացված է Գեղարքունիքի և Շիրակի, ապա՝ Արագածոտնի, Սյունիքի և Լոռու մարզերում:

Կաթի արտադրությունը հիմնականում իրականացվում է փոքր տնտեսվարողների կողմից, որոնք պահում են միջինը 3-5 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի: Հատվածային արտադրության արդյունքում առկա են մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացմանը: Խնդիրները կապված են, մասնավորապես գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունավետ փոխանցման, արտադրությունում կիրառվող որակյալ նյութերի հասանելիության, արտադրության սեզոնայնության կառավարման, հիվանդությունների վերահսկման, շուկայում բանակցային թույլ դիրքի հետ:

Հայաստանի փոքր ագարակների մեծ մասում կենդանիների պահվածքի պայմանները բավականին աղքատիկ են, ինչի հետևանքով առաջանում են կենդանիների առողջության և կաթնատվության հետ կապված տարատեսակ խնդիրներ: Գոմերը պատշաճ կերպով նախագծված չեն, դրանք սովորաբար փակ են, ապահովված չեն օդի շրջանառությամբ, պատշաճ կերպով չեն մաքրվում և պահպանվում: Այս իրավիճակն ունի մի շարք բացասական հետևանքներ՝ (ա) կենդանիները ճնշվում ու լարվում են (սթրեսի են ենթարկվում), (բ) շատ հաճախ նպաստավոր պայմաններ են ստեղծվում տարբեր հիվանդությունների համար, (գ) չեն ապահովվում համապատասխան արտադրական պայմաններ, որոնք կապահովեն կաթի պատշաճ որակն ու կաթի հիգիենայի և անվտանգության պահանջվող մակարդակը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ միայն կենդանիների ճիշտ խնամքով ու պահվածքով կարելի է կովերի կաթնատվությունը բարձրացնել առնվազն 20-40 տոկոսով:

Կենդանիների առողջություն

Աղյուսակ 2. Կենդանիների վարակների առկայություն

	2015	2016
Կենդանիների գլխաքանակը, ԸՆԴԱՄԵՆԸ		
Խոշոր եղջերավոր, որից՝	688,553	701,535
Կով	79,305	161,448
Ոչխարներ և այծեր	56,174	2,766
Խոզեր	142,432	174,776
Բրուցելյոզով վարակված կենդանիների թիվը		
Խոշոր եղջերավոր	1,048	1,221
Ոչխարներ և այծեր	609	738
Խոզեր	-	-
Ձիեր	-	-

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, http://www.armstat.am/file/article/f_sec_4_2016_3.pdf

Որպես գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծառայությունների մի մաս, կառավարությունը ֆինանսավորում է անասնահամաճարակային կայուն իրավիճակ ապահովելու հետ կապված ծրագրեր: Յուրաքանչյուր տարի հանրապետությունում իրականացվում է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիր, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Նշված ծրագրով իրականացվում են մի շարք հիվանդությունների նկատմամբ ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ: Վերջին տարիներին Հայաստանում կենդանիների շրջանում գրանցված վարակիչ միակ հիվանդությունը բրյուցելոզն է (տես 2-րդ աղյուսակը): Մյուս վարակիչ հիվանդությունները, ինչպիսիք են սիբիրախտը, տուբերկուլյոզը, Ա, Օ և Ասիական դաբաղը, բացակայում են:

Այդ ծրագրերը շատ կարևոր են համաճարակների կանխման համար, սակայն տնտեսվարողները նշում են, որ որոշ դեպքերում պատվաստման գործընթացի ոչ պատշաճ կառավարումը բացասաբար է ազդում անասնապահության վրա: Մասնավորապես, խնդիրներ են լինում՝ կապված պատվաստման ժամանակահատվածի ոչ պատշաճ ընտրության հետ: Օրինակ՝ երբեմն անասնաբույժները կենդանիների պատվաստումը կատարում են կովերի հղիության ընթացքում, որը բերում է վիժումների: Նմանատիպ խնդիրներից կարելի է խուսափել, եթե հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները պատշաճ կերպով ծրագրվեն և կառավարվեն:

2.4. ԿԹԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ (ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ) ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Կաթի արտադրությունը հիմնականում իրականացվում է փոքր ագարակներում, որոնց մեծ մասում պահվում է 3-5 կով: Հատվածական փոքր տնտեսությունների գերակշռությունը բերում է կաթի հավաքման և կաթի պատշաճ ու կայուն որակի պահպանման հետ կապված խնդիրների: Տնտեսվարողների շրջանում բացակայում են գիտելիքները պատշաճ անասնապահության, կթի և սննդի անվտանգության գործընթացների վերաբերյալ:

Վերջերս նախաձեռնված մի շարք ծրագրեր՝ ուղղված կաթի հավաքման կետերի և կաթի շուկայահանման կոոպերատիվների հիմնադրմանը, կարևոր քայլ են կաթի հավաքման և որակի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ: Այնուամենայնիվ, կենդանիների ոչ պատշաճ կերակրումը, խնամքն ու կթի գործելակերպերը դեռևս գերակշռում են կաթի արտադրության հայկական շուկայում՝ հանգեցնելով արտադրողականության նվազեցման (տե՛ս 3-րդ աղյուսակ) և կաթի ցածր որակի:

Աղյուսակ 3. Կովի կաթնատվության միջազգային համեմատություն, 2014

Երկիր	Տարեկան կով/լիտր կաթ
Իսրայել	12,688
Չեխիա	7,913
Գերմանիա	7,541
Իտալիա	6,032
Ուկրաինա	4,509
Բելառուս	4,387
Ռուսաստան	4,030
Թուրքիա	3,030
Իրան	2,781
Հայաստան	**2,061**
Ղրղզստան	1,895
Ղազախստան	1,770
Ադրբեջան	1,401
Վրաստան	1,008

Ձեռքով կիթը կաթի աղտոտման, ինչպես նաև կենդանիների և մարդկանց շրջանում հիվանդությունների (մաստիտ, բրյուցելոզ) տարածման հիմնական աղբյուրներից մեկն է: Հարցի լուծման ճանապարհը փոքր շարժական կթի մեքենաների կիրառումն է: Այդ առումով կարևոր է փոքր տնտեսություններին աջակցել նման մեքենաների ձեռքբերման և կիրառման հարցում: Ներկայում կթի փոքր մեքենաները շատ թանկ չեն: Դրա ծախսը կարելի է նվազեցնել, եթե գյուղում մի քանի տնտեսվարողներ համատեղ օգտագործեն մեկ մեքենա:

2.5. ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պանրարտադրության ճյուղի հետագա զարգացման տեսակետից, ի լրումն այլ միջոցների, շատ կարևոր է բարձրացնել կովերի կաթնատվությունը:

Հայաստանում կաթնատվության մակարդակը դեռևս շարունակում է մնալ ցածր: Մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը (ըստ ՀՀ Վիճակագրության ծառայության տվյալների) 2100 լիտր կաթ է, ինչը միջազգային համեմատության մեջ ցածր ցուցանիշ է (տե՛ս 3-րդ աղյուսակը):[16] Ըստ տնտեսվարողների՝ իրականում կաթնատվությունն ավելի ցածր է (շուրջ 1500 լիտր): Ըստ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների՝ կովի կաթնատվության 2014 թվականին գրանցված մակարդակով Հայաստանը 198 երկրների մեջ 81-րդ տեղում է:

2.6. ԿԱԹԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Մննդամթերքի անվտանգության և որակի պահպանման տեսակետից շատ կարևոր է, որ կաթի հավաքման կետերում կատարվի որակի պատշաճ հսկողություն: Կաթի շուկայական կյանքի տևողության վրա խիստ բացասաբար է անդրադառնում կաթի աղտոտվածությունը զանազան նյութերով. գոմաղը, սոմատիկ բջիջներ, հակաբիոտիկներ, հորմոններ, սոդա և այլն, ինչպես նաև կաթի փոխադրման և պահպանման սառը շղթայի բացակայությունը:

Կարևոր է, որ կաթի հավաքման կետերը հագեցած լինեն կաթի բաղադրության և հատկությունների քննության սարքավորումներով: *Այդպիսի սարքերով հագեցվածությանը նպաստելու համար կարելի է աջակցություն տրամադրել սարքերի գնման համար, եթե կաթի շուկայի մասնակիցները համաձայնության գան կաթի գինը որոշել ոչ միայն քանակի, այլ նաև որակական հատկանիշների հիման վրա:*

Սարքերի և համալիրների ներմուծում

Հայաստանում կատարելագործված, բարձր տեխնոլոգիական անասնապահական համալիրների, ինչպես նաև կաթի հավաքման ու վերամշակման սարքավորումները ներմուծվում են: Այդուհանդերձ, ոլորտում ներդրումների խթանման համար խիստ կարևոր է ապահովել պարզ և դյուրին ներմուծման ընթացակարգեր և պահանջներ: Ներկայում անհրաժեշտություն կա օրենսդրական դաշտի հստակեցման՝ մաքսային ձևակերպման նպատակով սարքավորումների դասակարգման և դրանց հետ կապված մաքսային և հարկային ընթացակարգերի առումով: Ներմուծման հետ կապված կանոնակարգային և ընթացակարգային որոշ կարևոր հարցեր քննարկված են ստորև:

16 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ:

Տոհմային կենդանիների (ներառյալ՝ խոշոր եղջերավորներ, ոչխարներ և այծեր) և որոշ սարքավորումների (կաթի հավաքման սարքեր, կաթի սեպարատոր) ներմուծումը ազատվել է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ):[17] Դա կարևոր արտոնություն է և արդյունավետորեն կիրարկելու դեպքում դրական ազդեցություն կարող է ունենալ գյուղարտադրության ոլորտում ներդրումների ներգրավման և զարգացման վրա: Տնտեսվարողները նշում են, որ կաթի (պանրի) արտադրության համալիրների և սարքավորումների ներմուծման մաքսային ձևակերպումների ժամանակ հաճախ մաքսային մարմինը պահանջում է համալիրները դասակարգել և ձևակերպել ոչ թե որպես ամբողջություն, այլ մաս-մաս: Դրա հետևանքով փոխվում են ապրանքի մաքսային դասակարգման ծածկագիրը և ապրանքի նկատմամբ կիրառվող մաքսային և հարկային ռեժիմները, որի պատճառով զգալիորեն բարձրանում են վճարվելիք մաքսային տուրքերն ու հարկերը: Նկատենք, որ ԱԱՀ-ի այս արտոնությունը չի տարածվում կաթի և պանրի արտադրությունում օգտագործվող որոշ մեքենաների և սարքերի վրա, մասնավորապես՝ *կթելու սարքավորում, կաթի մշակման սարքեր և կերի պատրաստման սարքեր*:[18]

Կա արտադրական համալիրների և սարքավորումների ներմուծման ևս մեկ կարևոր առանձնահատկություն և հանգամանք. մեծ և ծավալուն համալիրները և դրա բաղադրիչ մասերը հաճախ կարող է հնարավոր չլինել պատրաստել և մատակարարել միաժամանակ և մեկ խմբաքանակով: Զուտ տեխնիկական տեսակետից ներդրողի համար կարող է նաև նպատակահարմար լինել համալիրը ներմուծել մաս-մաս՝ ելնելով շինարարական աշխատանքների հերթականությունից: Այսինքն՝ համալիրը հաճախ կարող է ներմուծվել մի քանի խմբաքանակներով և ոչ միաժամանակ: Այս պարագայում ժամանակի և դրամական միջոցների անհարկի կորուստներից խուսափելու համար շատ կարևոր է, որ ներմուծման հետ կապված մաքսային և այլ ձևակերպումները և ընթացակարգերը նախագծվեն այնպես, որ այդ հանգամանքները հնարավորինս հաշվի առնվեն:

Տնտեսվարողները նշում են, որ ներմուծման ընթացքում հաճախ հաշվի չի առնվում համալիրների ներմուծման այդ առանձնահատկությունը, և մաքսային մարմինը պահանջում է յուրաքանչյուր խմբաքանակը ձևակերպել ոչ թե որպես համալիրի մաս, այլ որպես առանձին և անկախ ներմուծում: Եթե ներմուծողը, այնուամենայնիվ, ցանկանում է ձևակերպել այն որպես համալիր, ապա պետք է արդեն ժամանած մասը տեղակայի պահեստում և սպասի մնացած խմբաքանակներին, մինչև ամբողջությամբ համալրումը: Այդ դեպքում առաջանում են տուգանքներ ձևակերպումն ուշացնելու համար, ինչպես նաև լրացուցիչ ծախսեր պահեստավորման համար:

17 «ՀՀ օրենք կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից»:

18 Այդ սարքավորումների ԱՏԳԱԱ ծածկագրերն են, համապատասխանաբար, 8434100000, 8434200000 և 8436100000:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ **Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ)** անդամակցությունից հետո մաքսային ձևակերպման ընթացակարգերում տեղի է ունեցել կարևոր փոփոխություն, որը կարող է օգնել լուծելու ներմուծմանն առնչվող որոշ խնդիրներ: Մասնավորապես, նոր ընթացակարգերով հնարավոր է իրականացնել համալիրի նախնական դասակարգում: ՀՀ մաքսային կարգավորման մասին 64-րդ հոդվածի համաձայն, տնտեսվարողները կարող են «Չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ ապրանքը, որի ներմուծումը կամ արտահանումը նախատեսվում է իրականացնել Միության մաքսային օրենսգրքի 170-րդ հոդվածով սահմանված ժամկետները չգերազանցող ժամանակահատվածում՝ մի քանի խմբաքանակներով, կարող է հայտարարագրվել ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրով՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի որոշման առկայության դեպքում»: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով (170-րդ հոդված) ժամանակավոր պահպանման համար նախատեսված է 2- 4 ամիս: Այս փոփոխության կիրարկումը կարող է դյուրինացնել սարքերի ներմուծումը, եթե տնտեսվարողը հնարավորություն ունենա առանձին խմբաքանակները փոխադրել իր տարածք (և ստիպված չլինի մեծ ծախսեր կատարել մաքսային պահեստում պահպանելու համար՝ մինչև մյուս խմբաքանակների ժամանումը):

Որպեսզի տնտեսվարողները կարողանան արդյունավետորեն օգտվել ներդրումների համար կառավարության սահմանած արտոնություններից կամ հատուկ ընթացակարգերից, հարկավոր է պատշաճ աշխատանքներ տանել համապատասխան դրույթների հստակեցման կամ շտկման, ինչպես նաև տնտեսվարողների շրջանում իրազեկվածության բարձրացման և բացատրական աշխատանքներ տանելու (օրինակ, մաքսային և հարկային ընթացակարգերի արտոնությունների վերաբերյալ, որոնք սահմանվել են ԵԱՏՄ-ի Մաքսային օրենսգրքի 170-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1118-Ն, 1119-Ն և այլ որոշումներով, Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին ՀՀ օրենքով, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից):

Կարևոր է նկատել նաև, որ **ԵԱՏՄ** անդամակցելու շրջանակում, ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխություն կլինի կերի պատրաստման սարքերի առնչությամբ. դրույքաչափը բարձրացվել և դարձել է 5% (նախկին 0%-ի փոխարեն):[19] Ներմուծման մաքստուրքի դրույքաչափը զրո է կաթի հավաքման և պաղեցման սարքերի, կաթի սեպարատորի, կթի սարքավորումների, կաթի մշակման սարքերի նկատմամբ:

Հայաստանի՝ ԵԱՏՄ շրջանակում երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքի դրույքաչափերի ժամանակացույցի լրացուցիչ մանրամասներ կան 1-ին հավելվածում:

19 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին):

2.7. ԿԱԹԻ ՇՈՒԿԱ

Հայաստանում կաթի գինը որոշվում է շուկայական գործոններով: Կաթի գները պետության կողմից չեն կարգավորվում, իսկ կաթի արտադրությունը չի սուբսիդավորվում:

2016 թվականին արտադրողի կողմից կաթի իրացման տարեկան միջին գինը եղել է 137 ՀՀԴ մեկ լիտրի դիմաց (5-րդ պատկեր): Կաթ արտադրողների հիմնական մտահոգություններից մեկն այն է, որ կաթի գինը ցածր է շահավետ արտադրություն կազմակերպելու համար: Ընդհանուր առմամբ, միջազգային համեմատության մեջ, արտադրողի կողմից կաթի իրացման գինը Հայաստանում ցածր է, սակայն նշենք, որ կաթի գների վրա միջազգային ասպարեզում հաճախ կարևոր ազդեցություն է ունենում պետական միջամտությունը:

Հայաստանում կաթի շուկան բնութագրվում է, նախ, հատվածական փոքր արտադրողների գերակայությամբ: Կաթը մթերվում է երկրի տարբեր կետերում տեղակայված՝ մեծ թվով կաթի հավաքման կետերում: Դա առաջացնում է լրացուցիչ լոգիստիկ դժվարություններ և բարձրացնում է փոխադրման ծախսերը և, հետևաբար, կաթի ինքնարժեքը:



Պատկեր 5. Աղբյուր՝ ԱՎԾ, «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում», «Պարենային ապահովություն և աղքատություն»

Կաթի որակի և գնագոյացման վրա ազդում են նաև հետևյալ հանգամանքները: Փոքր անասնապահների բանակցային դիրքը շուկայում թույլ է և նրանք խիստ կախվածության մեջ են միջին ու խոշոր վերամշակողների թելադրած շուկայական գնից: Բացի այդ, կաթ արտադրողների և վերամշակողների միջև հարաբերությունները հիմնականում պայմանագրային չեն, և տնտեսվարողները հաճախ դժվարություններ ունեն վերամշակողներից կաթի դիմաց վճարումները հավաքագրելիս: Այս վերջին խնդիրը շուկայում սուր է և շուկայի աշխատանքի վրա բացասաբար ազդող լուրջ գործոն է:

Պետությունը կարող է ապահովել պայմանագրեր կնքելու և կիրարկելու պարզ ու դյուրին մեխանիզմներ, ինչպես նաև վեճերի կարգավորման մեխանիզմներ (արբիտրաժ կամ այլ մեխանիզմներ): Օրինակ՝ կարող են սահմանվել գյուղատնտեսական վեճերի կարգավորման համար հատուկ ընթացակարգեր

(ինչպիսին, օրինակ՝ հաշտարարի ինստիտուտն է, որը Հայաստանում արդեն գործում է ֆինանսական ծառայությունների ոլորտում):[20] Պայմանագրային գյուղարտադրության խրախուսման համար կառավարությունը կարող է նաև գործարկել մի շարք այլ միջոցներ, ինչպիսիք են. (ա) տեխնոլոգիաների և տնտեսության կառավարման գիտելիքների և հմտությունների ուսուցում մատակարարման շղթայի բոլոր մակարդակներում, (բ) գյուղատնտեսական խորհրդատվություն և հետազոտական աշխատանքներ պայմանագրային հիմունքներով արտադրվող ապրանքների վերաբերյալ (օրինակ՝ ապահովել, որ անասնապահների արտադրանքը համապատասխանի վերամշակողների համար ընդունելի՝ որակի և անվտանգության ստանդարտներին), (գ) ագրոբիզնեսի բնագավառի տարբեր հարթակներում խթանել պայմանագրային գյուղարտադրությունը:

Դրան զուգահեռ շուկայում գործում է կաթի գնագոյացման գործելակերպ, որով խաթարվում է կաթի գին-որակ ճիշտ հարաբերակցությունը: Գին-որակ ճիշտ հարաբերակցությունը շատ կարևոր է շուկայի մասնակիցներին արդյունավետ և որակյալ լինելու ազդակներ տալու համար: Ներկայում կաթի գինը սահմանվում է յուղայնության մակարդակի հիման վրա, և անտեսվում է սպիտակուցների պարունակությունը, մանրէաբանական աղտոտվածությունը, սոմատիկ բջիջների պարունակությունը, հակաբիոտիկների առկայությունը և որակական այլ ցուցանիշներ, որոնք էապես ազդում են կաթի որակի վրա: Կաթի և կաթնամթերքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգում Կառավարությունը սահմանել է հում կաթի երեք կարգեր (բարձր, առաջին և երկրորդ), հիմնվելով կաթի մանրէաբանական աղտոտվածության մակարդակի վրա: Սակայն շուկայում այդ դասակարգումը գործնականում չի օգտագործվում գնագոյացման համար:[21] Կաթի ցածր որակը բերում է նաև կաթնամթերքի ցածր որակի, որի հետևանքով նվազում է նաև վերամշակողների

20 Միջազգային ասպարեզում կիրառվում են նաև այլ մեխանիզմներ, օրինակ՝ «Մալավիի կառավարությունը ստեղծել է հատուկ ուղեցույց գյուղատնտեսական պայմանագրերի վերաբերյալ վեճերի կարգավորման համար և առաջարկել Աշխատանքի նախարարությանը ստանձնել հաշտարարի դեր: Նմանապես, խոշոր ծավալի շաքար արտադրող շատ երկրներում ստեղծվում են հատուկ կառույցներ, որոնք ծառայում են որպես միջնորդ շաքարեղեգ արտադրողների և շաքար արտադրողների վեճերի դեպքում: Կանադայում հազարավոր կարտոֆիլ աճեցնողներ, ովքեր աշխատում են մեկ գնորդի հետ պայմանագրային հիմունքով, բանակցություն վարում են Նոր Բրունսվիկի կարտոֆիլի գործակալության միջոցով: Բոլոր կարտոֆիլ արտադրողները պարտադիր պետք է միանան գործակալությանը:», Աղբյուր՝ FAO, Contract Farming, Partnerships for Growth, 2001.

21 ՀՀ կառավարություն 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1925-Ն որոշում, որտեղ դասակարգումը հիմնված է կաթի մեջ մանրէների քանակի վրա, ներառյալ՝ ՄԱՖԱՄ՝ մեզոֆիլային աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ, ԱՑԽՄ՝ աղիքային ցուպիկների խմբի մանրէներ, ԳԱՄ՝ գաղութ առաջացնող մանրէներ, սալմոնելներ և սոմատիկ բջիջներ:

մրցունակությունը և շահույթը:[22]

Կաթի սեզոնայնությունը և կաթ արտադրողների շրջանում չոր կաթի արտադրության հնարավորությունների բացակայությունը նույնպես ազդում են կաթ արտադրողների և մշակողների միջև հարաբերությունների վրա: Կաթի փոշու արտադրությունը, օրինակ, հնարավորություն է տալիս կաթի առատ ժամանակահատվածում այն վերամշակել ու պահեստավորել՝ հետագայում վաճառելու կամ օգտագործելու նպատակով: Դրանով կարելի կլիներ խուսափել առատ սեզոնին կաթի գնի կտրուկ նվազման խնդրից:

Հայաստանյան անասնապահների (կաթ արտադրողների) շրջանում, որպես կանոն, բացակայում են կաթի փոշու արտադրության և պահեստավորման կարողությունները, սակայն վերամշակող առնվազն վեց գործարաններ ունեն կաթի փոշու արտադրության կարողություններ: Ըստ Գյուղատնտեսության նախարարության գնահատականի՝ չոր կաթի արտադրության ներկա կարողությունների արդյունավետ օգտագործման դեպքում կարելի է բավարարել չոր կաթի ներքին պահանջարկը: Չոր կաթի տարեկան կարողությունը միայն սեզոնի ընթացքում, կաթի անընդհատ մատակարարման պարագայում, կարող է հասնել 3000 տոննայի: Սակայն ներկայում չոր կաթի հայաստանյան արտադրությունը մրցունակ չէ, և տեղական արտադրության չոր կաթն ավելի թանկ է՝ Ուկրաինայից և այլ երկրներից ներմուծվող չոր կաթի ցածր գների համեմատ:



Գծապատկեր 6. Աղբյուր՝ FAO STAT,
http://www.fao.org/faostat/en/#compare

22 Կա կարծիք, որ մյուս կողմից էլ՝ չոր կաթի օգտագործումը վերամշակողներին տալիս է շուկայում պայմաններ և գին թելադրելու առավելություն կաթ արտադրողների նկատմամբ: Օրինակ՝ ձմռան ընթացքում նվազում է կաթի մատակարարումը, որը, ենթադրաբար, պետք է հանգեցներ գնի բարձրացման: Սակայն, ըստ տնտեսվարողների, վերամշակողները հաճախ օգտագործում են ավելի էժան հումք՝ չոր կաթ, ինչը նվազեցնում է տեղական կաթի գինը:

Նկատենք, որ չոր կաթի արտադրությանն այլընտրանք կարող է լինել UHT տեխնոլոգիայով (ուլտրաջերմային մշակման տեխնոլոգիա) կաթի արտադրությունը (մշակումը), որը լայն կիրառություն ունի շատ զարգացած երկրներում: ***Դրա համար կարևոր է, որ հում կաթն ունենա բարձր որակ:*** *UHT տեխնոլոգիան ներառում է կաթի բարձր ջերմային մշակում (ավելի, քան 135°C), որով վերացվում են բոլոր մանրէները, և կաթը կարող է երկար ժամանակ պահվել ու օգտագործելի լինել.*[23]

Աղյուսակ 4. Կաթի համաշխարհային գներ, ԱՄՆ դոլար/100 կգ

	հունվ.	փետր	մարտ	ապր.	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտ.	հոկտ.	նոյեմբ.	դեկտեմ.
2006	23.9	24.0	23.9	23.3	23.0	22.8	22.9	23.1	23.2	24.0	25.9	29.1
2007	30.3	32.4	34.1	37.1	40.1	42.8	49.1	51.9	52.1	52.4	53.7	52.8
2008	50.2	47.9	46.9	45.0	45.3	45.6	45.3	42.0	36.8	32.9	28.0	24.4
2009	20.3	19.3	20.2	20.8	21.5	21.3	22.0	24.2	28.5	32.5	40.7	41.7
2010	37.8	36.1	36.2	39.8	41.3	39.5	37.6	37.2	38.9	39.8	40.1	40.7
2011	44.2	47.7	48.2	46.1	46.5	46.7	45.4	43.9	42.5	40.8	40.6	41.2
2012	41.6	40.9	39.5	37.0	35.2	34.3	33.9	35.2	38.0	39.3	39.5	39.9
2013	40.2	41.2	46.0	54.9	52.0	49.3	49.5	50.3	50.5	50.5	50.9	53.4
2014	54.4	56.0	54.7	49.5	46.8	44.6	43.8	39.2	35.9	34.8	33.3	33.0
2015	33.6	36.8	34.9	32.1	30.4	28.7	23.2	24.0	27.2	28.8	26.6	26.4
2016	25.4	24.1	22.4	22.2	22.1	24.2	25.1	28.7	33.3	34.1	34.8	35.8
2017	36.1	37.2	35.6	34.7								

Աղբյուր՝ International Farm Comparison Network (IFCN) Data Table: World milk price i USD / 100 kg ECM (Energy Corrected Milk: 4% fat, 3.3% protein) ***http://ifcndairy.org/about-ifcn-new/ifcn-dairy-researnch-center-method/; http://www.ifcndairy.org/en/output/prices/milk_indicator2013.php***

Կաթի շուկայի ներկա պարագաներում փոքր տնտեսվարողները գոյատևելու նպատակով հաճախ կիրառում են հետևյալ ռազմավարությունները.

- ուղղակիորեն կամ միջնորդների միջոցով կաթի վաճառք վերջնական սպառողներին՝ քաղաքների փողոցներում ուղղակի վաճառքի, տներում կամ գյուղատնտեսական շուկաներում վաճառքի միջոցով,
- կաթի ինքնուրույն, տնայնագործ վերամշակում և պանրի (մածունի կամ այլ կաթնամթերքի) ուղղակի կամ միջնորդավորված վաճառք փոքր խանութներին կամ հանրային սննդի կետերին, կամ ուղղակի վաճառք

23 Հայաստանում որոշ խոշոր տնտեսվարողներ (օրինակ՝ Մարիաննա ընկերությունը) արդեն սկսել են օգտագործել *UHT* տեխնոլոգիա:

քաղաքների փողոցներում, տներում կամ գյուղատնտեսական շուկաներում: Նկատենք, որ տնայնագործ, անանուն պանիրներ վաճառվում են նույնիսկ որոշ խոշոր սուպերմարկետներում:

- վաճառք փոքր տնայնագործ պանրագործներին, ովքեր վերամշակում են կաթը և շուկայահանում:

Այդ կերպ պատրաստված և շուկայահանված պանիրը (և այլ մթերքը), ինչպես և կարելի է սպասել, սովորաբար ցածր որակ և ցածր գին ունեն: Ըստ տնտեսվարողների, շուկայում առկա այդ երևույթը (տնայնագործ պանրի երևույթը) ունի մի քանի բացասական հետևանքներ: Մասնավորապես, այդ պարագայում կաթ արտադրողը շահագրգռված չի որակյալ կաթ արտադրելու և կաթնատվությունը բարձրացնելու: Արդյունքում տուժում են նաև պանիր արտադրողները, քանի որ կորցնում են կաթի գինն ու որակն իրար ճիշտ կապելու հնարավորությունը:

Կաթի շուկայի արդյունավետությունը բարձրացնելու համար շատ կարևոր է փոքր արտադրողների միջև համագործակցությունը: Մասնավորապես, Հայաստանում վերջին տարիներին կաթի հավաքման կետերի ու կաթի շուկայահանման կոոպերատիվների հիմնադրումը և տարածումը շատ կարևոր դեր կատարեց ճյուղի զարգացման գործում: Սակայն կաթի արտադրության և հավաքման ներկա կարողությունները դեռևս անբավարար են պանրի (ինչպես նաև այլ կաթնամթերքի) ճյուղում առկա խնդիրների հաղթահարման և հետագա զարգացման, ինչպես և արտահանման խթանման համար:

2.8. ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կաթի, պանրի և այլ կաթնամթերքի արտադրության բոլոր փուլերում առկա է արտադրության արդյունավետ տեխնոլոգիաների և գործելակերպերի վերաբերյալ գիտելիքների լուրջ պակաս, ինչը զգալիորեն խոչընդոտում է ոլորտի զարգացմանը: Սա մասնավորապես ներառում է կենդանիներ պահելու, դրանց խնամքի և վերարտադրության, կերակրման, ագարակի կառավարման և կթի տեխնիկայի, որակի և անվտանգության կառավարման վերաբերյալ գիտելիքների և հմտությունների պակասը: Դա նույնությամբ վերաբերում է *բոլոր չափերի արտադրողներին*, բայց հատկապես՝ փոքր ու միջին արտադրողներին:

Ճյուղի հետագա զարգացման համար ներկայում անհրաժեշտ է զարգացնել նաև արտաքին շուկաների, դրանցում արտահանման հնարավորությունների, ինչպես նաև բաշխման ցանցերի զարգացման վերաբերյալ գիտելիքներն ու կարողությունները:

Միաժամանակ, արդյունավետ շուկայահանման համար *փոքր ու միջին արտադրողներին* անհրաժեշտ է բարձրացնել գիտելիքների մակարդակը, որոնք պահանջվում են համատեղ շուկայահանման, ինչպես նաև առևտրի և ապրանքափոխադրման լոգիստիկայի կազմակերպման համար:

2.9. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Առաջատար տեխնոլոգիաներով համալիրների և սարքավորումների ներդրման և արտադրության ընդլայնման համար պահանջվում են զգալի ֆինանսական ներդրումներ: Ընդ որում՝ ներդրումների համար հաճախ պահանջվում է երկարաժամկետ փող:

Հայաստանում գործարարների համար դժվար է գտնել երկարաժամկետ վարկեր: Վարկերի դժվարամատչելիությունը լուրջ խանգարող հանգամանք է ներդրումների խթանման տեսակետից:

Մատչելի չեն նաև ֆինանսավորման այլ միջոցներ, ինչպիսին են լիզինգը, ծրագրերի ֆինանսավորումը, վարկային գծերի տրամադրումը և այլն:

Պատկեր 7. Պանրի արտադրության և արտահանման շղթա



3. ՊԱՆԻՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

3.1. ԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՆԻՐԱՏԵՍԱԿՆԵՐ

Հայաստանում արտադրվում են կովի, այծի և ոչխարի երկու տասնյակից ավելի տեսակների պանիրներ (և շատ փոքր, ոչ առևտրային քանակությամբ գոմեշի պանիր): Հայաստանյան լեռնային մարգագետինները հնարավորություն են տալիս բարձր հատկանիշներով կաթ և կաթնամթերք ստանալու: Պանրի որոշ ավանդական տեսակներ, օրինակ «Չանախը» կամ «Լոռին», արտադրում են ողջ հանրապետությունում, իսկ պանրի որոշ տեսակներ բնորոշ են առանձին շրջանների: Շատ պանիրների պատրաստման բաղադրատոմսեր, արդեն մի քանի հարյուրամյակ, մնացել են անփոփոխ (տե՛ս 5-րդ աղյուսակ):

Աղյուսակ 5. Հայաստանում արտադրվող պանրատեսակներ

Կովի պանիր	Այծի պանիր	Ոչխարի պանիր
Լոռի Չանախ Չեչիլ	Ֆետա (Զոր անունով) Ալպիական ֆետա, ձեթի մեջ Եղեգնաձոր պանիր (կավե կճուճների մեջ)	Պեմաջիո (Ֆետայի նման պանիր)
Սուլուգունի Գաուդա Մոցարելլա Չեդար Թոմ (Tomme) կիսապինդ պանիր, ալպիական գոտու զտած կաթի պանիր՝ Վարդենիս անվամբ	Հորած պանիր (Եղեգնաձոր) Լակտիկ պանիր (Շեվրե անունով), բարակ սպիտակ բորբոսով Այծի և կովի կաթով պանիր (Գլաձոր) Թոմի պանիր (սպիտակ բորբոսով)	Կապույտ պանիր (Ազատ) Փափուկ կապույտ պանիր
Մասկարպոնե Էմենտալ Կամեմբեր Էդամ Բորբոսով (կապույտ) պանիր Խավարտի Կոլբի պանիր Ռիկոտա		
Տաշիր Կաթե պանիր (կանաչակապտավուն բորբոսով)		

Պատկեր 8. Հայաստանում արտադրվող պանրի տեսակներ (փոխառված է CARD-ից)

3.2. ՊԱՆԻՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ

Հայաստանում պանիր արտադրում են ինչպես խոշոր ձեռնարկությունները, այնպես էլ ոչ մեծ արտադրամասերը կամ ընտանեկան փոքր տնտեսությունները: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ Հայաստանում կաթի վերամշակման ճյուղում գործում են 81 ձեռնարկություն, որոնցից պանիր արտադրում են 50-ը: Ներկա արտադրական հզորությունները հնարավորություն են տալիս վերամշակելու տարեկան շուրջ 490 հազար տոննա կաթ: Արդյունաբերարտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը կազմում է շուրջ 1900 հոգի:[24] Այս տվյալները *չեն ներառում* բազմաթիվ մանր տնայնագործ պանրարտադրողներին:

Հայաստանյան շուկայում գործող հանգամանքներով պայմանավորված, կաթի ապրանքայնության միջին մակարդակը մոտ 60 տոկոս է, այսինքն՝ գյուղացիական տնտեսություններն իրացնում են արտադրված կաթի 60 տոկոսը, իսկ մնացած 40 տոկոսը սպառվում կամ վերամշակվում է

24 Հղում Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական վեբկայք (վերջին մուտքը՝ 2017թ. փետրվարի 16):

հենց գյուղացիական տնտեսությունների կողմից:[25] Այլ կերպ ասած, կաթի վերամշակման ներկայում օգտագործվող հզորությունը Հայաստանում, առանց տնայնագործական վերամշակման, մոտ 450 հազար տոննա է (առանց զանազանելու, թե ինչ կաթնամթերք է արտադրվում), գումարած ներմուծվող կաթի փոշու կամ խտացրած կաթի վերամշակման համար պահանջվող հզորությունը:[26] Ըստ էության՝ հաշվառված կաթնամթերք արտադրողների կարողությունը մոտավորապես հավասար է վերամշակման համար մատակարարվող կաթի ծավալին: Ընդ որում՝ գրանցված և չգրանցված (ֆորմալ և ոչ ֆորմալ) պանիր արտադրողները շուկայում մրցակցում են կաթի համար: **Այս պարագայում պանրի արտադրության ճյուղի հետագա զարգացման համար շատ կարևոր է դառնում կաթի և պանրի (ինչպես նաև այլ կաթնամթերքի) արտադրական կարողությունների զուգահեռ և համաժամանակյա ընդլայնումը:**

Պանրի արտադրության ճյուղում ***ոչ ֆորմալ հատվածի*** կշիռն էական է: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ 2016 թվականին Հայաստանում արտադրվել է 22,316 տոննա պանիր, որից 16,000 տոննան, այսինքն՝ 72 տոկոսը, արտադրել են ոչ ֆորմալ հատվածը կազմող մանր ու փոքր տնտեսությունները: Ֆորմալ հատվածի ներսում, որը ներառում է 50 տնտեսվարող, 10 ամենամեծ արտադրողներին բաժին է ընկնում ընդհանուր ***ֆորմալ*** արտադրության 90 տոկոսը (տես 9-րդ պատկերը):



Պատկեր 9. Պանրի արտադրության ճյուղի կառուցվածք. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ

25 Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական գյուղացիական տնտեսությունների կողմից, ԱՎԾ, 2015, http://www.armstat.am/file/article/iracum_2015.pdf

26 2015 թվականին արտադրվել է 728.6 հազար տոննա կաթ, որի 60 տոկոսը կազմում է 437.2 տոննա, այսինքն՝ 2015 թվականին, բացի տնայնագործական մանր վերամշակումից և սեփական սպառումից, սպառվել և վերամշակվել է 437.2 տոննա կաթ:

Ժամանակի ընթացքում փոքր վերամշակողների մի մասին կփոխարինեն խոշոր վերամշակողները: Սակայն շուկայում զարգացման հնարավորություններ ունեն նաև փոքր արտադրողները, որոնք կարող են համագործակցության (կոոպերացիայի, միության) միջոցով գրավել շուկայի որոշակի հատվածներ (սեգմենտներ) և հաջողությամբ մրցակցել խոշոր արտադրողների հետ:

Նմանապես, մանրածախ առևտրի փոքր տնտեսվարողները նույնպես կարող են համագործակցության միջոցով մրցակցել սուպերմարկետների խոշոր ցանցերի հետ, ինչպես նաև մասնագիտացված ձևով սպասարկել շուկայի որոշակի հատվածներ: Այս առումով կարևոր է դասընթացների միջոցով տնտեսավարողների մոտ զարգացնել շուկայի համապատասխան հատվածներ գտնելու և դրանք սպասարկելու հմտություններ:

Պանիր արտադրող տնտեսվարողների հետ քննարկումների և ուսումնասիրության ընթացքում կատարված դիտարկումների արդյունքում նկատելի են հաջողությամբ զարգացող ձեռնարկությունների որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, հաջողությամբ զարգացող ձեռնարկությունները, որպես կանոն, շրջահայացորեն են պլանավորում իրենց արտադրության աճը և զարգացումը, առանց խիստ անհրաժեշտության և հիմնավորման վարկեր չեն վերցնում, պատրաստակամ են սովորել գործարար կառավարման տեխնոլոգիաներ, ներդրումներ են անում նոր արտադրանքի մշակման, տեխնոլոգիայի և մարդկանց զարգացման ուղղությամբ: Ճյուղում նկատված ձախողումների կամ ցածր կատարողականի հիմնական պատճառներից են գործարար և ֆինանսական անարդյունավետ կառավարումը և թույլ շուկայավարությունը, ինչպես նաև բանիմաց մասնագետների սակավության հետ կապված խնդիրները:

3.3. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտադրատեսակների բազմազանության առումով, Հայաստանում արտադրվում և արտահանվում են ինչպես ավանդական սպիտակ, աղաջրային պանիրներ (Լոռի, Չանախ), այնպես էլ դեղին ու կիսադեղին (Գառուդա, Էմենտալ, Չեդար) պանիրներ, բորբոսով պանիրներ, Մոցարելա և այլն:

Տեխնոլոգիական հագեցածություն

Խոշոր պանիր արտադրողների մեծ մասը ներդրել է արդի բարձր արտադրական տեխնոլոգիաներ և համապատասխան սարքավորումներ ու համակարգեր: *Սակայն փոքր ու միջին պանիր արտադրողների* մեծ մասն օգտագործում է ցածրակարգ սարքավորումներ և տեխնոլոգիաներ, ինչը բացասաբար է անդրադառնում արտադրողականության և պանրի որակի և միջազգային մրցունակության վրա:

Որակի և անվտանգության կառավարում

Հայաստանյան արտադրամասերում՝ *հատկապես փոքր ու միջին*, դեռևս լայն կիրառություն չունեն արտադրության և հիգիենայի միջազգայնորեն ընդունված ճիշտ գործելակերպեր, ինչպիսիք են՝ HACCP համակարգ, GMP, ԵՄ-ի պահանջներ, Կեդեքս ալիմենտարիուսի ստանդարտներ: *Խոշոր չափի արտադրամասերում* արտադրության պայմաններն ու համակարգերն անհամեմատ ավելի բարձրակարգ են, սակայն դրանցում նույնպես լայն կիրառություն չունեն HACCP/GMP համակարգերը: *Փոքր ու միջին տնտեսություններում* արտադրանքի որակն ու մրցունակությունը տուժում են նաև ցածր տեխնոլոգիական հագեցվածության, արտադրատեսակների ոչ արդյունավետ ընտրության և արտադրանքի տեսակավորման և փաթեթավորման ուղղությամբ հարկ եղած ջանք չներդնելու պատճառով:

Արտադրանքի մրցունակության բարձրացման և որոշ շուկաներ մուտք ունենալու համար (մասնավորապես՝ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի շուկաներ, որտեղ գործում են որակի և անվտանգության բարձր պահանջներ, մասնավորապես, HACCP համակարգ ներդնելու պահանջ)[27] անհրաժեշտ է բարձրացնել արտադրողականությունը, ինչպես նաև բարելավել արտադրանքի որակն ու անվտանգության ցուցանիշները:

Դրանց հնարավոր է հասնել՝

ա) HACCP, GMP, Կեդեքս ալիմենտարիուսի ստանդարտներ ու պահանջներ[28] և միջազգայնորեն ընդունված այլ գործելակերպերի, սատնդարտների և համակարգի ներդրման և կիրառության միջոցով,

բ) նշված գործելակերպերի և ստանդարտների կիրառման վերաբերյալ մարդկային կարողությունների զարգացման միջոցով:

Արտադրական պարբերաշրջան

Ինչպես քննարկվել է վերևում, Հայաստանում պանրի գործարանները, *ինչպես փոքր ու միջին, այնպես էլ խոշոր*, դժվարություն ունեն տարվա ընթացքում պանրի արտադրության անընդհատություն ապահովելու հարցում: Դա պայմանավորված է կաթի մատակարարման խիստ սեզոնայնությամբ: Կթի (պանրի) արտադրության պարբերաշրջանի քարտեզը ներկայացված է 4-րդ պատկերում:

Պանրի արտադրության պարբերաշրջանը կախված է նաև պանրի տեսակների հետ կապված մի շարք այլ գործոններից, ինչպիսիք են օգտագործվող կաթի տեսակը, ֆերմենտացման, մակարդման ձևը, հասունացման համար պահանջվող ժամանակը:

27 "Comparative Analysis of Certain Requirements of Food Legislation in the European Union and the Customs Union of Russia, Belarus, and Kazakhstan." IFC. 2015. World Bank Group, Washington, DC. https://openknowledge.worldbank.org/handle/10986/22385

28 Կեդեքս ալիմենտարիուսի պաշտոնական կայք՝ http://www.fao.org/fao-who-codexalimentarius/standards/list-of-standards/en/:

Պանրի հասունացման համար պահանջվող ժամանակամիջոցը կարող է տատանվել մինչև վեց ամիս: Լոռի պանրի հասունացման համար պահանջվում է երկու ամիս, հոլանդական պանիրների համար ինչպիսիք են Գաուդան և Չեդարը՝ երկուսուկես ամիս, իսկ Էմենտալի պես պինդ պանրի համար՝ վեց ամիս:

Ի լրումն կաթի տեսակների (կովի, ոչխարի, այծի)՝ դրանցից պատրաստվող պանրատեսակները դասակարգվում են նաև ըստ մակարդվածքի առաջացման եղանակի (շրդանային և կաթնաթթվային պանիրներ) և այլն: Ամենամեծը շրդանային պանիրների խումբն է: Դրա մեջ են մտնում պինդ, կիսապինդ, փափուկ և աղաջրային պանրատեսակները:

Արտադրության ժամանակի վրա ազդում է նաև պանրի՝ հում կամ պաստերացված կաթից պատրաստվելու հանգամանքը: Ընդունված է, որ հում կաթից ստացված պանիրը, մինչ վաճառասեղանին հայտնվելը, պետք է ենթարկվի հասունացման երկու ամսից ոչ պակաս ժամանակամիջոցում: Չհասունացած պանիրն անհրաժեշտ է օգտագործել մի քանի օրվա ընթացքում, իսկ հասունացածը կարելի է պահել շաբաթներով:

3.4. ՀԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐ

Պանրի արտադրության ճյուղում առկա խնդիրներից մեկը կապված է ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կիրառման հետ: Կաթի արտադրությունը և իրացումը, որպես առաջնային գյուղատնտեսական արտադրություն, ազատված է ԱԱՀ-ից, իսկ պանրի արտադրությունը՝ ոչ: Արդյունքում կաթի (հումքի) համար վճարված ԱԱՀ-ն մնում է պանիր արտադրողների վրա, քանի որ նրանք չեն կարող հաշվանցել այն: Ըստ տնտեսվարողների՝ այս խնդիրը հատկապես սուր է պանրարտադրության ճյուղում, քանի որ պանրի ինքնարժեքի ավելի քան 70 տոկոսը կազմում է կաթը:

3.5. ՊԱՆՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Որպես խանգարող (ժամանակատար և ծախսատար) գործընթաց տնտեսվարողները նշում են այն, որ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար պահանջվում է անցնել կրկնվող անասնաբուժական հավաստագրման ընթացակարգ, ներառյալ՝ լաբորատոր փորձաքննություններ:

3.6. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում կաթի և կաթնամթերքի արտադրության զարգացման ճանապարհին կանգնած լուրջ խնդիրներից մեկը որակյալ մասնագետների սակավությունն է: Տնտեսությունները ճիշտ հիմնելու և արդյունավետ շահագործելու համար պահանջվում են համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ:

Ընդ որում՝ կարևոր է, որ այդ մասնագետները միաժամանակ տիրապետեն նաև արդի տեխնոլոգիաներին, համակարգչային ծրագրերին և կառավարման համակարգերին, որպեսզի կարողանան արդյունավետորեն աշխատել բարձր տեխնոլոգիական տնտեսություններում:

Հայաստանի Ագրարային համալսարանն ունի համապատասխան կրթական ծրագիր, սակայն համալսարանի շրջանավարտների գիտելիքների և հմտությունների մակարդակը տնտեսվարողներն համարում են անբավարար:

Զուգահեռաբար, գիտելիքի և հմտությունների լուրջ պակաս կա գործարար կառավարման հարցում, ներառյալ՝ արտադրության պլանավորումը, ֆինանսական կառավարումը, մատակարարման շղթայի կազմակերպումը, շուկայավարությունը և այլն: Հաճախ փող գտնելու տնտեսվարողների անկարողությունը կապված է լինում ֆինանսական կառավարման թույլ կարողությունների և սխալների հետ:

3.7. ՊԱՆՐԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ(ՆԵՐ)

Պանրարտադրության ոլորտում գործում է Լարի պանիր արտադրող իրավաբանական անձանց միությունը, ինչպես նաև Կաթնամթերք արտադրողների միությունը: Դրանք կոչված են ներկայացնելու և պաշտպանելու պանրի(կաթնամթերքի) արտադրության մեջ ներգրավված տնտեսվարողների շահերը, համակարգելու տնտեսությունների միջև համագործակցությունը և մատուցելու ծառայություններ, ինչպիսիք են.

- արտադրության համար պահանջվող ներդրանքի և սարքավորումների ձեռքբերում և մատակարարում միության անդամներին,
- գործնական խորհրդատվական ծառայություններ և փորձի փոխանակման խթանում (ներառյալ՝ դասընթացներ, սեմինարներ),
- պետական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցություն և ոլորտին վերաբերող խնդիրների հասցեագրում,
- աջակցություն արտադրանքի շուկայահանման և արտահանման հարցերում,
- վերլուծությունների և հետազոտությունների իրականացում:

Լարի միությունն ունի 70-80 անդամ, իսկ Կաթնամթերք արտադրողների միությունը՝ մոտ 15 անդամ (խոշոր կաթնամթերք արտադրողներ):

Պանրարտադրության ոլորտի հետագա զարգացումն իր հետ բերել է մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար երկու միություններն էլ կարիք ունեն զարգացնելու իրենց կարողություններն ու հետագա հզորությունները: Ներկա կարողություններով դրանք չեն կարող պատշաճորեն իրականացնել իրենց առջև դրված խնդիրները:

Անասնապահության և կաթի արտադրության ոլորտում համագործակցության մյուս հիմնական ձևը սպառողական կոոպերատիվներն են:

3.8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Մատչելի ֆինանսական միջոցների սակավությունը, ինչպես նաև ֆինանսական գործիքների փոքր տեսականին լրջորեն սահմանափակում են պանրի արտադրության ճյուղի զարգացումը: Տնտեսվարողները՝ հատկապես *փոքր ու միջին չափերի,* խնդիրներ ունեն ինչպես բավարար շրջանառու միջոցների, այնպես էլ ներդրումային միջոցների ապահովման առումով:

Մատչելի չեն նաև ֆինանսավորման այլ միջոցներ, ինչպիսին են լիզինգը, ծրագրերի ֆինանսավորումը, վարկային գծերի տրամադրումը և այլն:

4. ՀԵՏԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՒԼ

4.1. ՏԵՂԱԿԱՆ ՇՈՒԿԱ

Մինչև 2014 թվականը արտադրած պանրի գերակշիռ մասը սպառվել է տեղական շուկայում (տե՛ս 6-րդ աղյուսակ): Եթե հաշվի առնենք, որ 2014 թվականին արտադրվել է 18 հազար 300 տոննա պանիր, արտահանվել է 1542 տոննա և ներմուծվել 1188 տոննա, ապա կարելի է կոպիտ հաշվարկով ասել, որ պանրի ներքին սպառումը կազմում է տարեկան մոտ 18 հազար 650 տոննա: Հայաստանում մեկ շնչի հաշվով պանրի տարեկան միջին սպառումը մոտ 10 կիլոգրամ է:

Աղյուսակ 6. Պանրի տարեկան միջին սպառումը Հայաստանում, կգ[29]

	2012	2013	2014	2015
Պանրի սպառում, մեկ շնչի հաշվով, կգ	10.4	9.5	9.6	10.2

Փոքր ու միջին պանրարտադրողներն իրենց արտադրանքը, որպես կանոն, շուկայահանում են բաշխման երկու ուղիներով՝ ուղղակի վաճառք և միջնորդով վաճառք: Կաթի ու պանրի շուկայի կարևոր առանձնահատկություններից մեկը այսպես կոչված՝ ***տնայնագործ, ոչ ֆորմալ շուկայի*** գոյությունն է, որը զգալի ազդեցություն ունի շուկայի աշխատանքի վրա (տե՛ս 10-րդ պատկեր):



Պատկեր 10. Պանրի իրացումը տեղական շուկայում

29 ՀՀ ԱՎԾ, Սպառողական գների ինդեքսը, տարեկան հաշվետվություն, 2016 հունվար-դեկտեմբեր http://www.armstat.am/file/article/f_sec_4_2016_5.pdf

Կաթի մատակարարման և գնման գործնական հարաբերությունները տնայնագործ պանրի շուկայում հաճախ ոչ ֆորմալ են, այսինքն՝ դրված չեն պայմանագրային հիմունքների: Ըստ տնտեսվարողների՝ տնայնագործ պանրի արտադրությունն ու իրացումը լրջորեն խաթարում են ճյուղի արդյունավետ աշխատանքը: Ոչ ֆորմալ ճյուղի կշռի մասին ճշգրիտ տվյալներ չկան: Ըստ ճյուղում զբաղվողների կարծիքի՝ ոչ ֆորմալ ճյուղում կաթի վերամշակման ծավալը կարող է հասնել մինչև **կաթի** ամբողջ արտադրության 25 տոկոսին, ինչը էական ազդեցություն կարող է ունենալ շուկայի աշխատանքի վրա: Ինչպես նշվել է վերևում, Հայաստանում **պանրարտադրության** 72 տոկոսը բաժին է ընկնում ոչ ֆորմալ հատվածին:

Այդ արտադրանքի որակը, որպես կանոն ցածր է և, համապատասխանաբար, ցածր է նաև դրա գինը շուկայում: Գինը կարող է տարբերվել մինչև երկու անգամ: Օրինակ, 2015 թվականին սովորական յուղոտ պանրի մեկ կիլոգրամի միջին գինը 3.3 ԱՄՆ դոլար էր, իսկ զտած պանրի գինը՝ 1.9 ԱՄՆ դոլար (11-րդ պատկեր): Ոչ ֆորմալ արտադրողներն առավելություն ունեն նաև այն առումով, որ ըստ էության՝ չեն հարկվում: Նրանք առանձնապես ուշադրություն չեն դարձնում կաթի, ինչպես նաև պանրի որակին և անվտանգությանը: Դա բացասաբար է անդրադառնում նաև շուկայում արտադրանքի որակ-գին ճիշտ հարաբերակցության կայացմանը:



Պատկեր 11. Աղբյուր՝ ԱՎԾ՝ Գները և գների ինդեքսները ՀՀ-ում:

Արտադրողների հետ շփումներից նկատվում է, որ կաթ արտադրողները հակված են անցնելու նաև պանրարտադրության: Դրա պատճառն, ըստ էության, արտադրողների ձգտումն է՝ նվազեցնելու կաթի դիմաց վերամշակողի(գնորդի) կողմից չվճարման կամ այլ խնդիրների հնարավոր ռիսկերը:

Միաժամանակ, խոշոր գնորդների հետ աշխատելու համար կաթ արտադրողները պետք է ապահովեն մեծ ծավալի կանոնավոր մատակարարում. ընդ որում՝ մատակարարվող ապրանքը պետք է ունենա հաստատուն որակ և ստանդարտ ցուցանիշներ, ինչպես նաև պետք է համապատասխանի սննդամթերքի անվտանգության պահանջներին:

Սննդամթերքի անվտանգության պահանջները բավարարելը փոքր ու

միջին տնտեսվարողների համար կապված է դժվարությունների հետ: Մասնավորապես, համապատասխան ծավալով ու ստանդարտ ցուցանիշներով ապրանքի մատակարարման համար նրանք պետք է միավորեն և տեսակավորեն իրենց արտադրանքը: Այդ հարցում կարևոր դեր են կատարում կաթի հավաքման կետերը և այդ նպատակով ստեղծված և ստեղծվող կոոպերատիվները:

Պանրի շուկայի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու և որակյալ արտադրանքի խթանման համար շատ կարևոր է կաթի և պանրի շուկայում պատշաճ ստանդարտների մշակումը և կիրառումը, ինչպես նաև շուկայահանման, մասնավորապես՝ պիտակավորման հստակ կանոնների սահմանումը և գործնական կիրարկումը: Անհրաժեշտ է ապահովել պանրի (ինչպես նաև այլ կաթնամթերքի) բաղադրությունը սպառողին հստակ և ճիշտ ներկայացնելը՝ տարանջատելով բնական անարատ կաթով պատրաստված կաթնամթերքը չոր կաթով պատրաստված և (կամ) բուսական յուղեր պարունակող կաթնամթերքից:

4.2. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Հայաստանյան պանրի արտահանման հիմնական շուկաներ են Ռուսաստանի և ԱՄՆ-ի շուկաները:

Հաշվի առնելով պանրի հայաստանյան ներքին շուկայի սահմանափակությունը և հագեցածությունը՝ ճյուղի զարգացման ներկա փուլում շատ կարևոր է, որ պանրի արտադրության ընդլայնումից առաջ պատշաճ ուշադրություն դարձվի արտահանման շուկաների ապահովմանը, ինչպես նաև այդ շուկաներում առկա պահանջարկին համապատասխան արտադրատեսակների ապահովմանը:

Պանրի արտահանում

2015 թվականին պանրի արտահանման ծավալներն ըստ պանրատեսակների՝ ներկայացված է 7-րդ աղյուսակում և 12-րդ պատկերում:

Արտահանման կառուցվածքին անդրադարձում նկատենք, որ 2015 թվականին արտահանված պանրի 42 տոկոսը կովի կաթից պատրաստված սպիտակ, աղաջրում պահվող պանրատեսակներն են, իսկ 17.5 տոկոսը՝ Գաուդա պանիրը: Կտրուկ աճել է ինչպես ավանդական, սպիտակ, աղաջրի պանրատեսակների (Լոռի, Չանախ), այնպես էլ դեղին կիսապինդ պանրատեսակների (Գաուդա, Չեդար, Էդամ, Տիլզիտ) արտահանումը:

Հարկ է նկատել, որ պանրի արտահանման կտրուկ աճը չի զուգակցվել ո՛չ կաթի արտադրության և ո՛չ էլ պանրի արտադրության ծավալների նման աճով: Այն չի զուգակցվել նաև մեկ շնչի հաշվով պանրի սպառման փոփոխությամբ (անկմամբ): 2015 թվականին պանրի ներքին սպառումը չի նվազել, այլ աճել է. այն եղել է մեկ շնչի հաշվով 10.2 կիլոգրամ (2014 թվականի 9.6 կիլոգ-

ռամի փոխարեն):[30] Ինչպիսին էլ լինեն արտահանման աճի հանգամանքները[31], ակնհայտ է, որ արտաքին շուկաներում կա հայաստանյան արտադրության պանրատեսակների արտահանման ընդլայնման դեռևս չիրացված մեծ հնարավորություն:

Աղյուսակ 7. Հայաստանից պանրի արտահանման կառուցվածքը, տոննա

Ծածկագիր	Պանրի տեսակ	2014	2015
0406 90 990 9	Սպիտակ պանիր (կովի), աղաջրի	272.2	3854.5
0406907800	Գաուդա	3.1	1595.9
0406902500	Տիլզիտ (կիսապինդ, բաց դեղին պանիր)	0.0	717.0
0406902300	Էդամ	0.0	563.4
0406902100	Չեդար	0.0	341.0
0406900100	Այլ, հալած պանրի արտադրության համար	826.1	338.4
0406 40 900 0	Կապույտ պանիր (բորբոսով), այլ	0.0	343.5
0406 20 900 0	Այլ, քերած կամ փոշի պանիրներ	109.7	204.3
0406 10 800 0	Կաթնաշոռ, այլ	178.0	193.5
0406 10 800 0	Կաթնաշոռ, այլ	0.0	102.7
	ԸՆԴԱՄԵՆԸ	1542.4	9104.5

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, http://www.armstat.am/file/article/f_t-2015-10-nish-1.pdf



Պատկեր 12. Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, Պանրի արտահանման կառուցվածք:

30 Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, «Պարենային ապահովություն և աղքատություն, 2016», http://www.armstat.am/file/article/f_sec_3_2016_5.pdf (վերջին մուտք 2017թ. փետրվարի 08):

31 Արտահանման աճը կարող է պայմանավորված լինել այլ հանգամանքներով, ինչպիսին է, օրինակ՝ այլ երկրի ծագում ունեցող պանրատեսակների ներմուծումը Հայաստան և վերաարտահանումը:

Կենդանիների արտահանում

Կենդանի անասունների շուկան Հայաստանում բաց է և մրցունակ, սակայն շահառուները նշում են, որ կառավարության կողմից մաքրացեղ կենդանիների ներմուծման և բաշխման ընթացակարգերը բացասաբար են ազդում կենդանիների շուկայի մրցունակության վրա:

Հայաստանը Վրաստան է արտահանում կենդանի խոշոր եղջերավոր անասուններ, սակայն՝ փոքր քանակությամբ: Ըստ շահառուների՝ Վրաստանում կա բարձրարժեք տոհմային կենդանիների պահանջարկ, սակայն դրանց արտահանումը սահմանափակվում է վարչարարական խնդիրների պատճառով:

Արտահանման շուկաներ

Ռուսաստանի և ԱՄՆ-ի շուկաները մնում են պանրի արտահանման հիմնական ամենամեծ շուկաները հայաստանյան տնտեսվարողների համար: Երկու երկրներում էլ մեծ հայկական համայնքներ կան: Ռուսաստանյան շուկայում հայկական պանիրը ծանոթ ապրանք է ոչ միայն հայկական համայնքում: ԱՄՆ-ի շուկայում հայկական պանրի, հատկապես աղաջրային սպիտակ պանրատեսակների (Լոռի, Չանախ) հիմնական սպառողները հայկական համայնքի ներկայացուցիչներն են:

Արտահանման ընդլայնման հնարավորություն

Արտահանողները կարող են օգտվել ԵԱՏՄ-ի ընձեռած արտոնություններից: Ռուսաստանյան շուկայում գնալով մեծանում է գյուղարտադրանքի (մասնավորապես, Հայաստանյան արտադրանքի) նկատմամբ պահանջարկը: Դա հայաստանյան տնտեսվարողների, ներառյալ՝ *փոքր ու միջին* արտադրողների համար արտահանման լայն հնարավորություն է բացում: Ծավալի առումով, ռուսաստանյան շուկան, ըստ էության, հայաստանյան արտադրողների և արտահանողների համար անսպառ և ընդլայնման հնարավորություն ունեցող շուկա է, չնայած ռուսաստանյան պանրի շուկայում լուրջ մրցակիցներ են նաև հենց իրենք՝ ռուսաստանյան տեղական պանիր արտադրողները:

Մեկ՝ թեկուզ ռուսականի նման մեծ, շուկայի վրա կենտրոնանալը վտանգավոր է: Ռուսաստանյան շուկայում վերջին տարիներին տեղի ունեցող կարևոր զարգացումները հաստատում են նման կենտրոնացման վտանգավորությունը: Ռուսաստանյան շուկայում գնալով ուժգնանում է մրցակցությունը՝ չնայած Ռուսաստանի դեմ կիրառվող միջազգային տնտեսական պատժամիջոցներին:

Անցած տարի Իրանի դեմ միջազգային տնտեսական սահմանափակումների վերացումից հետո Իրանի դերը պանրի ռուսաստանյան շուկայում հնարավոր է՝ մեծանա, թեև 2015 թվականի դրությամբ Ռուսաստանը Իրանից պանիր դեռևս չի ներմուծել:[32]

32 Աղբյուր՝ UNCOMTRADE database, https://comtrade.un.org/data/

Արտահանման նկատմամբ Ռուսաստանի կողմից կիրառվող սահմանափակումների վերացումից հետո Թուրքիան նույնպես կարող է շուկայում լուրջ խաղացող դառնալ:

Ռուսաստանի պանրի (և այլ կաթնամթերքի) շուկայում ավանդաբար կարևոր դեր են կատարել Բելառուսի և Ուկրաինայի արտադրողները, որոնց արտադրանքները բարձրորակի համբավ ունեն: Վերջին տարիներին ունեցած քաղաքական խնդիրների պատճառով ռուսաստանյան շուկայում փոքրացել է ուկրաինական մրցակցությունը (տե՛ս 8-րդ աղյուսակը): Հարկ է նկատել, որ Ուկրաինան կորցնելով իր ավանդական շուկան Ռուսաստանում՝ սկսել է ցածր գներով կաթնամթերք, ներառյալ՝ չոր կաթ արտահանել այլ շուկաներ: Ուկրաինական էժան չոր կաթի ներմուծումը Հայաստան բացասաբար է անդրադառնում կաթի մթերման գների, ինչպես նաև չոր կաթի տեղական արտադրության վրա:

Աղյուսակ 8. Ռուսական պանրի ներմուծում, տոննա

	2010	2012	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	293,650	399,230	200,595
Բելառուս	-	79,305	161,448
Ուկրաինա	66,011	56,174	2,766
Հայաստան	386	868	9,000
Ղազախստան	-	398	1,314
Գերմանիա	83,012	72,916	38
Նիդեռլանդներ	24,648	35,973	20
Լեհաստան	14,118	21,897	56
Ֆրանսիա	7,098	8,756	1,088
Թուրքիա	-	-	287
Իրան			

Աղբյուր՝ UNCOMTRADE data, https://comtrade.un.org/data/

8-րդ աղյուսակից կարելի է նկատել, որ Ռուսաստանի դեմ Եվրամիության կողմից պատժամիջոցների կիրառումից և, դրան պատասխան, Ռուսաստանի կողմից Եվրամիությունից գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման սահմանափակման պարագայում կարճ ժամկետում կտրուկ աճել է Բելառուսից Ռուսաստան պանրի արտահանումը: Դրան հանգեցնող գործոններից մեկը կարող է լինել Բելառուսի տարածքով եվրոպական պանրի վերաարտահանումը Ռուսաստան՝ հաշվի առնելով, որ Բելառուսն ու Ռուսաստանը մաքսային միության անդամ են:

Կարևոր է նկատել, որ չնայած տրանսպորտային ծախսերին, հայաստանյան պանիր արտադրողները կարող են գնային մրցունակություն ապահովել

ռուսաստանյան շուկայում: Գնային մրցունակությունը նկատվում է 5-րդ և 10-րդ պատկերների և 9-րդ և 10-րդ աղյուսակների տվյալների համադրումից: Մասնավորապես, 2015 թվականին արտադրողի կողմից կաթի իրացման միջին գինը Հայաստանում եղել է 0.31 ԱՄՆ դոլար/կգ, այսինքն՝ մոտ 2 անգամ ցածր ռուսաստանի շուկայում առկա գնից: 2015 թվականին շրդանային պանիր արտադրողի միջին գինը եղել է 3.3 ԱՄՆ դոլա/կգ, որը բավականին ցածր է ռուսաստանյան արտադրողի 4.5 ԱՄՆ դոլար/կգ գնից: Նկատենք նաև, որ նույն տարում շրդանային պանրի միջին սպառողական գինը Ռուսաստանում 6.6 ԱՄՆ դոլար/կգ էր, ինչը շահութաբեր արտահանման լավ հնարավորություն է ստեղծում հայաստանյան արտահանողների համար:

Աղյուսակ 9. Պանրի սպառողական գները Ռուսաստանում, ԱՄՆ դոլար/կգ

	2012	2013	2014	2015
Շրդանային պանիրներ, պինդ և փափուկ	8.41	9.86	9.69	6.58
Հալած պանիր	5.63	6.05	5.91	4.38
Ազգային պանիրներ և բրընձա	8.10	8.63	8.16	6.08

Աղբյուր՝ ՌԴ դաշնային պետական վիճակագրական ծառայություն՝ http://www.gks.ru/bgd/regl/b16_17/Main.htm; http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/publications/catalog/doc_1138717314156

Աղյուսակ 10. Կաթ և պանիր արտադրողի գները Ռուսաստանում, ԱՄՆ դոլար/կգ

	2012	2013	2014	2015
Հում կաթ (գյուղտնտեսվարողի գին)	0.42	0.48	0.49	0.32
Պինդ պանիրներ	5.93	7.35	7.30	4.50
Հալած պանիր	2.39	2.86	2.96	2.22

Աղբյուր՝ ՌԴ դաշնային պետական վիճակագրական ծառայություն՝ http://www.gks.ru/bgd/regl/b16_17/Main.htm; http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/publications/catalog/doc_1138717314156

Ինքնարժեքի առումով, Հայաստանյան պանիր արտադրողները առավելություն ունեն ռուսաստանյան (բելառուսական, ուկրաինական) արտադրողների նկատմամբ: Մեկ կիլոգրամ պանրի գնահատված ինքնարժեքը հայաստանյան արտադրողի մոտ միջինը 3.05 ԱՄՆ դոլար է, համեմատած ռուսաստանյան արտադրողի 3.94 ԱՄՆ դոլարի հետ: Եթե լիարժեք համեմատության համար ներառենք նաև Հայաստանից Ռուսաստան (Մոսկվա) տեղափոխման տրանսպորտային ծախսը, որը 0.14 ԱՄՆ դոլար է, ապա կստանանք 3.05+ 0.14 ~ 3.2 ԱՄՆ դոլար մեկ կիլոգրամի համար:

Ինքնարժեքի մասով առավելությունը պայմանավորված է հիմնականում հայաստանյան արտադրողների մոտ արտադրական և շուկայավարական

համեմատաբար ցածր ծախսերով: Այս առումով հարկ է նկատել, որ պանրի ինքնարժեքը հետագայում կարող է աճել, երբ հայաստանյան տնտեսվարողները մրցունակության բարձրացման և արտահանման ընդլայնման համար ներդրումներ կատարեն արտադրական տեխնոլոգիաների, սնդամթերքի անվտանգության համակարգերի, նոր արտադրանքների մշակման և շուկայավարության ուղղությամբ:

Աղյուսակ 11. Շրդանային պանիրների ինքնարժեքի համեմատություն՝ Հայաստան, Ռուսաստան, 2015

	ՀԱՅԱՍՏԱՆ[33]		ՌՈՒՍԱՍՏԱՆ[34]	
	USD	%	USD	%
	Հումք, որից՝			
Կաթ	2.49	0.82	2.74	0.70
Այլ հումք	0.06	0.02	0.25	0.06
	Արտադրական և առևտրային՝			
Աշխատավարձ	0.17	0.06	0.17	0.04
Էլեկտրականություն, գազ, այլ	0.02	0.01	0.12	0.03
Այլ ներառյալ՝ որակի հսկ., շուկայավարություն)	0.21	0.07	0.46	0.12
	Փաթեթավորում պահեստ			
Փաթեթավորում	0.09	0.03	0.12	0.03
Պահեստ	0.00	0.00	0.07	0.02
Ընդամենը ինքնարժեք	3.05	1.00	3.94	1.00

Ռուսաստանյան և արտահանման այլ շուկաներում դիրքերը պահելու և շուկայի բաժինն ընդլայնելու նպատակով հայաստանյան տնտեսվարողները պատշաճ ուշադրություն պետք է դարձնեն իրենց արտադրության մրցունակության բարձրացմանը ոչ միայն ինքնարժեքի նվազեցման, այլ նաև արտադրանքի տեսականու և որակի առումով: Հարկ է հաշվի առնել նաև, որ ռուսաստանյան ազգային արժույթի արժեզրկման պայմաններում ավելի են մեծանում հայաստանյան արտահանողների ֆինանսական ռիսկերը՝ թուլացնելով նրանց մրցակցային դիրքը:

33 Հաշվարկը կազմված է տնտեսվարողների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա: Թվերը կարող են տարբեր տնտեսվարողների մոտ տարբեր լինել, ինչպես նաև փոփոխվել ժամանակի հետ:

34 Աղբյուր՝ ՌԴ դաշնային պետական վիճակագրական ծառայություն. «Գները Ռուսաստանում»: http://www.gks.ru/bgd/regl/b16_17/Main.htm; http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/publications/catalog/doc_1138717314156

Միջին և երկար ժամկետի համար հարկավոր է զուգահեռաբար ջանք ներդնել Ռուսաստանից բացի այլ շուկաներ որոնելու և մուտք գործելու համար: *ԱՄՆ-ի շուկայում, մասնավորապես, հայկական համայնքի սեգմենտը որպես հենք օգտագործելով, կարելի է գործուն փորձեր անել ընդլայնելու և բազմազանեցնելու սպառողների սեգմենտները: Հետաքրքիր շուկաներ կարող են լինել արաբական երկրները՝ հաշվի առնելով, որ Հայաստանում բացվել է «Հալալ» սերտիֆիկացման կենտրոն:*

Արտահանման ընդլայնման հնարավորությունից արդյունավետորեն օգտվելու համար *փոքր ու միջին տնտեսվարողների համար կարևոր է նաև* միավորել իրենց կարողությունները, որի համար նրանք պետք է ապահովեն.

- շուկայահանելի և փոխադրաունակ պանրատեսակների ընտրություն (օրինակ՝ ռուսաստանյան շուկայում գերադասում են այսպես կոչված՝ «եվրոպական պանիրները») և դրանց համասեռ արտադրություն բոլորի կողմից,
- բավարար ծավալի կանոնավոր մատակարարում,
- սննդամթերքի անվտանգության պահանջների համապատասխանություն,
- կայուն, ստանդարտ արտաքին տեսք և որակ՝ ապրանքների դասակարգման և տեսակավորման միջոցով, ներառյալ՝ ըստ տեսակի, չափսերի և այլն,
- ստանդարտ փաթեթավորում:

Արտադրանքի որակ, տեսակավորում և փաթեթավորում

Համեմատաբար խոշոր տնտեսվարողները, որոնք ունեն խոշոր գնորդների հետ աշխատելու փորձ, կիրառում են ապրանքի տեսակավորման և փաթեթավորման առաջավոր տեխնոլոգիաներ: Մինչդեռ *փոքր ու միջին տնտեսվարողների* շրջանում արտադրանքի տեսակավորման, կայուն որակի ու տեսքի ապահովման, փաթեթավորման և շուկայահանման կատարելագործված տեխնոլոգիաները տարածված չեն:

Ինչպես նշվել է վերևում, Հայաստանում փոքր ու միջին տնտեսվարողների կողմից արտադրանքի միավորման և համատեղ շուկայահանման գործելակերպ առայժմ չկա: Այդ հարցում կարևոր դեր կարող են կատարել արտադրողների միությունները կամ կոոպերատիվները:

Փոքր ու միջին արտադրողների կարողությունների միավորման համար շատ կարևոր է նաև ապահովել սառնարանային պահեստների առկայություն՝ իրենց արտադրանքը հավաքելու, տեսակավորելու և փաթեթավորելու համար: Ընդ որում՝ արտահանման խթանման առումով խիստ կարևոր է միջազգայնորեն մրցունակ ստանդարտների և տեխնիկական պահանջների սահմանումը և կիրարկումը արտադրողների շրջանում:

Արտահանման թույլտվություններ և ընթացակարգեր

Պանրի արտահանման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբաքանակի համար ձեռքբերել անասնաբուժական հավաստագիր, որը տրամադրում է ՀՀ սննդամթերքի անվտանգության ծառայությունը:

Որպես խանգարող (ժամանակատար և ծախսատար) գործընթաց նշվում է նաև այն, որ արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար պահանջվում է անցնել համապատասխանության հավաստագրման կրկնվող ընթացակարգ, ներառյալ՝ լաբորատոր փորձաքննություններ:

Փոխադրման ուղիներ և փոխադրամիջոցներ

Հայաստանից պանիրն արտահանվում է գլխավորապես սառնարանային բեռնատար ավտոմեքենաներով:

Բեռնատար ավտոմեքենաներով արտահանումը կատարվում է Վրաստանի տարածքով տարանցման միջոցով Ռուսաստանի տարածք մուտքը՝ Լարսի սահմանային կետով: Բեռնատարով փոխադրման միջին ծախսը կազմում է 2,500-3,000 ԱՄՆ դոլար 20 տոննայանոց բեռնատարի համար, գումարած 200 ԱՄՆ դոլար ոչ պաշտոնական վճարներ:

Տնտեսվարողները նշում են, որ Հայաստանում բեռնատարների պակաս լինում է ամառվա շրջանում, երբ հասունանում է բաց հողի բերքը, և արտահանման ծավալներն աճում են: Այդ դեպքում հայաստանյան արտահանողներն օգտվում են այլ երկրների բեռնատար փոխադրողների ծառայություններից, մասնավորապես, ռուսաստանյան և վրաստանյան բեռնատարներից:

Վրաստանի նավահանգիստներից նավերով փոխադրումը դեռևս լայն տարածում չունի, սակայն կարող է հետագայում կարևոր դառնալ:

Գիտելիքներ և կարողություններ

Ճյուղի հետագա զարգացման համար ներկայում անհրաժեշտ է զարգացնել արտաքին շուկաների, այդ շուկաներ արտահանման հնարավորությունների, ինչպես նաև բաշխման ցանցերի զարգացման վերաբերյալ գիտելիքներն ու կարողությունները:

4.3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շուկայում արտահանման ապահովագրություն կարելի՛է ձեռք բերել, սակայն տնտեսվարողները դժվարություններ ունեն բեռի կորստի կամ փչացման դեպքերում փոխհատուցում ստանալու հարցում: Ապահովագրական ընկերություններից դժվար և հաճախ անհնար է փոխհատուցում ստանալը:

5. ՕԺԱՆԴԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐ

5.1. ՊԱՀԵՍՏՆԵՐ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Պանրի ոլորտի զարգացման համար, որպես կարևոր օղակ, պետք է զարգանան ***կաթի արտադրության և հավաքման հանգույցները***, որոնք մասշտաբով գոնե մեկ աստիճան ավելի խոշոր պետք է լինեն կաթի հավաքման ներկայում գործող կետերից: Նման ենթակառուցվածքի զարգացումը կպահանջի կաթ և պանիր արտադրողների միջև արդյունավետ համագործակցություն: Միաժամանակ, կարևորություն կունենա նաև պետություն-մասնավոր համագործակցությունը, օրինակ՝ պետական-մասնավոր համատեղ ծրագրերի միջոցով:

Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ կլինեն համապատասխան արտադրանքի կուտակման և պահպանման համար հարկավոր սառնարանային պահեստներ, ինչը կպահանջի (ա) ներդրումային միջոցների ներգրավում, (բ) մասնագետների պատրաստում և զարգացում: Կարևոր է նկատել, որ արտադրանքի կուտակման և տեսակավորման փոքր և միջին մասշտաբի տնտեսությունների հիմնադրումը կնպաստի տնտեսվարողների համագործակցությանը (կոոպերատիվների կամ ասոցիացիայի ձևով), որն ուղղված է արտադրանքի ստանդարտ, բարձր որակի և անվտանգության ապահովմանը՝ ելնելով շուկայի, հատկապես արտահանման շուկաների կողմից թելադրվող պահանջներից:

5.2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ըստ տնտեսվարողների, պանրի ոլորտում ներդրումներին խանգարող գործոններից մեկը ենթակառուցվածքների անցկացման հետ կապված վարչարարական բարդություններն են: Խոսքը վերաբերում է մասնավորապես հոսանքի, ջրի և գազի գծերի անցկացման վարչարարական դժվարությանը, ժամանակատարությանն ու թանկությանը: Պանրարտադրության ճյուղում այս հարցը հատկապես սուր է, քանի որ *փոքր ու միջին պանրարտադրողների համար* տնտեսապես կարևոր է արտադրամասը կառուցել կաթի մատակարարման կետին մոտ: Մինչդեռ դրանց մերձակա տարածքներում հաճախ գազի ու հոսանքի ենթակառուցվածքներ չեն լինում:

5.3. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մարդկային կարողությունների զարգացման տեսակետից շատ կարևոր է մեծացնել և ավելի արդյունավետ դարձնել պետության դերը: Ներկայում գյուղատնտեսության ոլորտում խորհրդատվության վրա կատարվող պետական ծախսը շատ փոքր է՝ որևէ շոշափելի արդյունք ապահովելու համար (397,2 միլիոն ՀՀ դրամ կամ մոտ 831 հազար ԱՄՆ դոլար, 2016 թվականին):

Հետազոտության և մշակումների, ինչպես նաև գիտասփյուռի ծառայությունները թույլ են և չեն բավարարում գյուղատնտեսության կարիքները: Համալսարանները և մասնավոր տնտեսվարողները չունեն արդյունավետ հետազոտական և մշակման աշխատանքների իրականացման կարողություններ: Պետական և մասնավոր հատվածի կողմից հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերը շատ փոքր են: Պետական խորհրդատվության և գիտասփյուռի ծառայությունները տրամադրվում են հիմնականում Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) միջոցով, որոնց կարողությունները կարիք ունեն զգալի հզորացման, որպեսզի կարողանան արդյունավետորեն իրականացնել իրենց առաքելությունը: ԳԱՄԿ-երի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2017 թվականին Կառավարությունը որոշում է կայացրել փոփոխություններ կատարել ԳԱՄԿ-երի կառուցվածքային և գործառնական կարգում: Մասնավորապես, ԳԱՄԿ-երն ընդգրկվեցին նորաստեղծ՝ Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամի կառուցվածքի մեջ: Գործառնական և աշխատանքային փոփոխությունները դեռ ընթացքի մեջ են:

5.4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ, տնտեսվարողների աճը և զարգացումը սահմանափակված են երկար և էժան ֆինանսական միջոցների սակավությամբ կամ դժվար մատչելիությամբ: Տնտեսվարողների հետ շփումները ցույց են տալիս, որ արտահանման և ներդրումների ֆինանսավորման կատարելագործված գործիքների կիրառությունը (օրինակ՝ շրջանառու միջոցների ֆինանսավորում, ծրագրերի ֆինանսավորում, առևտրի ֆինանսավորման գործիքներ, ինչպիսիք են՝ վարկային գծերը, ապահովագրությունը, արդյունավետ մոնիտորինգի կիրառումը և այլն) դեռևս կարիք ունի ընդլայնման, որպեսզի խթանվի արտադրությունն ու արտահանումը, ինչպես նաև շրջակա միջավայրը խնայող տեխնոլոգիաների և սննդամթերքի անվտանգության համակարգերի ներդրումը:

6. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2000-2020թթ. Գյուղատնտեսության զարգացման ռազմավարության (ԳԶՌ) շրջանակներում Հայաստանի կառավարությունը, համագործակցելով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, իրականացրել է մի շարք ծրագրեր, ուղղված՝

- տեղական ցեղատեսակների արտադրողականության բարձրացմանը՝ բարձրակարգ ցեղի կենդանիներ ներմուծելու և դրանց տեղական ցեղատեսակների հետ տրամախաչելու միջոցով,
- ագարակների ու կենդանիների գրանցման համակարգ ստեղծելուն,
- արոտավայրերի կառավարումը բարելավելուն,
- որոշ ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպիսին փոքր սպանդանոցներն են:

ՀՀ-ում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում[35] 2007 թվականից կառավարությունը ներմուծել է բարձրարժեք տոհմային կենդանիներ՝ տեղական գենետիկական ռեսուրսները բարելավելու և կաթնատվությունն ավելացնելու նպատակով:. Մինչ այսօր ներմուծվել են 2800-ից ավել բարձրարժեք տոհմային կենդանիներ և վճարման ճկուն պայմաններով տրամադրել անասնաբուծությամբ զբաղվող 60 տնտեսությունների:[36]

Իրականացվել և իրականացվում են անասնապահության և կաթի արտադրության և վերամշակման ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր, միջազգային ֆինանսական և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ ու դրանց կողմից: Մասնավորապես՝

- Համաշխարհային բանկի՝ Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն ծրագիր (CARMAC), 2010-2016թ.թ. (մանրամասների համար տե՛ս 2-րդ ներդիրը).
- Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակ (SDC). Անասնաբուծության զարգացում Հայաստանի հարավում, 2014-2020 թ.թ.: Ծրագրի բյուջեն՝ 10 միլիոն շվեյցարական ֆրանկ.
- Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակ (SDC). Աշխատեցնելով շուկաները հայաստանյան անասնաբուծությամբ զբաղվող տնտեսվարողների համար, 2011-2015թ.թ.: Ծրագրի բյուջեն՝ 5,4 միլիոն շվեյցարական ֆրանկ.
- Զարգացման հայկական գործակալություն (ADA). Կենդանիների առողջապահության կառավարում Հայաստանում և Վրաստանում, 2015-2018թթ.: Ծրագրի բյուջեն՝ 1 միլիոն եվրո:

35 ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 22-ի թիվ 336-Ա որոշում:

36 Տնտեսվարողները կարող են վճարումը կատարել 4 տարվա ընթացքում՝ 10%-ն առաջին տարում, 20%-ը՝ երկրորդ, 30%-ը՝ երրորդ, և վերջին 40%-ը՝ չորրորդ տարում:

Մի շարք դոնոր կազմակերպություններ ընդգրկված են եղել Հայաստանի տարբեր մարզերում կաթի հավաքման կետերի հիմնադրման գործում: Նման կազմակերպություններից են USAID-ն, SDA-ը, Heifer International-ը, UNDP-ն, Save the Children-ը, COAF-ը, World Vision-ը և այլ կազմակերպություններ: Կաթի հավաքման կետերի թիվը զգալիորեն մեծացավ՝ հօգուտ մեծ թվով ագարակների և կոոպերատիվների և ի նպաստ կաթի որակի բարձրացման ու կաթի գնի բարձրացման:

2000 թվականից Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը, (CARD) համագործակցելով Հայաստանի կառավարության, դոնոր կազմակերպությունների և Համաշխարհային բանկի հետ, նախաձեռնել և իրականացրել է մի շարք ծրագրեր՝ աջակցելու կաթ արտադրող ագարակներին հետևյալ եղանակներով՝ կաթի հավաքման կետերի հիմնադրում, բարձր գենային որակների ապահովման նպատակով արհեստական սերմնավորման բարելավում, ինչպես նաև Հայաստանի ողջ տարածքում ագարակների կառավարման ոլորտում տնտեսվարողներին ցուցաբերվող աջակցություն: Կենդանիների առողջապահությունը, արհեստական սերմնավորման և այլ գյուղատնտեսական ծառայությունների որակը բարելավելու նպատակով CARD-ը Հայաստանի շրջաններում հիմնադրել է գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնների ցանց: Դրանք առևտրային առումով կենսունակ կառույցներ են, որոնք մատուցում են ծառայություններ և տեխնիկական աջակցություն տրամադրում տնտեսվարողներին, ինչպես նաև մատակարարում սերմնահեղուկ, դեղորայք, գործիքներ և այլ սարքավորումներ՝ անասնաբուծության և կաթնարտադրության ոլորտում կիրառելու նպատակով: Առ այսօր Հայաստանի շրջաններում հիմնադրվել և արդյունավետ գործում են 13 նման կենտրոն, և մինչև 2017 թվականը նախատեսվում է Հայաստանում ունենալ 22 կենտրոն:

Այս ծրագրերն ու գործողությունները զգալիորեն նպաստել են անասնաբուծության ու կաթի արտադրության ոլորտի զարգացմանը, մասնավորապես, ինչպես նշվել է 2-րդ ներդիրում, CARMAC ծրագրի շրջանակում.

- բարեկարգվել են ավելի քան 176,000 հա նախկինում չօգտագործվող արոտավայրեր (ներառյալ ջրախմոցներով համալրումը), ինչով նվազեցվել է ճնշումը չափազանց շահագործվող այլ արոտավայրերի վրա,
- համայնքներում կովերի կաթնատվությունը բարձրացել է 137 տոկոսով,
- նկատվել է կենդանիների քաշի ավելացում մոտ 127 տոկոսով,
- արոտավայրերի օգտագործման դիմաց հավաքվող վճարումները բարձրացել են 200 տոկոսով,
- Անասնապահական արտադրանքի իրացման ծավալն աճել է 268 տոկոսով:

Միաժամանակ, ներդրումների խթանման նպատակով կառավարության

թիվ 1118-Ն և 1119-Ն որոշումներով,[37] սահմանվել են հատուկ ընթացակարգեր՝ մաքսատուրքի և հարկային (մասնավորապես ԱԱՀ-ի) արտոնությունների (օրինակ՝ ազատում մաքսատուրքից, ԱԱՀ-ի վճարման հետաձգում) տրամադրման համար: Որպեսզի տնտեսվարողները կարողանան արդյունավետորեն օգտվել նշված որոշումների ընձեռած հնարավորություններից, կարիք կա բացատրական աշխատանքներ տանելու՝ ուղղված նրանց իրազեկվածության բարձրացմանը:

Ոլորտի հետագա զարգացման համար շատ կարևորություն է ստանում պետության կողմից ներդրումների խթանման համար նպատակային և գործնական քայլերի ձեռնարկումը, մասնավորապես ՝ (ա) հատուկ մշակված պայմաններով ներդրումային վարկերի և (կամ) դրամաշնորհների տրամադրումը՝ բարձրակարգ (բարձր արտադրողական, էներգախնայող և բնապահպան) տեխնոլոգիաների ներդրման համար՝ ուղղված արտադրական կարողությունների ընդլայնմանը, (բ) շուկայի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածքներում ներդրումների խրախուսումը (կաթի արտադրության և հավաքման հանգույցներ, պանրի պահեստներ, անհրաժեշտ ենթակառույցներ (գազ, էլեկտրականություն, ճանապարհ) դեպի պանրի արտադրամասեր և արոտավայրեր):

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշմամբ[38] կաթնամթերքի արտադրությունը ներառվել է արտադրական (արտահանման) կարողությունների զարգացման առաջնային ոլորտների շարքում, սակայն այդ ճյուղի զարգացման ռազմավարություն կամ զարգացման գործողությունների ծրագիր կամ ծրագրեր դեռևս չեն մշակվել և ընդունվել:

---

37 ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանները հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին»:
ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1119-Ն, «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների նկատմամբ կիրառված «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի ժամկետների երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման, ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգերը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1934-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի թիվ 600-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

38 ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշում «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին»:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵԱՏՄ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի՝ ԵԱՏՄ-Ի շրջանակում երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքի դրույքաչափերի ժամանակացույց[39]

Ապրանքի անվանումը	Ծածկագիր, ԵԱՏՄ	Մինչև ԵԱՏՄ 2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	ԵԱՏՄ
Մաքրացեղ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ	0102 21	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%[40]
Երինջ	0102 21 10 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%
Կով	0102 21 30 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%
այլ	0102 21 90 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%
Այլ խոշոր եղջերավոր կենդանիներ	0102 29	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%[41]
	0102 29 05 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 10 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 21 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 29 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 41 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 49 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 51 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 59 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 61 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 69 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 91 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
	0102 29 99 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Գոմեշներ											
Մաքրացեղ տոհմային գոմեշներ	0102 31 00 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%

39 Համաձայնագիր Հայաստանի՝ ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրին միանալու մասին, 29 մայիսի, 2014 թ.: ԵԱՏՄ պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/Lists/EECDocs/635486381049072687.pdf. վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին:

40 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.01.pdf վերջին անգամ մուտք արվել է 2017 թ. փետրվարի 22-ին)

41 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.01.pdf վերջին անգամ մուտք արվել է 2017 թ. փետրվարի 22-ին)

Ապրանքի անվանումը	Ծածկագիր, ԵԱՏՄ	Մինչև ԵԱՏՄ 2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	ԵԱՏՄ
Այլ ընտանի	0102 39 10 00	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Այլ	0102 39 90 00	5%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Սերմեր	1209	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%[42]
Կենդանիների կերեր	2309	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%[43]
Պարարտանյութ, որից	31	0%	0%	0%	0%	2%	4%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	**6.5%**[44]
	3102 109000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3102 50	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3102 600000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3102 800000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3102 900000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3104 201000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3104 900001	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%
	3104 900009	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3105 901000	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3105 909100	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
	3105 909900	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	6.5%
Թունաքիմիկատ, որից	3808	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	**ԵԱՏՄ**	**ԵԱՏՄ**	**ԵԱՏՄ**	**ԵԱՏՄ**	**ԵԱՏՄ**	**3% կամ 5%**[45]
Միջատասպան, այլ	3808 91900 0	0%	0%	0%	0%	0%	2%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Մկասպան պղնձով	3808 92100 0	0%	0%	0%	0%	0%	2%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	3%
Մկասպան, այլ	3808 92900 0	0%	0%	0%	0%	0%	2%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%

42 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք. http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ett12%2001.09.2014.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին):

43 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ett12%2001.09.2014.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին): Այս խմբում բացառություն է 230990 ծածկագրի տակ գտնվող ապրանքները (այլ կերեր), որոնց նկատմամբ մաքսատուրքի ԵԱՏՄ նշված դրույքաչափը (5%) կգործի 2020 թվականից:

44 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ett31%2001.09.2015.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

45 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ett38%2001.09.2015.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

Ապրանքի անվանումը	Ծածկագիր, ԵԱՏՄ	Մինչև ԵԱՏՄ 2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	ԵԱՏՄ
Բույսերի աճի կարգավորիչներ	3808 93900 0	0%	0%	0%	0%	0%	2%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Վարակազերծիչ, այլ	3808 94900 0	0%	0%	0%	0%	0%	2%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%
Կաթի հավաքման և պաղեցման տակառ	8419	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%[46]
Կաթի սեպարատոր	8421 11 000 0	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%[47]
Կթելու սարքավորումներ	8434 10 000 0	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%[48]
Կաթի մշակման սարքեր	8434 20 000 0	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	0%[49]
Կերի պատրաստման սարքեր	8436 10 000 0	0%	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	ԵԱՏՄ	5%[50]

46 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

47 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

48 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

49 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

50 Աղբյուր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.84.pdf (վերջին անգամ մուտք է արվել 2017 թ. փետրվարի 22-ին)

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Հայաստանից գյուղատնտեսական մթերքների արտահանումը (SITC Rev4 դասակարգում), ներառյալ վերամշակված մթերքները, հազար ԱՄՆ դոլարով

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Ընդհանուր արտահանման ծավալը, ներառյալ ոչ ագրո արտադրանքը	973900	985100	1115200	1057200	710200	1041100	1334300	1380200	1478700	1519300
Ագրոարտահանումը՝ որպես ընդհանուրի %	12%	12%	15%	19%	18%	15%	17%	23%	26%	27%
Կենդանիներ	39	362	680	1062	4323	922	494	4601	4951	3300
Միս և մսային ենթամթերքներ	978	2146	3136	2019	1202	1101	1196	2882	2760	4659
Կաթնամթերք և հավկիթ	4135	2609	1930	2654	1864	2286	2463	3249	7585	9081
Ձուկ, խեցեմորթ	3170	4646	4679	5359	3545	8007	16140	22546	33707	31389
Հացահատիկներ և հացահատիկային մթերք	145	180	400	489	395	358	478	992	1331	1936
Միգեր և բանջարեղեն	8042	12742	12036	14976	15518	17500	28307	42422	52691	45398
Շաքարավազ և հրուշակեղեն	89	63	36	69	123	1644	3026	879	1291	1084
Սուրճ, թեյ, կակաո	7794	10072	14941	15850	10305	6866	6744	7432	6759	7412
Անասնակեր	36	20	34	453	89	72	109	38	52	48
Այլ սննդամթերք	187	368	848	360	495	522	893	1371	1272	1618
Ըմպելիքներ	84274	79009	126110	145004	79933	108711	146703	184955	207563	187884
Ծխախոտ և ծխախոտի արտադրանք	3460	3428	4181	7777	8581	8307	16320	41861	69084	115900

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ-ի Արտաքին առևտրի պարեկան հաշվետվություններ՝ ըստ ԱՏԳԱԱ երկնիշ դասակարգման

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Վերլուծական նյութեր

1. “Technical and Investment Guidelines for Milk Collection Centers”, Food and Agriculture Organization-FAO, 2016
2. “Value chain analysis of meat and milk in Armenia”, Flavio Forabosco, World Bank CARMAC Project, Armenia, 2014
3. “Cheese Markets: cheese market research in Russian, Georgian, European and Arab countries”, Armenian Development Agency (ADA), 2012
4. «Հայկական պանրի գույները», Ագորբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD)
5. “Feed planning for Cattle and Sheep”, Tried & Tested
6. “Contract Farming, Partnerships for Growth”, FAO, 2001
7. “Comparative Analysis of Certain Requirements of Food Legislation in the European Union and the Customs Union of Russia, Belarus, and Kazakhstan.” IFC. 2015. World Bank Group, Washington, DC. https://openknowledge.worldbank.org/handle/10986/22385

Պաշտոնական կայք էջեր

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ www.armstat.am
2. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ www.minagro.am
3. ՀՀ բնապահպանության նախարարություն՝ www.mnp.am
4. ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն՝ www.sfss.am
5. Ռոսսելխոզնադզորի (Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության ծառայություն)՝ http://www.rosselkhoznadzor.ru/fsvps/importExport
6. ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)՝ www.fao.org
7. IFCN - http://www.ifcndairy.org/en/the_ifcn/welcome/index.php

ՀՀ իրավական ակտեր

Անասնապահություն և տոհմային գործ

1. ՀՀ օրենք տոհմային անասնաբուծության մասին
2. ՀՀ օրենք կերի մասին
3. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 864-Ն որոշում «Տոհմային անասնաբուծության դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին»
4. ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 1286-Ն որոշում «Պետական տոհմային գրքերի, ինչպես նաև տոհմային կենդանիների նախիրների, հոտերի ու երամակների կադաստրի վարման կարգը հաստատելու մասին»

Անասնաբուժություն

1. ՀՀ օրենք անասնաբուժության մասին
2. ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1335-Ն «ՀՀ-ում՝ անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների եվ ախտորոշիչ միջոցների պետական գրանցման կարգը եվ դրանց պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին»

Անվտանգության պահանջներ

1. ՀՀ օրենք սննդամթերքի անվտանգության մասին
2. ՀՀ օրենք սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին
3. ՀՀ կառավարություն 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1925-Ն որոշում «Կաթին, կաթնամթերքին եվ դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»
4. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2305-Ն որոշում «Կաթի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը հաստատելու մասին»
5. ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 1142-Ն որոշում «Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի թիվ 598-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
6. ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 790 հրաման «Թունաքիմիկատների (պեստիցիդների) պահպանման, փոխադրման, կիրառման և վաճառքի սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»

Ներմուծման և արտահանման պահանջներ և ընթացակարգեր

1. ՀՀ օրենք մաքսային կարգավորման մասին՝ ընդունված 2014 թվականի դեկտեմբերի 17-ին
2. ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգիրք
3. ՀՀ օրենք «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին, ընդունվել է 2015 թվականի փետրվարի 26-ին:

   Փոփոխությունից հետո, օրենքը կոչվում է «ՀՀ օրենք կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից», ընդունված 2015 թվականի փետրվարի 26-ին:
4. ՀՀ օրենք սննդամթերքի անվտանգության մասին
5. ՀՀ օրենք սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին

6. ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ 1093-Ն որոշում «Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը հաստատելու մասին»
7. ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1192-Ն որոշում «Պեստիցիդների ու ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգը և պեստիցիդների ու ագրոքիմիկատների ներմուծման և արտահանման մասին եզրակացության ձևերը սահմանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
8. ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1524-Ն որոշում «ՀՀ տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»
9. ՀՀ գյուղատնտեսության նախարարի՝ 2015 թվականի հունվարի 15-ի թիվ 6 հրաման «ՀՀ տարածք երրորդ երկրներից առևտրի ոլորտի ապրանքների միասնական ցանկում ներառված բույսերի պաշտպանության միջոցների (ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 3808, բացառությամբ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 380894 կպչուն ժապավենների) ներմուծման մեկանգամյա լիցենզիաների տրամադրման ընթացակարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին»
10. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշում «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին»
11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշում «Մաքսային միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին»
12. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշում «Մաքսային միությունում սանիտարական հսկողության միջոցների մասին»
13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 620 որոշում «Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թվականի թիվ 319 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության շրջանակում միասնական փաստաթղթերով, համապատասխանության պարտադիր հավաստման արտադրանքների միասնական ցանկի նոր խմբագրության մասին»
14. ՀՀ կառավարության՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանները հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին»
15. ՀՀ կառավարության՝ 2011 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1119-Ն, «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների նկատմամբ կիրառված «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի ժամկետների երկարաձգման նպատակով կազ-

մակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման, ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգերը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի n 1934-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի n 600-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Հողօգտագործում

1. ՀՀ հողային օրենսգիրք
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
3. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենք
5. ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 1746-Ն «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշմամբ սահմանված կարգով և գոտիականության հիման վրա
6. ՀՀ կառավարության 2002 թ. հուլիսի 25-ի թիվ 1101 որոշում՝ «ՀՀ համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս (մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված հողերի և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին»
7. ՀՀ կառավարության 1997 թ. հուլիսի 3-ի թիվ 237 որոշում՝ «ՀՀ գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին»
8. ՀՀ կառավարության 2002 թ. մայիսի 11-ի թիվ 498 որոշում՝ « Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի և շինությունների կառուցումը սահմանափակելու մասին»

ՀՀ կառավարության ծրագրեր

1. ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 22-ի թիվ 336-Ա որոշում «ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին»
2. ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 1289-Ա որոշում «ՀՀ-ում տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհմային երինջները տարաժամկետ վճարման պայմանով վաճառելու մասին»
3. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշում «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին»

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՎ՝

BMF
FEDERAL MINISTRY
OF FINANCE

exim
EXPORT BANK INSURANCE

WORLD BANK GROUP

IFC International Finance Corporation

Սեպտեմբեր 2017թ.